


ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

ԽՄԲԱԳՐԱԿԱՆ	
Վ.Ա.Յ. — Հոգեւորականը եւ իր դերը այսօր	237
ՀԱՅՐԱՊԵՏԱԿԱՆ ԿՈՆԴԱԿՆԵՐ	241
ՄԱՐԴՈՒԺԻ ՏԱՐԻ	
ԱՌԱՔԵԼ ԱԲՂ. ԳԱՏԵՅՃԵԱՆ — 2024-ը՝ «Մարդուժի պատրաստութեան տարի»	244
ՎԿԱՅՈՒԹԻՒՆ	
Ն.Ս.Օ.Տ.Տ. ԱՐԱՄ Ա. ԿԱԹՈՂԻԿՈՍ — Վկայութիւն մը՝ հանգուցեալ Անի Պեղիքեանի մասին	247
ՔԱՐՈՉԱԽՕՍԱԿԱՆ	
ՆԱՐԵԿ ԱՐՔ. ԱԼԵՄԵՉԵԱՆ — Քարոզիչներ Աստուծոյ թագաւորութեան	249
ՄԵԿՆԱԲԱՆԱԿԱՆ	
ՎԱՂԻՆԱԿ Ծ. ՎՐԴ. ՄԵԼՈՅԵԱՆ — Մեկնութիւն Մատթեոս Աւետարանի (4.10-17).....	252
ՊԱՏՄԱ-ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐԱԿԱՆ	
ՍՈՒՐԵՆ ԱՐՔ. ԳԱԹԱՐՈՅԵԱՆ — 90-ամեայ հունձքը Մեծի Տանն Կիլիկիոյ Կաթողիկոսութեան Դպրեվանքին	262
ՅՕԴՈՒԱԾՆԵՐ	
ԱՆԴՐԱՆԻԿ ՎՐԴ. ԶԻՐԻԻՄԵԱՆ — Հայ եկեղեցական երգիւ ծագումն ու զարգացումը.....	266
ԳԵՈՐԳ ՎՐԴ. ԳԱՐԱԿԵՕԶԵԱՆ — 29 տարիներու անմնացորդ ծառայութիւն	272
ՓԻԼԻՍՈՓՈՅԱԿԱՆ ԱԿՆԱՐԿ	
ԴՈԿՏ. ՍԱՐԳԻՍ Ա. ԶԵՅԵԱՆ — Աստուածիմաստութիւն.....	275
ՆՈՐ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹԻՒՆ	284
ՊԱՇՏՕՆԱԿԱՆՔ	285
ՏՕՆԱԿԱՆ	298

ՄԻՋ-ԵԿԵՂԵՑԱԿԱՆ	304
ՁԵՌՆԱԴՐՈՒԹԻՒՆՆԵՐ	309
ԴՊՐԵՎԱՆՔ	316
ՔՐԻՍՏՈՆԵԱԿԱՆ ԴԱՍՏԻԱՐԱԿՈՒԹԻՒՆ	328
ԼՈՒՐԵՐ ԿԱԹՈՂԻԿՈՍԱՐԱՆԵՆ	334
ՊԱՏԱՐԱԳ ԵՒ ՔԱՐՈՉ Ս. ԱԹՈՌՈՅՍ ՄԻԱԲԱՆՆԵՐՈՒ ԿՈՂՄԷ	339



ՊԱՇՏՏՈՒՆԿԱԿԱՆ ԲՄՍԱԳԻՐ
ԿԱԹՈՂԻԿՈՍՈՒԹԵԱՆ ՀԱՅՈՑ
ՄԵԾԻ ՏԱՆԻ ԿԻՔԿԻՈՅ

ՂԳ. ՏԱՐԻ 2024

ՄԱՅԻՍ - ՅՈՒՆԻՍ

ԹԻՒ 5-6

ԽՄԲԱԳՐԱԿԱՆ

ՀՈԳԵՒՈՐԱԿԱՆԸ ԵՒ ԻՐ ԴԵՐԸ ԱՅՍՕՐ

Այսօր, մօտ հարիւր տարիներու տարածքին վրայ երբ կը դիտենք մեր նոր պատմութիւնը, անշուշտ համաշխարհային գետնի վրայ, մարդկութիւնը, ընկերային ու հոգեւոր ըմբռնումները, միջավայրերը հիմնովին փոխուած են: Փոխուած է նաեւ մեր ժողովուրդի կեանքը: Մէկ հատուածը ինկաւ Սովետական կարգերու գերիշխանութեան տակ, ուր որոշ չափով խաթարուեցաւ իր նկարագիրը, յատկապէս համայնավարութեան անաստուածեան իշխանութեան տակ: Միւս հատուածը ցրուեցաւ աշխարհի տարածքին, որպէս հայրենագուրկ, տարագիր: Բնական է, որ մեր զաւակները եւս պիտի ազդուէին իրենց նոր միջավայրերու ընկերային ու հոգեւոր երեւոյթներէն: Աւելին՝ Համաշխարհային փոփոխութիւններէն գերծ չմնաց նաեւ մեր ժողովուրդը: Հոս պէտք է մտահոգ կերպով նշել, որ այսօր մեր ժողովուրդի ազգային եւ քրիստոնէական նկարագիրը սկսած է խաթարուիլ, ինչպէս աշխարհի բոլոր քրիստոնէաներուը:

Նոր չէ երեւոյթը: Աւերը գործուած է ու կը շարունակէ գործել մեր բոլոր համայնքներուն մէջ: Մինչ մենք ո՛չ միայն շուարած ենք, այլ նաեւ քայքայուած: Քայքայուած մանաւանդ նկարագրով: Հեռացած ենք մեր արմատներէն, մոռցած ենք որ ճիւղերն ենք նոյն ծառին: Մեզ իրար միացնող, մեզ եղբայրացնող Ս. Միւռնը կարծեք ցամբած է մեր ճակատներէն: Մեր անտարբերութեամբ կորսնցուցած ենք գիտակցութիւնը, որ

ժողովուրդը, ջուրի ու Ս. Հոգիի մկրտութեամբ միացեալ որդիներն են Աստուծոյ, Եկեղեցին են նոյն հաւատալիքներով: Յցուն է իրականութիւնը՝ Հայոց Եկեղեցին ազգային միութեան կառոյցն է մեր մէջ: Այդ կառոյցի ղեկին կը կանգնին հոգեւորականներէ աւելի աշխարհականներ, որպէս նոյն միութեան հաւասար եւ հաւատաւոր անդամներ: Եկեղեցականը (հոգեւորականը) բարձրագոյն եւ փոքրագոյն աստիճաններով տեսուչն է, սպասաւորն է կառոյցին, իր նուիրապետական կարգերով:

Հետեւաբար, երբ ունինք իսկական կազմաւորումով եկեղեցւոյ առողջ անդամներ՝ հոգեւորականութիւն ու աշխարհիկ ժողովուրդ, Եկեղեցին իր իսկական կերպին մէջ է: Երբ անոնք տկարանան, Եկեղեցին կը տկարանայ: Երբ անոնք այլասեռին, Եկեղեցին կ'այլասեռի: Եկեղեցին անդամ է թագաւորը (Նախագահ), վարչապետը, զօրապետը, պետական կառոյցին բոլոր անդամները եւ բոլոր քաղաքացիներն ու գիւղացիները, ամենէն զօրեղ, ինչպէս ամենէն տկար հաւատացեալը: Հոգեւորականը անոնց դաստիարակուած դաստիարակն է:

Հետեւաբար, երբ ունինք առողջ, զօրեղ հոգեւորական, կ'ունենանք առողջ եւ զօրեղ հաւատացեալներ, զօրեղ ժողովուրդ: Այսինքն առողջ եւ զօրեղ քաղաքացիներ: Հոս կը կայանայ Եկեղեցւոյ եւ հոգեւորականին ամենէն ազդու դերակատարութիւնը պետութիւն կառուցելու աշխատանքին մէջ: Առողջ եւ զօրեղ ժողովուրդը ինքը կը պայքարի յոռի բարքերուն դէմ, անհաւատին դէմ, աղանդաւորին դէմ: Հայաստանի Հանրապետութեան Նախագահ՝ Տիար Ռ. Քոչարեան Կիպրոս այցելութեան ընթացքին, Կիպրոսի եկեղեցւոյ Պետ՝ Խրիզոսթոմոս Բ Արք.ին հարց տուաւ թէ Եկեղեցին ինչպէ՞ս կը պայքարի աղանդաւորութեան դէմ: Արքեպիսկոպոսը պատասխանեց մէկ բառով՝ Ժողովուրդով: Եւ բացատրեց թէ իր եկեղեցւոյ անդամները այնպէս դաստիարակուած են, որ դուրս կը վանեն օտարամուտ որեւէ անուղղափառ վարդապետութիւն:

Յատկանշական է, որ յոյն ժողովուրդը իրենց բոլոր աստիճանի հոգեւորականները ժողովրդային հասկացողութեամբ ուսուցիչ (տազգալէ) կը կոչէ: Արդարացի է կոչումը, երբ առողջ, պատրաստուած եւ ընտրեալ են հոգեւորականները եւ արժանի այդ կոչումին ժողովուրդի խաւերուն մէջ:

Հետեւաբար Եկեղեցին զգուշաւոր կերպով պիտի պատրաստէ եւ ընտրէ կոչումով եւ ուսուցանելու ատակ, ծառայասէր ու անձնուէր հոգեւորականներ, որոնք ժողովուրդին մէջ, դպրոցներէն ներս, կազմակերպուած ծուխերու մէջ յատուկ լսարաններով, ընտանեկան յարաբերութիւններով թէ այլ կերպերով հետամուտ ըլլան ժողովուրդը կրթելու, անոնց մէջ խիղճը կազմաւորելու աշխատանքին: Եկեղեցին, այսինքն հաւատքը խիղճն է մարդ անհատին:

Դպրոցներեն ներս կրօնական դաստիարակութիւն անուանումը խըրտ-
չեցնող է այս օրերուն: Պետութիւններ, ինչպէս Գանատան, չեն ընդունիր
նման դաստիարակութիւն դպրոցներէ ներս: Արդարացի է թերեւս մտա-
հոգութիւնը համաշխարհայնացած այսօրուան խառնարանին մէջ: Բայց
կրօնական բառը կարելի է փոխարինել բարոյական դաստիարակու-
թիւն բառով: Բարոյական դաստիարակութիւնը էական անհրաժեշտու-
թիւն է ամէն մարդու համար, այսօր մանաւանդ, համաշխարհային խառ-
նարանին մէջ ամէն տեղ ու նաեւ մեր մէջ: Իսկ զայն ուսուցանողը պէտք
է ըլլայ գիտակից, անշահախնդիր, հարուստ բարոյականով հոգեւո-
րականը կամ նոյնպիսի յատկանիշերով օժտուած եւ պատրաստուած
աշխարհականը: Կարելոր է, որ մեր տարրական վարժարանները, թե-
կուզ արտադասարանային դրութեամբ ջամբեն այդ կրթութիւնը: Եկեղե-
ցին պահապանն է բարոյական արժեքներուն, առողջ ընտանիքին, առողջ
մարդուն, առողջ խղճին, ինչպէս իր ժողովուրդի հոգեւոր եւ մշակութա-
յին արժեքներուն:

Յեռու չերթանք, Հայաստանի Հանրապետութեան սահմանադրու-
թիւնը հիմնուած է քրիստոնէական արժեքներու վրայ՝ պարտաճանա-
չութիւն, կարգապահութիւն, իրարօգնութիւն, արդարութիւն...: Հայաս-
տանի քաղաքացին, այսինքն անխտիր բոլոր հայերը, երբ ունին քրի-
ստոնէական առողջ դաստիարակութիւն, շատ աւելի դիւրաւ կը հետեւին
եւ կը գործադրեն երկրին օրէնքները՝ դառնալով տիպար, օրինակելի
քաղաքացի: Այս պարագան աւելի ցցուն եւ օգտակար կը դառնայ, երբ
քաղաքացին պետութեան մէջ գործող պաշտօնեայ է բոլոր մակարդակ-
ներու վրայ, եւ կ'աշխատի խղճով, իմաստութեամբ, արդարութեամբ,
անշահախնդրութեամբ եւ անաչառութեամբ:

Հոգեւորականը, այսօր մանաւանդ, երբ ժողովուրդին մէջ տեսակա-
ւոր մանրէներ սփռուած են, ինք հեռու պէտք է մնայ անոնցմէ. ցուցադ-
րամոլութիւն, ամբարտաւանութիւն, ատելութիւն, նախանձ, կռուական
ոգի, հայիոյութիւն, չարախօսութիւն, հեշտամոլութիւն իրենց այլազա-
նութիւններով: Հոգեւորականը, ինչպէս առաքեալը կը թուէ, պէտք է
ըլլայ «հիւրասէր, բարին սիրող, զուսպ, արդար, մաքուր ու ժուժկալ» (Տիտ
1.8) ու «հեռու դրամասիրութենէ՝ որովհետեւ բոլոր չարիքներու արմա-
տը դրամասիրութիւնն է: Շատեր դրամ դիգելու ձգտելով՝ հաւատքէն շե-
ղեցան եւ իրենք զիրենք տանջեցին բազմաթիւ ցաւերով» (Ա.Տմ 6.10):

Առաքեալներու ատեն ալ եւ անոնցմէ ետք ալ կային անկարգները,
կեղծ հաւատաւորները, կեղծ կոչեցեալները, նիւթապաշտները, ամբար-
տաւանները, որոնք ընտրեալներու կողմէ խարազանուեցան եւ եկեղե-
ցին այնքան չտուժեց՝ շնորհիւ ընտրեալ մշակներու՝ յատկապէս հոգեւո-
րականներու: Ոչ ոք թող չվիրաւորուի, բայց բոլորը թող ուշադիր ըլլան,

որ հոգեւորականը ամեն դարու եւ ամեն տեղ իր բարձր դիրքին վրայ չէ եղած, որուն պատճառով ժողովուրդը առանձնացուցած եւ մեծարած է արժանիները միայն, որոնք մեծ թիւ չեն կազմեր: Պետք է խոստովանիլ, որ մեր մօտ քահանայութիւնը պատահականութեան ձգուած ասպարեզ մը եղած է, որուն հետեւանքով հաւատացեալ ժողովուրդը հարկ եղած չափով չէ սպառազինուած պատահող մոլորութիւններու եւ մոլութիւններու դէմ: Տարբեր էր հին օրերուն մեր գիւղերուն եւ քաղաքներուն մէջ, ուր մեկուսացած ու ինքնամփոփ կեանք մը ունէր հոգեւոր հօտը, ինչպէս նաեւ հովիւը:

Այսօր ամեն բան երեւելի է եւ տեսանելի ամենուն կողմէ: Ամեն հնարաւորութիւն կայ հասնելու ամենուրեք, օգնելու բոլորին, առաջքը առնելու համար ցցուող մոլութիւններուն եւ մոլորութիւններուն: Խօսքը անշուշտ անհրաժեշտ է, ժողովը՝ ուղեցոյց, բայց ասոնք սկիզբն են գործին, եթէ անոնց չյաջորդէ գործը, անոնք իրենց սաղմին մէջ կը խեղդուին, ինչպէս վկայուած է: Այսօրուան հաւատացեալը հինը չէ: Անոր հետ կարելի չէ խօսիլ մակերեսային տպաւորութիւն առթող հռետորական բառերով, այլ ջանադիր պետք է ըլլալ զայն համոզելու, անոր մէջ հին եւ առողջ սերմերը ցանելու, որ հինը առողջ կերպով աճի նորին մէջ, այլապէս կը խաբենք մեր դիմացինը, անշուշտ մենք մեզ խաբելէ ետք:

Այսօր, նոր սերունդը կը ծաղրէ ձեւակերպութիւններն ու մեծախօսութիւնները: Թէեւ ուշացած՝ բայց պետք է փնտռել, հետապնդել, գտնել մեր տղաքն ու աղջիկները՝ Աւետարանի օրինակով եւ անոնց հետ վարուիլ հանդարտ, ջերմ եւ համոզիչ լեզուով: Պետք է անոնց հետ ըլլալ ընկեր, սիրել, գուրգուրալ անոնց վրայ, ինչպէս Տէրը կը թելադրէ:

Մայիսեան օրերու մէջ ենք: Մեր պատգամն է, որ վերբերենք եւ մեր օրերուն խառնենք 1918ի մայիսեան օրերը, հոն ապրող հոգեւորական թէ աշխարհական մեծերը՝ Գեորգ Կաթողիկոս, Գարեգին Յովսէփեան Եպիսկոպոս, համեստ բայց ընտիր հոգեւորականներ, Արամ Մանուկեան, իշխանաւորներ, մանաւանդ զօրավարներ ու պարզ բայց հաւատարիմ զինուորներ...:

Վ.Ա.Յ.

ԿՈՆԴԱԿՆԵՐ



**ՎԵՅԱՓԱՌ ՀԱՅՐԱՊԵՏԻՆ ՑԱՐԴ ՀՐԱՊԱՐԱԿԱԾ ԿՈՆԴԱԿՆԵՐՈՒՆ
ԵՒ ՕՐՀՆՈՒԹԵԱՆ ԳԻՐԵՐՈՒՆ ՀԱՄԱՔԱԾՈՆ*
ԳԻՐ ՕՐՀՆՈՒԹԵԱՆ ԵՒ ԳՆԱՀԱՏԱՆՔԻ**

(Տ. Զարեհ Քհնյ. Շաքարեանին, Քահանայական լանջախաչ կրելու արտօնություն ստանալու առթիւ)

Ընդառաջելով Բերիոյ թեմի Առաջնորդ՝ Գերաշնորհ Տ. Շահան Արք. Սարգիսեանի խնդրանքին, այսու Հայրապետական Կոնդակաւ Ձեզի կը շնորհենք
ՔԱՀԱՆԱՅԱԿԱՆ ԼԱՆՋԱԽԱՉ

կրելու արտօնություն՝ յընթացս տօնական օրերու եկեղեցական արարողութեանց եւ պաշտօնական հանդիսութեանց:

Վստահ ենք որ Ձեզի շնորհուած այս պատիւը խթան մը պիտի հանդիսանայ առաւել նուիրումով շարունակելու Ձեր քահանայական ծառայութիւնը՝ Հայ եկեղեցոյ անդաստանէն ներս:

Կ'աղօթենք առ Բարձրեալն Աստուած, որ հոգեպէս ու ֆիզիքապէս զօրացնէ Ձեզ, պարգեւելով Ձեզի քաջառողջութիւն եւ անսպառ կորով:

**ԱՐԱՄ Ա. ԿԱԹՈՂԻԿՈՍ
ՄԵԾԻ ՏԱՆՆ ԿԻԼԻԿԻՈՅ**

*Տուաւ Կոնդակս այս ի Կաթողիկոսարանիս
Որ յԱնթիլիաս, Լիբանան
Ի 10-ն Փետրուարի, 2014 թուին Քրիստոսի, եւ
Ի թուին Հայոց ՌՆԿԳ.
Ընդ համարաւ Շ/ՅԼԳ.*

* Յունուար 2010-ի թիւով սկսանք հրատարակել Ս. Աթոռոյս Վեհափառ Հայրապետ՝ Ն.Ս.Օ.Տ.Տ. Արամ Ա. Կաթողիկոսի Կոնդակներու հաւաքածոն, սկսեալ 1995 թուականէն: Սոյն շարքը շարունակութիւնն է ընդհանուր հաւաքածոյին: *ԽՄԲ.*:

ԳԻՐ ՕՐՀՆՈՒԹԵԱՆ ԵՒ ԳՆԱՀԱՏԱՆՔԻ

(Տ. Խոբէն Քինյ. Պերթիզլեան, Քահանայական Լանջախաչ
կրեյլու արտօնութիւն ստանալուն առթիւ)

Ընդառաջելով Բերիոյ թեմի Առաջնորդ՝ Գերաշնորհ Տ. Շահան Արք. Սարգիսեանի խնդրանքին, այսու Հայրապետական Կոնդակաւ Ձեզի կը շնորհենք

ՔԱՀԱՆԱՅԱԿԱՆ ԼԱՆՁԱԽԱՉ

կրեյլու արտօնութիւն՝ յընթացս տօնական օրերու եկեղեցական արարողութեանց եւ պաշտօնական հանդիսութեանց:

Վստահ ենք որ Ձեզի շնորհուած այս պատիւը խթան մը պիտի հանդիսանայ առաւել նուիրումով շարունակելու Ձեր քահանայական ծառայութիւնը՝ Հայ Եկեղեցոյ անդաստանէն ներս:

Կ'աղօթենք առ Բարձրեալն Աստուած, որ հոգեպէս ու ֆիզիքապէս զօրացնէ Ձեզ, պարգեւելով Ձեզի քաջառողջութիւն եւ անսպառ կորով:

**ԱՐԱՄ Ա. ԿԱԹՈՂԻԿՈՍ
ՄԵԾԻ ՏԱՆՆ ԿԻԼԻԿԻՈՅ**

*Տուաւ Կոնդակա այս ի Կաթողիկոսարանիս
Որ յԱնթիլիաս, Լիբանան
Ի 10-ն Փետրուարի, 2014 թուին Քրիստոսի, եւ
Ի թուին Հայոց ՌՆԿԳ.
Ընդ համարաւ Շ/ՅԼԳ.*



ԳԻՐ ՕՐՀՆՈՒԹԵԱՆ ԵՒ ԳՆԱՀԱՏԱՆՔԻ

(Տիար Զաւէն Մարրլեանին, «Ս. Մեսրոպ Մաշտոց»ի շքանշան
ստանալուն առթիւ)

Հայրապետական օրհնութեամբ կ'ողջունենք Ձեզ Մեծի Տանն Կիլիկիոյ Կաթողիկոսութեան Վեհարանի կամարներուն ներքեւ: Այս հոգեւոր կեդրոնը Ձեզ կ'ընդունի, որպէս անդամ այն աշխարհական փառանգին, որ գործօն մասնակցութիւն ու կարեւոր նպաստ բերած է, եւ կը շարունակէ բերել, մեր Սուրբ Աթոռի առաքելութեան:

Արդարեւ, Լիբանանի հայութեան կեանքէն ներս երկար տարիներու Ձեր կրթական-մշակութային ծառայութեամբ նկատառելի ներդրում ունեցաք հայկերտումի առաքելութեան մէջ: Կրթական ասպարէզէն ներս սերունդներու

դաստիարակութեան կողքին, դուք, որպէս բանասէր, Ձեր տուած շինիչ դասախօսութիւններու կողքին, նաեւ մեր գրադարանները հարստացուցիք հայ քաղաքական մտածողութեան ու յատկապէս հայոց ցեղասպանութեան առընչուած շահեկան հրատարակութիւններով: Ձեր կատարած ուսումնասիրութիւններն ու աշխատասիրութիւնները որպէս ջրտուք պարարտացուցին՝ հայոց ցեղասպանութեան ճանաչման աշխատանքային դաշտը:

Ի գնահատութիւն Ձեր ունեցած ազգային-կրթական բեղուն գործունէութեան, այսու Հայրապետական Կոնդակաւ Ձեզի կը շնորհենք Մեծի Տանն Կիլիկիոյ Կաթողիկոսութեան

Ս. ՄԵՍՐՈՂ ՄԱՇՏՈՅ ՇՔԱՆՇԱՆ

Կ'աղօթենք առ Բարձրեալն Աստուած, որ Ձեզի շնորհէ քաջառողջ եւ երկար տարիներ՝ աստուածային բարիքներով լեցուն: Թող Աստուած վարձահատոյց ըլլայ Ձեզի մեր ազգին մատուցած Ձեր նուիրեալ ծառայութիւններուն համար:

**ԱՐԱՄ Ա. ԿԱԹՈՂԻԿՈՍ
ՄԵԾԻ ՏԱՆՆ ԿԻԼԻԿԻՈՅ**

*Տուաւ Կոնդակա ի Կաթողիկոսարանիս
Ի դռնն Մայր Տաճարիս Սրբոյն Գրիգորի Լուսաւորչին
Որ յԱնթիլիաս, Լիբանան
Ի 23-ն Փետրուարի, 2014 թուին Քրիստոսի, եւ
Ի թուին Հայոց ՌՆԿԳ.
Ընդ համարաւ Շ/ՅԼԵ.*



ՄԱՐԴՈՒԺԻ ՏԱՐԻ

2024-Ը՝ «ՄԱՐԴՈՒԺԻ ՊԱՏՐԱՍՏՈՒԹԵԱՆ ՏԱՐԻ»

Ն.Ս.Օ.Տ.Տ. Արամ Ա. Վեհափառ Հայրապետը «իր մատը վերջին վրայ դնելով», 2024 տարին հռչակեց «Մարդու Պատրաստութեան տարի»: Որքա՛ն տեղին է այս խորագրումը: Այսօր Հայ կեանքը Հայաստանէն մինչեւ Սփիւռս աշխարհի զգալի ու դիտելի տերեւաթափ կ'ապրի, ամէն մակարդակի վրայ: Այսօր Հայ իրականութեան մէջ նկատելի է կարող եւ պատրաստուած մտաւորականներու, գիտնականներու, ուսուցիչներու, ազգային գործիչներու, արուեստագէտներու, ղեկավարներու, մասնագէտներու եւ տակաւին ինչ-ինչ պաշտօններու ատակ անձերու պակասը. «զո՞րն ասեմ, զո՞րն խոստովանիմ»:

Հայ ազգի այսօրուան վիճակը մեզ կը յուշէ իմաստասիրութեան պատմութեան մէջ ծանօթ անուն մը՝ Դիոգինէս: Դիոգինէս այն փիլիսոփան էր, որ ցերեկ ատեն լապտերն ի ձեռին փողոց իջած էր մարդ փնտռելու համար: Այս առումով, կը խորհիմ, որ եթէ Դիոգինէս այդ ժամանակ լապտեր բռնեց, այսօր մենք որ կ'ապրինք աշխարհի մը մէջ, ուր կան լուսատու զանազան բարձր մակարդակի գործիքներ, արդեօք ո՞ր գործիքը պիտի գործածենք, որպէսզի աւելի յստակ, մանրակրկիտ ու արագ գտնենք մեր փնտռած մարդիկը:

Վերջին քանի մը տարիներուն առիթը ունեցայ ներկայ գտնուելու շատ մը փայլուն մտքի տէր, աշխոյժ գործունէութիւն տարած, պատմութեան մէջ իր դրոշմը ձգած եւ տիպար հայորդիներու յուշ-երեկոններուն: Զարմանալի կերպով անոնց մասին խօսող բոլոր անձերն ալ նոյն նախադասութիւնները տարբեր ոճերով կը կրկնէին. «Ո՞վ պիտի լեցնէ անոր տեղը», «Կարծեմ իմէ ետք ուրիշը չկայ այս ասպարէզին մէջ», «Ի՞նչ մասնագիտութեան մէջ վերջինն էր», «Արդեօք պիտի գա՞յ երկրորդ այսինչ-եան մը»... տակաւին շարքը կ'երկարի: Յիշեալ բոլոր արտայայտութիւնները յստակօրէն կը փոխանցեն, թէ Հայ ազգը մարդու լուրջ տագնապի մէջ է: Մարդու «գրամագլուխի» նահանջ կայ: Կարողներու եւ մասնագէտներու պատրաստման անյետաձգելի կարիքը կայ:

Կասկածէ վեր է, թէ պատմութիւնը կը կերտուի բանիմաց, գիտնական,

ուսումնասէր, մասնագէտ եւ մտածող մարդոց ձեռամբ: Անոնք են, որ կը մնան պատմութեան էջերու կեդրոններուն, իսկ սովորական, տափակ եւ մակերեսային մտքով մարդիկ կը մնան պատմութեան լուսանցքէն անդին կամ փոշիներուն տակ: Հայոց Պատմութիւնը լիառատ է կարկառուն եւ գլխագիր դէմքերով, որոնք պատմութիւն կերտած են բառին ամբողջական եւ հարազատագոյն իմաստներով: Ուրախանալ ու հպարտանալ մեր նախորդներու վաստակներով՝ շատ բնական է: Բայց անով գինովնալ՝ ընդունելի չէ: Մենք կոչուած ենք անոնց գործը շարունակելու: Այդ առաքելութիւնը յառաջ տանելու համար, կարիքը ունինք նոր դէմքերու, նոր մարդուժի: Ինչպէս որ կեանքի սկզբունքն է ընթացք դէպի կատարելութիւն, այնպէս ալ Հայ ազգի սկզբունքը պէտք է ըլլայ դէպի դարձնել կատարելութիւն:

Ի՞նչ է այս բոլորին լուծումը: Ի՞նչ պէտք է ընել: Ինչպիսի՞ միջոցներու պէտք է դիմել: Ի՞նչ աշխատանք պէտք է տարուի:

Վերոնշեալ հարցադրումներուն մանրմասնօրէն կը պատասխանէ Կիլիկիոյ Ս. Աթոռին այժմու Վեհափառ Հայրապետը իր հռչակագիրին մէջ: Ան մարդուժի պատրաստման կարեւորութեան անդրադառնալով կ'ըսէ. «Քաջ պէտք է գիտնանք, որ առանց մարդուժի մեր կեանքը պիտի կորսնցնէ իր որակը, պիտի նահանայ ու գունաթափի եւ մեր գոյութեան արմատները պիտի տկարանան: Մարդուժի պատրաստութիւնը անյետաձգելի առաջնահերթութիւն է»: Ահաւասիկ մարտահրաւէր մը, որ կը դրուի իւրաքանչիւր հայորդիի ընդառաջ:

Հայ ազգի սպառնացող վտանգը կանխելու համար, նորին Սրբութիւնը հետեւեալ լուծումները կ'առաջարկէ.

Ա) ՀԱՅ ԿԵԱՆՔԻ ՄԱՅՐ ԷՋԷՆ ՀԵՌՈՒ ԳՏՆՈՒՈՂ ՄԵՐ ՄԱՐԴՈՒԺԸ ՆԵՐԳՐԱԿԵԼ ՀԱՅ ԿԵԱՆՔԷՆ ՆԵՐՍ: Վեհափառ Հայրապետը կը յայտնէ, թէ Հայ ազգը զանազան մարզերէ ներս մասնագէտներ, զարգացած երիտասարդներ, նուիրեալ ուսուցիչ-ուսուցչուհիներ եւ այլ մարդուժեր ունի, որոնք ինչ-ինչ պատճառներով հեռու մնացած են Հայ կեանքէն: Ան կը յորդորէ, որ անոնք մօտենան Հայ կեանքին ու մասնակից դառնան հաւաքական ապրումներուն, մաքառումներուն, ծրագիրներուն եւ աշխատանքներուն: Ան կ'առաջարկէ, որ երկուստեք ուղղութեամբ (հեռացողներ եւ ազգային պատասխանատուներ) աշխատին այդ նուիրեալ գործին իրականացման:

Բ) ՆՈՐ ՄԱՐԴՈՒԺԻ ՊԱՏՐԱՍՏՈՒԹԻՒՆ: Կաթողիկոսը կ'ըսէ. «Սա դիւրին ու հեզասահ եւ անմիջական կերպով իրագործելի ծրագիր մը չէ... Մարդուժի պատրաստութիւնը կ'ենթադրէ երկարաշունչ գործընթաց, ամբողջական նուիր-

րում, լուրջ կազմակերպումաժողովներ, հետեւողական աշխատանք եւ նաեւ՝ նիւթական լայն ներդրում»:

Նորին Ս. Օժուժիներ իբրեւ նոր մարդուժի պատրաստման հիմնական բնագաւառներ կը նկատէ Հայ ընտանիքը, Հայ եկեղեցին, Դպրեվանքը, Հայ դպրոցը, հայկական բոլոր կառույցները (կուսակցական, բարեսիրական, մշակութային, մարզական, ընկերային, եւայլն), Կաթողիկոսարանիս հայագիտական ու մանկավարժական կեդրոնը եւ համալսարանական ուսումը:

Ահաւասիկ Նորին Սրբութեան տուած անմիջական լուծումները: Անշուշտ այս լուծումներուն իրականացման պարտականութիւնն ու պարտաւորութիւնը միայն չեն ծառանար ղեկավարներու եւ պատասխանատու մարմիններու ուսերուն վրայ, այլ ինչպէս Վեհափառ Հայրապետը կ'ըսէ՝ «Համասփիտեան այս յոյժ կարեւոր կարիքը դարմանելու հաւաքական աշխատանքին մէջ բոլորս ալ ընելիք ու տալիք ունինք»: Մարտահրաւէրը բոլորիս համար է: Անկէ «աչք խփել»ն ու փախուստ տալը, Հայ ազգի շուտափոյթ կործանման գործին մասնակցիլ կը նշանակէ: Հետեւաբար, ականջ տանք Կաթողիկոսի կոչին: Առնենք համապատասխան քայլերը: Մասնակցինք այս սրբազան առաքելութեան, որպէսզի լուսաւոր գրիչով գրենք նոր Հայոց Պատմութիւն:

ԱՌԱՔԵԼ ԱԲՂ. ԳԱՏԷՀՃԵԱՆ



ՎԿԱՅՈՒԹԻՒՆ**ՎԿԱՅՈՒԹԻՒՆ ՄԸ՝
ՀԱՆԳՈՒՅԵԱԼ ԱՆԻ ՊԷՋԻՔԵԱՆԻ ՄԱՍԻՆ***

Շուրջ յիսուն տարիներ է ի վեր ճանչցած ենք Տեր եւ Տիկ. Ալեքքո եւ Անի Պեզիքեանը: 1975-ին Լիբանանէն ներս ստեղծուած քաղաքացիական պատերազմին պատճառով, անոնք հաստատուեցան Իտալիա: Նոր միջավայրի ծանր պայմաններուն մէջ իսկ, շնորհիւ իրենց խոր հաւատքին, ամուր կամքին ու ջանասեր ոգիին, կարճ ժամանակի մը ընթացքին անոնք կրցան վերակազմակերպել թէ՛ իրենց ընտանեկան կեանքը եւ թէ՛ գործը:

Պեզիքեան ընտանիքի կեանքի այս դժուար շրջանին Տիկ. Անին՝ որպէս մայր, իր ամուսնոյն կողքին ունեցաւ վճռորոշ դերակատարութիւն: Ան մօտէն հետամուտ եղաւ երկու զաւակներու կրթութեան՝ թէ՛ ընտանեկան հայեցի դաստիարակութեան եւ թէ՛ համալսարանական ուսման ճամբով: Իր ամուսնոյն եւ զաւակներուն՝ Արամի ու Չարեհի կողքին, Անին նաեւ գործօն մասնակցութիւն բերաւ իրենց ընտանեկան գործին ծաւալման աշխատանքներուն: Անիի կեանքին յիշեալ երկու տարածքներուն եկաւ միանալու իր ամբողջական ու անմնացորդ նուիրումը՝ օգտակար հանդիսանալ մեր ժողովուրդի ազգային, մշակութային, ընկերային ու մարդասիրական կարիքներուն:

Արդարեւ, վերջին շուրջ 30 տարիներուն, Պեզիքեան ընտանիքը մեր եկեղեցւոյ ու ազգի կեանքին մէջ եղաւ ԲԱՐԵՐԱՐ՝ բառին ամբողջական առումով: Որքա՛ն հարազատօրէն կը պատշաճի յիշեալ բնութագրումը այս պատուական ընտանիքին, որուն հաւաքական սիրտը, հեռո՛ւ մեր հայնական կեանքէն, միշտ կը տրոփէ հայութեամբ ու հայութեան համար:

Հետեւողական կերպով, եւ յաճախ իր նախաձեռնութեամբ, Պեզիքեան ընտանիքը բազմաթիւ բարերարութիւններ կատարեց մեր կեանքի բազմազան մարզերէն ներս, Հայաստանի ու Լիբանանի մէջ: Սեծի Տանն Կիլիկիոյ Կաթողիկոսութիւնը կեդրոնական տեղ գրաւեց Պեզիքեան ըն-

* Վեհափառ Հայրապետին սոյն վկայութիւնը ընթերցեց Գերշ. Տ. Կոմիտաս Արք. Օհանեան հանգուցեալ Անի Պեզիքեանի թաղման կարգի ընթացքին, Զուիցերիոյ մէջ:

տանիքի բարերարություններուն ծիրեն ներս: Այսպես, Դպրեվանքի յատուկ հիմնադրամի հաստատումը, Նահատակաց մատրան վերանորոգումը եւ Հայաստանի Ա. Անկախութեան յուշարձանի հաստատումը՝ Անթիլիասի Մայրավանքին մէջ, Ցեղասպանութեան յուշարձանի վերանորոգումը եւ անոր շրջապատին ընդարձակումը՝ Պիքֆայայի Ս. Աստուածածին Վանքին մէջ, Ցեղասպանութեան որբերու «Արամ Պեզիքեան» թանգարանի շինութիւնը՝ «Թռչնոց բոյն»ի որբանոցին մէջ, առաւել մղում ու հմայք տուին մեր Ս. Աթոռի համազգային առաքելութեան:

Յատուկ յիշատակութեան ու երախտագիտութեան արժանի են Պեզիքեան ընտանիքին կատարած օժանդակութիւնները լիբանանահայութեան, Լիբանանի պատմութեան ամենէն ծանր տարիներուն: Արդարեւ, կարիքաւոր ընտանիքներուն ու դպրոցական աշակերտներուն իրենց կատարած օժանդակութիւնը, զանազան հիւանդութիւններու ենթակայ անձերուն անմիջական օգնութիւնն ու զանազան կազմակերպութիւններու եղած օժանդակութիւնները՝ Հայ Դատեն սկսեալ մինչեւ բարեսիրական, մարզական, կրթական ու մշակութային կառոյցներ, ինչպէս նաեւ յայտարարուած բազում օժանդակութիւններուն առընթեր, նաեւ լուռ կերպով հիւանդներուն ու կարիքաւորներուն եղած աջակցութիւնը անկասկած իւրայատուկ տեղ կու տան Պեզիքեան ընտանիքին մեր ազգի մեծ բարերարներու շարքին:

Պեզիքեան ընտանիքին կողմէ կատարուած բոլոր բարերարութիւններուն մղիչ ուժը հանդիսացաւ Տիկ. Անին՝ իր անխոնջ դերակատարութեամբ: Արդ, անվարան կրնանք Տիկ. Անին կոչել Աւետարանի բացատրութեամբ՝ նոր օրերու «Բարի Սամարացի»ն, որ օգնութեան հասաւ անխտիր Հայաստանի ու Լիբանանի իր ազգին տառապեալ զաւակներուն: Վստահ ենք, որ Անիին բարի յիշատակը միշտ պիտի մնայ վառ իր ամուսնոյն՝ Ալեքքոյին, իր զաւակներուն՝ Արամին ու Չարեհին եւ իր թոռնուհիին՝ Անիի կեանքին մէջ. եւ անոնք գործնապէս պիտի արժեւորեն անոր բարի ու անմոռաց յիշատակը:

Մեր խորագգաց ցաւակցութիւնները կը յայտնենք Ալեքքոյին, որ միշտ մնաց Անիին կողքին՝ մինչեւ անոր կեանքի վերջին վայրկեանը, նաեւ՝ Արամին, Չարեհին, կրտսեր Անիին եւ բոլոր հարազատներուն ու բարեկամներուն, հայցելով որ Աստուած Ս. Հոգւոյն միջոցաւ մխիթարէ զիրենք:

Կ'աղօթենք առ Բարձրեալն Աստուած, որ երկնային երանական խաղաղութեան մէջ հանգչեցնէ հանգուցեալ Անի Պեզիքեանի բարի հոգին եւ զինք յաւիտենական կեանքի արժանի դարձնէ:

«Յիշատակն արդարոյն օրհնութեամբ եղիցի» (Առ 10.7):

**ԱՐԱՄ Ա. ԿԱԹՈՂԻԿՈՍ
ՄԵԾԻ ՏԱՆՆ ԿԻԼԻԿԻՈՅ**

ՔԱՐՈՋԱԽՕՍԱԿԱՆ

ՔԱՐՈՋԻՉՆԵՐ
ԱՍՏՈՒԾՈՅ ԹԱԳԱԲՈՐՈՒԹԵԱՆ՝

«Եկայ ձեզի՝ բոլորիդ, շրջեցայ եւ
Աստուծոյ արհայութիւնը փարոզեցի»
(Գրծ 20.25)

Փա՛ռք կը վերառաքեմ Աստուծոյ, որ ինչպէս ամէն տարի՝ այս տարի եւս, Ն.Ս.Օ.Տ.Տ. Արամ Ա. Սրբազնագոյն Հայրապետին տնօրինումով, Հոգեգալուստի տօնական ծիրին մէջ, մեր ընծայեալ Միաբան Հայրերն ու Դպրեվանքի սաները բազմազան ձեռնադրութիւններով՝ Ս. Հոգիին առատաբուս շնորհներով առաւել կը պայծառանան: Ահաւասիկ այսօրուան Մասնաւոր Վարդապետութեան իշխանութեան տուչութեամբ կ'ազուցենք աւանդաբար երկարաձգուող շնորհաբաշխութիւններու շղթային առաջին օղակը, որպէս շօշափելի ցոլացում մեր նուիրական ծառայութեան: Յիշեցնեմ, որ Ս. Հոգիէն ծորող շնորհները եկեղեցւոյ մէջ եւ եկեղեցւոյ՝ մեր, հաւատացեալներու ներկայութեան կը կատարուին, որովհետեւ մենք կը վկայենք ընծայեալներուն արժանաւորութիւնը եւ իրենց հետ ընտրեալ անօթ կը դառնանք երկինքէն հոսող շնորհներուն:

Կիլիկեան ուխտի շորս երիտասարդ Աբեղայ Միաբան Հայրեր, այսօր կը դառնան Վարդապետ Հայ եկեղեցւոյ՝ քարոզիչներ Աստուծոյ թագաւորութեան:

Այս առթիւ, քարոզիս բնաբան առած եմ Պօղոս առաքելի Եփեսոսի երէցներուն ուղղած հրաժեշտի խօսքէն քրիստոնէական առաքելութիւնը խթանող հետեւեալ նախադասութիւնը. «Եկայ ձեզի՝ բոլորիդ, շրջեցայ եւ Աստուծոյ արհայութիւնը փարոզեցի» (Գրծ 20.25), որովհետեւ մեր Վարդապետ եղբայրներն ալ իրենց առաքելադաշտերէն, Եփեսոսներէն՝ մեր Ս. Աթոռի Լիբանանի, Սուրիոյ եւ Յունաստանի թեմերէն, նոր իմն Երուսաղէմ՝ Անթիլիաս

* Խտացում Վարդապետական Գաւազանի տուչութեան առթիւ խօսուած քարոզին, Կիրակի, 12 Մայիս 2024-ին, Անթիլիասի «Ս. Գրիգոր Լուսաւորիչ» Մայր Տաճարէն ներս:

եկան, եւ ահա այսօր իրենց առաքելութեան համար աճող պատասխանատուութիւն եւ լիցքաւորում ստացան:

Վարդապետին յարացոյցն ու տիպարը նոյնինքն երկնաւոր մեծ եւ անզուգական Վարդապետն է՝ մեր Տէրն ու Փրկիչը Յիսուս Քրիստոս, որուն արքայութեան սպասաւորներն ենք՝ մեզ եւ մեզի յանձնուած բանաւոր հօտը յաւիտենական կեանքին առաջնորդելու համար:

Այս ճշմարտութիւնը բանալու համար երեք ընդգծումներ կը կատարեմ.-

1) «**Եկայ ձեզի բոլորիդ**»: Վարդապետը պարտաւոր է անխտիր բոլորին երթալու: Քրիստոս այսօր եւս անդադար կը հրահանգէ. «Գացի՛ք եւ բոլոր ժողովուրդները ինծի աշակերտ դարձուցի՛ք» (Մտ 28.19): Մեծի Տանն Կիլիկիոյ Կաթողիկոսութեան Միաբաններս մեր եկեղեցւոյ զաւակները աշակերտ դարձնելէն առաջ՝ աշակերտ կը դառնանք Դպրեվանքին եւ Մայրավանքին մէջ, որպէսզի մեր քրիստոսատիպ կեանքի օրինակով երթանք եւ զանոնք աշակերտ դարձնենք: Երբ կրթական տարեշրջանը իր աւարտին կը մօտենայ, մեր ծնողները պէտք է այժմէն որոշեն իրենց զաւակները յաջորդ տարեշրջանին Դպրեվանք ղրկել, որպէսզի մեր Հոգեւոր Տունի «սափուէն ալիւր շհատնի եւ կուփէն իւղը շպակսի» (Գ.ԹԳ 17.14): Դպրեվանք եւ Մայրավանք անուանումները ինքնին կը բնորոշեն աստուածատուր յաւիտենական ճշմարտութեան մեր յաւիտենական աշակերտութիւնը, որովհետեւ Վա՛նքն է մեզ Վարդապետ դարձնողը. Վանքին մէջ զԱստուած ժողովուրդին տանելու համար կը կազմաւորուինք, մեր աղօթական եւ ծառայական կեանքը հաւաքաբար կ'ապրինք, զայն որպէս առաքելութիւն կ'ըմբռնենք ու կը փորձարկենք եւ Կենաց Բանին ուսուցիչն ու քարոզիչը կը դառնանք: Քրիստոնէութիւնը երթալու, քարոզելու, վկայելու եւ նոյնիսկ նահատակուելու կեա՛նքն իսկ է՝ եւ այս պարագային մանաւանդ հոգեւորականին համար:

2) «**Շրջեցայ**»: Այս շրջիլը ինքնանպատակ չէ. այլ Քրիստոսը ամէն տեղ եւ ամէնուն տանելու անդուլ ընթացքն է. այս իսկ պատճառով քրիստոնեային շրջիլը որպէս ուխտագնացութիւն բնորոշուած է. ուխտագնացութիւն երկրի վրայ եւ հանգիստ երանական վերջին հանգրուանին՝ երկինքի մէջ: Երբ Վարդապետական Գաւազանը տուինք մեր ընծայեալներուն, Ս. Գրիգոր Տաթեւացի եռամեծար Վարդապետին հոգեբուխ աղօթքին բառերով ըսինք. «Առանց խտրութեան եւ երկիւղի ուսուցէ՛ք եւ խրատեցէ՛ք, սաստեցէ՛ք, յանդիմանեցէ՛ք եւ մխիթարեցէ՛ք»: Մարդու մը կեանքը մշտական երթ մը, շրջիլ մըն է: Պահ մը անդրադառնանք, թէ մէկ օրուան ընթացքին քանի-քանի տեղեր կը շրջինք՝ ոտքով եւ միտքով: Եկեղեցականը կը շրջի Քրիստոսը տանելու համար աշխարհին եւ շապսեր, որ մարդիկ եկեղեցի գան՝ որպէսզի Քրիստոսը գտնեն: Այս սկզբունքին հաւատարմութեամբ, այսօր աւելի քան երբեք, Մեծի Տանն Կիլիկիոյ Կաթողիկոսութեան Միաբանութիւնը ներկայութիւն է մեր

ազգի աշխարհասփիւռ գաւակներու կեանքին մէջ՝ երկրաւորէն երկնաւորին տանելու համար Աստուծոյ ուխտաւոր ժողովուրդը:

3) «Աստուծոյ արքայութիւնը քարոզեցի»: Հո՛ն իսկ է մեր գոյութեան, ծառայութեան եւ զոհողութեան պատճառը: Տէրունական աղօթքին «եկեսցէ արքայութիւն քո» խնդրանքը մեր մշտական իղձն ու ուխտն է: Վարդապետական Գաւազանի տուչութեան ընթացքին ոսկեայ թելի նման հիւսուեցաւ այս իրողութիւնը, երբ ըսինք. «Իշխանութիւն ունեցէք ողջմիտ վարդապետութեամբ քարոզելու կեանք պարգեւող խօսքը», «տգէտներուն ուսուցէք եւ անկարգները խրատեցէք», «ապաշխարութեան հրաւիրեցէք մեղուցեալները եւ ճշմարտութեան գիտութեան վերադարձուցէք մոլորեալները»՝ «որպէսզի Տիրոջ դիմաց ըլլաք մշակ մը, որ իր գործերուն համար ամէնալիք բան մը չունի. ըլլաք ազնուական ծառայ մը, եւ սուրբ վարդապետներու երջանիկ խումբին հետ ձեր անունն ալ գրուի Կեանքի գիրքին մէջ»: Այս բոլորին ունկնդիր, դուք եւ մենք, բոլորս, որպէս աստուածային առատ շնորհներու ընդունարան, անգամ մը եւս հաստատեցինք, թէ մենք այս երկրաւոր աշխարհին եւ անոր խաբուսիկ փառքին հետամուտ չենք. այլ՝ Աստուծոյ թագաւորութեան աշակերտն ու ուսուցիչն ենք մեր քրիստոսակեդրոն կեանքի ամբողջ տեւողութեան:

Այս օրհնածիր պահուն, երբ աչքիս դիմաց կ'ուրուագծուին աշխարհով մէկ տարտղնուած մեր ազգի գաւակներու առատ հունձքը եւ ձեր մատղաշ տարիքն ու կանաչ երազները, Սերմնացանին առակը վերջիշելով՝ կը մաղթեմ, որ հաւատքով ցանէք, յոյսով ջրէք եւ սիրով քաղէք մեր փոքր ածուին մէջ, որպէսզի Աստուած ձեզի հոգեկան բաւարարութիւնը պարգեւէ միշտ՝ մէկի տեղ հարիւր պտուղ ստանալու (հմմտ Մտ 13.8), որպէս քարոզիչներ Աստուծոյ թագաւորութեան:

Եկաք ձեր Հոգեւոր Տունը եւ պիտի վերադառնաք եկեղեցւոյ սպասարարութեան այգին՝ Վարդապետական Գաւազանի իշխանութեամբ օժտուած: Ձեր երթը թող ըլլայ միշտ անշեղ եւ հաստատ՝ նոր յանձնառութիւններ ստանձնելու պատրաստակամութեամբ: Պօղոս առաքեալին բառերով՝ «Ձեզ կը յանձնեմ Աստուծոյ եւ իր շնորհի Աւետարանին» (ԳրԺ 20.32), Ս. Երրորդութեան անուան փառաբանութեան եւ Հայ եկեղեցւոյ հոգեշինութեան համար. այժմ եւ միշտ եւ յաւիտեանս յաւիտենից. ամէն:

ՆԱՐԵԿ ԱՐՔ. ԱԼԵԿՍԷՋԶԵԱՆ

ՄԵԿՆԱԲԱՆԱԿԱՆ

ՄԵԿՆՈՒԹԻՒՆ ՄԱՏԹԷՈՍ ԱԲԵՏԱՐԱՆԻ (4.10-17)

«Այն ատեն Յիսուս ըսաւ անոր.— Ետի՛ս գնա Սատանայ՛, որովհետեւ Օրէնքի գիրքին մէջ գրուած է. "Քու Տէր Աստուածդ պէտք է պաշտես եւ միայն անո՛ր ծառայես"» (Մա 4.10):

1) Առաջին երկու փորձութիւններուն, Յիսուս Սատանային չըսաւ՝ «Ետի՛ս գնա Սատանայ», իսկ երրորդ փորձութեան՝ ըսաւ. ինչո՞ւ համար. որովհետեւ, առաջին երկու փորձութիւնները ուղղակիօրէն իր անձին հետ կապ ունէին, մինչդեռ երրորդ փորձութիւնը՝ շօր Աստուծոյ դէմ ուղղուած փորձութիւն մըն էր, եւ ատիկա չէր կրնար ընդունիլ կամ հանդուրժել Յիսուս: Իր այս վերաբերմունքով Յիսուս սորվեցուց մեզի, թէ պէտք է համբերենք այն անարգանքներուն որոնք մեր անձերուն դէմ ուղղուած են, իսկ այն անարգանքները որոնք ուղղուած են Աստուծոյ դէմ՝ երբեք պէտք չէ համբերենք անոնց:

2) Ուշագրաւ է գայրոյթով խառնուած Յիսուսի պատասխանն ու նախանձախնդրութիւնը երբ Սատանան երկրպագութիւն ու պաշտամունք պահանջեց. սա ցոյց կու տայ, թէ Տէրը կը բարկանայ երբ կը տեսնէ, որ մարդիկ Աստուծմէ զատ ուրիշ բանի կ'երկրպագեն ու զանոնք կը պաշտեն: Աստուած խստիւ կը դատապարտէ կռապաշտները ու կը հեզնէ կռապաշտութիւնը, յայտարարելով թէ ինքն է մէկ ու միակ ճշմարիտ Աստուածը, եւ թէ իրմէ «զատ Աստուած չկայ» (Ես 44.6,8, 9-20, 45.5): Կռապաշտութիւնը միայն անցեալին պատկանող երեւոյթ մը չէր. այսօր ալ կռապաշտներ կան: Ոեւէ անձ կամ ռեւէ բան որ կը սիրենք Աստուծմէ աւելի՝ ատիկա մեր կուռքը կը դառնայ, եւ մենք՝ անոր երկրպագուները:

3) Գրաբար լեզուի մէջ «երկրպագութիւն» կը նշանակէ՝ երեսի վրայ գետին իյնալ Աստուծոյ առջեւ, իսկ «պաշտամունք»՝ ծառայութիւն: Յիսուս չ'ուզեր որ քրիստոնեաները Աստուծոյ առջեւ միայն գետին ծոռ ու իրենց գլուխները խոնարհեցնող մարդիկ ըլլան, այլ կ'ուզէ որ անոնք ծառայեն Աստուծոյ՝ անոր կամքը կատարելով:

4) Սատանան խոստացաւ աշխարհի բոլոր թագաւորութիւնները Յիսուսի

տալ, եթէ երբեք Յիսուս երկրպագէ ու ծառայէ իրեն, սակայն Յիսուս չխաբուեցաւ, որովհետեւ գիտէր թէ բոլոր թագաւորութիւնները ի՛րն են, երկինքը իր բոլոր գեղեցկութեամբ ի՛րն է, աստուածային փառքը իր ամբողջ մեծութեամբ ի՛րն է, հրեշտակներուն բանակաները իրենց բոլոր գունդերով ի՛րն են: Երկիրը իր ամբողջ բովանդակութեամբ ի՛րն է: Նոյնպէս մենք, եթէ անդրադառնանք թէ պիտի գայ ժամանակ երբ երկինք ու երկիր մեր սեփականութիւնը պիտի դառնայ՝ երբեք չենք խաբուիր Սատանայէն եւ բան չենք ակնկալեր իրմէ: Արդարեւ, Սուրբ գիրքը կ'ուսուցանէ, թէ ժամանակներու աւարտին, Աստուծոյ Որդիին գալուստէն ու վերջին դատաստանէն ետք, նո՛ր երկինք մը եւ նո՛ր երկիր մը պիտի ստեղծուին, ուր Քրիստոսով արդարացածները միայն պիտի կարենան մուտք գործել (Բ.Պտ 3.13: Յլտ 21.1: Ես 65.17, 66.22: Մտ 5.5: Յլտ 5.10: Ես 45.18: Սղ 37.9,11,22,29,34, եւ այլն):

5) Եթէ երբեք Յիսուսի յաղթանակը Սատանային դէմ՝ նոյնինքն մեր յաղթանակն է, ուրեմն, անոր արտասանած խօսքերը՝ մե՛ր ալ խօսքերը պէտք է ըլլան: Մեծն Անտոնիոս կ'ըսէ. «Նախ՛ս գնա Սատանայ՝ խօսքը, Քրիստոսի կողմէ իր հաւատացեալներուն տրուած պարգեւ մըն է, որոնք իշխանութեան տէր մարդիկ իբրեւ՝ կրնան խօսիլ Քրիստոսով: Տէրը իր այս խօսքով ուզեց մեր միջոցաւ սաստել Չարը, որովհետեւ ինչ որ Տէրը կ'ըսէ՝ մեզի համար է որ կ'ըսէ, որպէսզի երբ սատանաները այսպիսի խօսքեր լսեն մեզմէ՝ փախչին Տիրոջ միջոցաւ որ սաստեց զանոնք այս խօսքերով»: Անշուշտ Սատանան չի հեռանար «Նախ՛ս գնա Սատանայ» խօսքը լսելով մեզմէ, եթէ երբեք տեսնէ որ խօսքով զինք մեզմէ կը հեռացնենք, իսկ գործերով՝ կը մօտեցնենք:

6) Քրիստոս ենթարկուեցաւ նոյն այն երեք փորձութիւններուն, որոնց ենթարկուեցան մեր նախածնողները՝ Ադամ եւ Եւա, եւ մեղքի մէջ ինկան: Առաջինը՝ ուտելու փորձութիւնն է. Յիսուս քարը հաց չդարձուց ու չկերաւ, մինչդեռ Ադամ ու Եւա կերան արգիլեալ ծառին պտուղէն: Երկրորդը՝ փառասիրութիւնն է. Սատանան առաջարկեց Յիսուսին որ ինքզինք տաճարի աշտարակէն վար նետէ, որպէսզի տաճարի շրջափակը լեցնող բոլոր մարդիկը տեսնէին թէ ինչպէս հրեշտակներ զինք իրենց ձեռքերուն վրայ պիտի վերցնէին, եւ ատիկա պատճառ պիտի դառնար որ բոլորը փառաբանէին Յիսուսը: Յիսուս այս փորձութեան եւս տեղի չտուաւ. մինչդեռ, երբ Եւան Սատանայէն լսեց որ եթէ ուտեն ծառին պտուղէն՝ աստուածներու պէս պիտի ըլլան՝ իրենց մէջ փառասիրութիւն արթնցաւ եւ իսկոյն կերան: Երրորդը՝ ժլատութիւնն է, ամէն ինչ ունենալու փափաքն է, ամբողջին տիրելու իղձն է: Սատանան խոստացաւ Յիսուսին որ բոլոր թագաւորութիւնները իրեն պիտի տայ, եթէ երկրպագութիւն ու պաշտամունք մատուցանէ իրեն. Յիսուս կըտրուկ կերպով մերժեց ու վտարեց Չարը իր ներկայութենէն. մինչդեռ Ադամ ու Եւա, որոնց տրուած էր պարտէզին բոլոր ծառերը, անոնցմով չբաւարարուե-

ցան, այլ ուզեցին տէրը դառնալ ամբողջին, ուստի իրենց ձեռքը երկարեցին այն միակ ծառին որ արգիլուած էր իրենց:

7) Յովհաննէս Ոսկեբերան, առաջին փորձութիւնը կը կոչէ՝ փորի ստըրկութիւն, երկրորդը՝ սին փառքին համար գործել, իսկ երրորդը՝ հարստութեան ենթակայութիւն, եւ կ'ըսէ, թէ այս երեք փորձութիւնները իրենց մէջ կը խտացնեն բոլոր տեսակի փորձութիւնները:

«Այն ատեն Սատանան ձգեց զինք ու հեռացաւ. եւ ահա հրեշտակները մօտեցան եւ կը ծառայէին Յիսուսի» (Մտ 4.11):

1) Սատանան իր հիմնական երեք փորձութիւնները աւարտելէ ետք վերջնականապէս չհեռացաւ Յիսուսէն, այլ՝ «ժամանակուան մը համար» (Ղկ 4.13): Երբ Տէրը իր առաքելութեան սկսաւ, Սատանան մնայուն կերպով զինք փորձեց Սաղուկեցիներուն, Փարիսեցիներուն, Օրէնքի ուսուցիչներուն եւ քահանաներուն միջոցաւ: Սատանան կրնայ ժամանակուան մը համար հեռանալ մեզմէ եւ անձնապէս մեզ չփորձել, բայց ատիկա կ'ընէ իր երեւելի եւ աներեւոյթ արբանեակներուն միջոցաւ: Սիրինոս խօսելով այն մասին թէ ինչպէս սատանաները չեն դադրիր մեզի դէմ պայքարելէ՝ կ'ըսէ. «Չառ ոգիները տրամուրեան մէջ կ'իյնան, երբ մեր միջոցաւ կորսուին այն կորուստով որ մեզի համար կը ցանկան, բայց իրենց պարտութիւնը չի նշանակեր թէ մեզմէ կը հեռանան անվերադարձ»:

2) Երբ Յիսուս դէմ դրաւ փորձիչին ու փորձութեանց՝ փորձիչ Սատանան հեռացաւ իրմէ: Յակոբոս առաքեալ կ'ըսէ, որ եթէ դէմ դնենք շարախօսին՝ Սատանային, ան հեռու պիտի փախչի մեզմէ (Յկ 4.7):

3) Փորձութեանց աւարտին էր որ հրեշտակները մօտեցան Յիսուսի եւ սկսան ծառայել անոր, որպէսզի յանկարծ չխորհինք, որ հրեշտակները իրենք օգնեցին Յիսուսին յաղթելու փորձութեանց: Յիսուս հրեշտակներուն օգնութեան կարիքը չունէր, բայց մենք իբրեւ հողեղէն ու տկար արարածներ՝ անոնց օգնութեան կարիքը ունինք: Պօղոս առաքեալ կը վկայէ թէ հրեշտակները կ'օգնեն անոնց՝ որոնք պիտի ժառանգեն փրկութիւնը (Եբր 1.14):

4) Հրեշտակները սկսան ծառայել Յիսուսին, երբ անիկա յաղթեց փորձութիւններուն. նոյնպէս ալ, անոնք մեծ ցնծութեամբ կը ծառայեն մեզի, երբ տեսնեն որ կը պայքարինք փորձութեանց դէմ ու կը յաղթենք անոնց: Յերոնիմոս եւ Ոսկեբերան կը խօսին այն մասին՝ թէ ինչպէս հրեշտակները կը դիմաւորեն, կը պատուեն ու կը գնահատեն մեզ, երբ յաղթենք փորձութեանց:

5) Հրեշտակներուն գալը եւ Յիսուսի ծառայութիւն մատուցանելը, ցոյց կու տայ թէ Աստուծոյ Որդիին մարդեղացումէն ետք, չդադրեցաւ անոր հաղորդակցութիւնը երկինքին ու երկինքը լեցնող հրեշտակներուն հետ: Երբ

Տէրը երկիր իջաւ՝ երկինքի մէջ գտնուող հրեշտակները շարունակեցին ծառայել ու հնազանդիլ իրեն: Մտաբերենք թէ իր ծնունդին առիթով երկնաւոր զօրքերու մեծ բազմութիւն մը երեւցաւ եւ սկսաւ զԱստուած օրհնաբանել (Ղկ 2.13-14): Գեթսեմանիի պարտէզին մէջ հրեշտակ մը երեւցաւ իրեն եւ սկսաւ զինք զօրացնել (Ղկ 22.43): Իր յարութեան եւ համբարձման ատեն նաեւ հրեշտակներ երեւցան եւ աւետեցին իր յարութիւնն ու համբարձումը (Մտ 28.2-3: Ղկ 24.4: Մր 16.5: Գրծ 1.10):

«Երբ Յիսուս լսեց թէ Յովհաննէս բանտարկուեցաւ, մեկնեցաւ եւ գնաց Գալիլեա, եւ ձգելով Նազարէթը, եկաւ բնակեցաւ լիճին եզերքը գտնուող Կափառնաւում քաղաքը, Զաբուլոնի եւ Նեփթաղիմի սահմաններուն մէջ» (Մտ 4.12-13):

1) Յիսուս լսեց Յովհաննէս Մկրտիչի բանտարկութեան մասին: Տէրը կը տեսնէ ու կը լսէ իր զաւակներուն քաշած նեղութեանց ու կրած տառապանքին մասին:

2) Յովհաննէս բանտարկուեցաւ հիմնական երկու պատճառներով: Նախ, անոր համար որ վկայեց խոստացուած Մեսիային մասին, եւ երկրորդ, որովհետեւ յանդիմանեց Հերովդէս շորորդապետը (կոչուած նաեւ Հերովդէս Անտիպաս), իր Փիլիպպոս եղբոր կինը՝ Հերովդիան առած ըլլալուն համար (Մտ 14.3-5): Անոնք որոնք կը վկայեն Տիրոջ համար ու կը յանդիմանեն մեղքը՝ անպայման որ պիտի հալածուին:

3) Մէկ կողմէ Յովհաննէսի բանտարկութեան լուրը, իսկ միւս կողմէ՝ Նազարէթի բնակիչներուն անհաւատութիւնը իր անձին ու իր ուսուցումներուն հանդէպ, պատճառ դարձան որ Յիսուս ձգէր Նազարէթը եւ գար ու Կափառնաւումի մէջ բնակէր: Յիսուս կը հեռանայ այն մարդոցմէն որոնք կը մերժեն հաւատալ իրեն:

4) «Բնակեցաւ լիճին եզերքը գտնուող Կափառնաւում քաղաքը»: Խօսքը Գալիլեայի լիճին մասին է, որ ճանչցուած էր նաեւ «Տիբերիայի լիճ» (Յճ 6.1), եւ «Գեննեսարէթի լիճ» (Ղկ 5.1) անուններով¹:

5) Յիսուս բնակեցաւ Կափառնաւումի մէջ, հաւանաբար Պետրոսի տանը մէջ, թէպէտ ոմանք կը խորհին որ իր հայրը Յովսէփ հոն տուն մը ունէր եւ Յիսուս հոն էր որ բնակեցաւ: Ուր ալ բնակած ըլլայ Յիսուս, ատիկա իր մնայուն տեղը չէր կրնար ըլլալ, որովհետեւ ան չէր եկած մնայուն բնակութիւն հաստատելու տեղ մը, այլ շրջելու եւ Աստուծոյ արքայութիւնը քարոզելու: Ան ոեւէ ատեն՝ ոեւէ մէկուն տունը կրնար մնալ: Օրինակ, առիթով մը զիշերեց Զակքէոսի տունը (Ղկ 19.5):

¹ Տե՛ս Մտ 8.18-ի բացատրութիւնը, թիւ 1:

6) Յովհաննէս Մկրտիչ բանտարկութեամբ կամ այլ ձեւով պէտք էր քաշուէր հրապարակէն, որպէսզի հրապարակը ամբողջութեամբ մնար Քրիստոսի: Յովհաննէս ինքն իսկ հաստատեց այս իրողութիւնը. «Ասկէ ետք իր հեղինակութիւնը պէտք է գորանայ, իսկ ես հրապարակէ պէտք է քաշուիմ» (Յճ 3.30): Յովհաննէս ժողովուրդին կողմէ սիրուած ու ճանչցուած քարոզիչ մըն էր եւ կրնար շփոթուիլ խոստացուած Քրիստոսին (Օծեալին) հետ, ուստի, պէ՛տք էր որ քաշուէր առաքելութեան դաշտէն: Ներսէս Շնորհալի դիտել կու տայ, թէ «Յովհաննէս պարտ էր որ լռէ՝ որպէսզի Քրիստոս սկսէ իր նոր քարոզութեան»: Հոգեւոր առումով խորունկ ճշմարտութիւն մը կը գտնենք այստեղ. ոեւէ քարոզիչ լռե՛լ պէտք է սորվի, որպէսզի Յիսուս ինք խօսի: Երբ կ'ըսեմ թէ քարոզիչը լռե՛լ պէտք է սորվի, ըսել կ'ուզեմ, թէ ան մարդիկը դարձի բերելու համար՝ պէտք չէ իր լեզուի ճարտարութեան կամ խօսքի զօրութեան վստահի, այլ պէտք է վստահի Քրիստոսի առաջնորդութեան եւ Սուրբ Հոգիի ներգործող զօրութեան, ինչպիսին էր Յովհաննէս Մկրտիչ: Մարդիկը դարձի բերելու համար զօրութեան կարիքը չունինք, այլ՝ Սուրբ Հոգիի կարիքը. «Զօրութեամբ չէ եւ ուժով չէ, հապա իմ Հոգիով, կ'ըսէ զօրեւոր Տէրը» (Զք 4.6): Եկեղեցի յաճախողներուն թիւը աւելցնելը հովիւին պարտականութիւնն է, բայց եկեղեցիին մէջ փրկուածներուն թիւը աւելցնելը՝ Քրիստոսի գործը (Գրծ 2.47): Հաւատացեալներ կ'աւետարանէին Յիսուսը, բայց Յիսուս ինքն էր որ կ'օգնէր անոնց եւ մեծ թիւով մարդիկ դարձի կը բերէր (Գրծ 11.20-21):

«Այսպիսով իրականացաւ այն՝ ինչ որ Տէրը կ'ըսէ Եսայի մարգարէին բերնով. "Ո՛վ երկիր Ջաբուղոնի, ո՛վ երկիր Նեփթաղիմի, ճամբայ՝ որ ծովէն Յորդանան գետ կը տանի. դո՛ւն, Գալիլեա՛, հեթանոսներու երկիր"» (Մտ 4.14-15):

1) Ջաբուղոնն ու Նեփթաղիմը Իսրայէլի 12 ցեղերէն էին, եւ կը բնակէին Գալիլեայի հիւսիս-արեւելեան կողմը: Յովհաննէս Մկրտիչի բանտարկութենէն ետք, Յիսուս ձգեց Նազարէթը եւ գնաց բնակեցաւ Գալիլեա նահանգի Կափառնաում քաղաքը, որ Գալիլեայի լիճին հիւսիս-արեւմտեան ափին ըլլալով՝ կը գտնուէր Ջաբուղոնի եւ Նեփթաղիմի սահմաններուն մէջ (Մտ 4.12-14): Զուր տեղ չէ որ Յիսուս իր քարոզութեան կը սկսի Ջաբուղոնէն ու Նեփթաղիմէն. երկու պատճառներ կան. –

ա) Աստուած Եսայի մարգարէին միջոցաւ յայտնած էր, որ թէեւ ժամանակին անարգութեան Ջաբուղոնի եւ Նեփթաղիմի երկիրները, եւ սակայն, ժամանակներու աւարտին, երբ Տէրը պիտի ծնէր ու աշխարհ՝ զար՝ «պիտի փառաւորէր» զանոնք, իրենցմէ ու իրենց քովէն սկսելով իր քարոզութեան եւ փրկութեան աւետիսի տարածման (Ես 9.1-2):

բ) Մովսէս մարգարէն իր վախճանումէն առաջ երբ օրհնեց Իսրայէլի 12

ցեղերը, Ջաբուղոնի համար ըսաւ, թէ անոր բնակիչները լեռ պիտի հրաւիրուին (դէպի Քրիստոս բարձրանալու), հոն արդարութեան զոհեր պիտի մատուցանեն (անոնցմէ շատերը Քրիստոսով պիտի արդարանային), ծովերու առատութենէն պիտի կշտանան (Քրիստոսի ծովածաւալ սիրով ու շնորհքով պիտի կշտանային), եւ աւազի ծածուկ գանձերը պիտի ծծեն (իրենց համար երկինքի մէջ գանձեր պիտի դիզէին) (Բ.Օր 33.18-19), իսկ Նեփթաղիմի համար ըսաւ, թէ անիկա Աստուծոյ շնորհքովը պիտի կշտանայ (լայնօրէն պիտի բացուէին Քրիստոսի փրկարար շնորհքին), եւ Տիրոջ օրհնութեամբ պիտի լեցուի (Տիրոջ փրկութեան օրհնութիւնը պիտի ստանային եւ Տէրը պիտի օրհնէին) (Բ.Օր 33.23):

2) «Գալիլեա՛, հեթանոսներու երկիր»: Գալիլեան լեցուն էր հեթանոսներով: Հրեաներ չէին յարաբերեր անոնց հետ, եւ ոչ ալ հոն բնակող Հրեաներուն հետ: Անոնք չէին հաւատար որ Գալիլեայէն մարգարէ կրնար դուրս գալ (Յհ 7.52): Աստուած սակայն պատուեց Գալիլեան: Իր Որդիին մայր ընտրեց Մարիամը, որ Գալիլեայի Նազարէթ քաղաքէն էր (Ղկ 1.26-27): Հո՛ւ էր որ ապրեցան Յիսուս մանուկը, Մարիամն ու Յովսէփը (Մտ 2.22-23: Ղկ 2.39): Հո՛ւ էր որ Յիսուս գործեց իր առաջին հրաշքը եւ իր փառքը յայտնեց (Յհ 2.11): Փիլիպպոս «Գալիլեայի Բեթսայիդա քաղաքէն էր» (Յհ 12.20): Պետրոս, Անդրէաս, Յակոբոս ու Յովհաննէս նաեւ Գալիլեացի էին (Մտ 4.18-22): Շատ Գալիլեացիներ ընդունեցին Յիսուսը (Յհ 4.45): Յիսուսի առաջին հետեւորդները Նազովրեցիներ (Գալիլեայի քաղաք) անունով ճանչցուեցան (Գրծ 24.5): Աղախին մը Յիսուսը կոչեց Գալիլեացի (Մտ 26.69): Յիսուս ոչ միայն իր առաքելութեան սկսաւ Գալիլեայի նահանգէն, այլ հոն ալ աւարտեց իր առաքելութիւնը. իր յարութենէն ետք երբ երեւցաւ որոշ կիներու, անոնց պատուիրեց որ երթան եւ իր աշակերտներուն ըսեն, թէ զինք Գալիլեայի մէջ պիտի տեսնեն (Մտ 28.10,16-17): Յիսուս Գալիլեա նահանգի Ջաբուղոն ու Նեփթաղիմ քաղաքներէն սկսելով իր առաքելութեան, բացայայտեց թէ ինք հաւատարիմ Աստուած է, եւ թէ չէր կրնար մոռնալ, թէ ինք խոստացած էր Հրեաներու «հայրերուն՝ Աբրահամի եւ անոր զաւակներուն», թէ ինք պաշտպան պիտի ըլլար «իւր ծառային՝ Իսրայէլի, հաւատարիմ մնալով իւր ողորմութեան», ինչպէս Մարիամ ըսաւ իր օրհներգութեան մէջ (Ղկ 1.54-55): Այս իրողութիւնը մեզ կը հրաւիրէ վստահելու Աստուծոյ խոստումներուն, հաւատքով կառչելու անոնց եւ անոնց կատարումը պահանջելու:

«Այն ժողովուրդը որ խաւարի մէջ կ'ապրէր, մեծ լոյս մը տեսաւ. եւ մահուան աշխարհին ու շուփին մէջ ապրողներուն վրայ լոյս ծագեցաւ» (Մտ 4.16):

1) «Ժողովուրդ» բառով նկատի ունի ամբողջ աշխարհը: «Խաւար»ը որուն մէջ կ'ապրէր կամ կը նստէր ժողովուրդը՝ տեսանելի խաւարը չէ, այլ՝ մոլո-

րութեան եւ անգիտութեան խաւարը, որ «մահուան շուք» կը կոչուի, այսինքն՝ շաւիտենական մահուան պատճառ: «Լոյս»ը նիւթական լոյսը չէ, այլ՝ ճշմարիտ գիտութեան լոյսը, [որ աստուածգիտութեան լոյսն է], որ միայն մտքին համար տեսանելի է: «Լոյս»ը «մեծ» կը կոչուի, որովհետեւ ակնարկութիւն է աշխարհի լոյսին՝ Քրիստոսի (Յհ 8.12): Կրնանք ըսել, նաեւ, թէ մարգարէին խօսքին առաջին մասը կը վերաբերի Հրեաներուն, իսկ երկրորդ մասը՝ հեթանոսներուն: Որովհետեւ, «Իսաւարի մէջ ապրող (նստող) ժողովուրդը մեծ լոյս տեսաւ» խօսքը Հրեաներուն կը պատշաճի, որոնք, թէպէտ ունէին Օրէնքին ճրագը, եւ սակայն օրինագանց ըլլալով՝ չէին կրնար անով լուսաւորուիլ: Իսկ «մահուան աշխարհին ու շուքին մէջ ապրող [նստող]» խօսքը հեթանոսներուն կը պատշաճի, որոնք այս աշխարհի տարերքներու ծառայութեան ներքեւ կը գտնուէին, եւ նստած էին կռապաշտութեան մէջ, այսինքն՝ մահուան շուքին մէջ: Մարգարէն Հրեաներուն համար չի խօսիր «մահուան շուքի» մասին, որովհետեւ անոնք կը ճանչնային ճշմարիտ Աստուածը: Անոնք «մեծ լոյս տեսան», այսինքն՝ տեսան Քրիստոսը իրենց մարմնաւոր աչքերով: Իսկ հեթանոսներուն համար չ'ըսեր «տեսան», այլ կ'ըսէ՝ «անոնց վրայ լոյս ծագեցաւ», եւ այդ Լոյսը Քրիստոսն էր, որ ծագեցաւ անոնց վրայ առաքեալներուն միջոցաւ, որոնք լոյս անուանուեցան Քրիստոսի կողմէ (Մտ 5.14): (Ներսէս Շնորհալի):

2) «Խաւար»ի մէջ նստող, այլ խօսքով՝ ապրող կը կոչուի Հրեայ ժողովուրդը, որովհետեւ հեռացած էր Աստուծմէ եւ անոր խօսքէն, որ իր ոտքերուն համար ճրագ եւ իր շաւիղներուն համար լոյս պէտք էր ըլլար (Սղ 119.105): Յիսուս եկաւ խաւարէն լոյսի բերելու Հրեաները եւ բոլոր մարդիկը: Եկաւ խաւարի բնակիչները՝ լոյսի բնակիչ դարձնելու: Առանց Աւետարանի լոյսին՝ խաւարի մէջ ենք:

«Կ'ապրէր». (բառացի՝ «նստած էր»): Մարդ ուր որ կը նստի՝ հոն կ'ապրի: «Նստիլ» բառը ցոյց կու տայ, որ Հրեաներ կամովին ընտրած էին խաւարի մէջ ապրիլ:

«Մահուան աշխարհ»ը՝ մեղքին բերած դատապարտութիւնն է, իսկ «մահուան շուք»ը՝ մեղքին իշխանութիւնը: Անոնք որոնք չեն ընդունիր անմահ Փրկչին փրկութիւնը՝ մահուան աշխարհին մէջ են. եւ անոնք որոնք չեն ապրիր Քրիստոսի խաչին շուքին ներքեւ՝ մեղքի շուքին ներքեւ են: Առանց Անմահին արիւնով սրբուելու՝ ո՛չ ոք կրնայ դուրս գալ մահուան աշխարհէն, եւ առանց Անմեղին դիմաց մեր մեղքերը խոստովանելու՝ ո՛չ ոք կրնայ ձերբազատիլ մեղքի իշխանութենէն:

«Լոյս»ին համար գործածուած «մեծ» բառը կը պարզէ փրկութեան Աւետարանին փրկարար ուժը՝ մարդէս ներս թափանցելու ու մարդս փոխակերպելու զօրութիւնը: Առանց Աւետարանին լոյսին՝ մարդու սիրտը մեղքի խաւարին մէջ կ'ապրի:

3) Համարը ժողովուրդը կը բաժնէ երկու մասի, մէկ մասին համար կ'ըսուի թէ տեսաւ մեծ լոյսը, իսկ երկրորդ մասին համար կ'ըսուի թէ լոյսը ինք ծագեցաւ անոր վրայ: Երբ կը հաստատուի թէ ժողովուրդը մեծ լոյս մը տեսաւ, խօսքը այն մարդոց մասին է՝ որոնք այդ լոյսը տեսնելու կարողութիւնը ունին, իսկ երբ կ'ըսուի «լոյս ծագեցաւ» ժողովուրդին վրայ, խօսքը այն մարդոց մասին է՝ որոնք այդ լոյսը տեսնելու կարողութիւնը չունին: Ան որ տեսնելու կարողութիւնը ունի՝ պէտք է տեսնէ Քրիստոսի լոյսը, իսկ ան որ Քրիստոսի լոյսը տեսնելու անկարող է՝ Քրիստոս ինք կ'երթայ ու կը ծագի անոր վրայ: Բան մը որ մենք կրնանք ընել՝ չակնկալենք որ Տէրը մեր փոխարէն ընէ:

«Այդ օրէն Յիսուս սկսաւ քարոզել, ըսելով. "Ապաշխարեցէ՛ք, որովհետեւ երկինքի արքայութիւնը մօտեցած է"» (Մտ 4.17)²:

1) Յունարէնի մէջ «ապաշխարութիւն» բառին համար գործածուած «մեթանոեաս» բառը կը նշանակէ երկու բան.–

ա) Ընթացքի փոփոխութիւն: Պենտէկոստէի օրը, մարդիկ ցնցուած Պետրոս առաքեալի տուած պատգամէն՝ հարցուցին. «Ի՞նչ պէտք է ընենք, ո՛վ եղբայրներ»: Պետրոս պատասխանեց. «Ձեր ընթացքը փոխելու մասին: Զանոնք կը հրաւիրէր հաւատալու Քրիստոսի ու մկրտուելու Քրիստոսի անունով: Արդարեւ, անոնք պէտք էր փոխէին իրենց կեանքի ընթացքը: Պէտք էր Մովսիսական Օրէնքէն՝ դառնային Քրիստոսի շնորհքին: Պէտք էր կենդանական զոհերէն՝ դառնային իրենց փրկութեան զոհին՝ Քրիստոսի: Պէտք էր իրենց հայրերու աւանդութենէն՝ դառնային իրենց հայրերու Աստուծոյն: Պէտք էր օրէնքներու գործադրութեամբ փրկուելու մտածումէն՝ դառնային Քրիստոսի հաւատքով փրկուելու հաւատքին: Առաքեալը յստակօրէն կը պարզէ, թէ ոեւէ անձ որ դարձի կու գայ Քրիստոսի, կը փոխուի անոր կեանքի ընթացքը (Կղ 3.7-10: Եփ 4.28):

բ) Մտքի նորոգութիւն: Պօղոս առաքեալ խօսելով մտքի նորոգութեան մասին՝ կ'ըսէ. «Այս աշխարհի մարդոց վարմունքը մի՛ ընդօրինակէ՛ք, այլ նորոգուած միտքերով նոր մարդ եղէ՛ք, որպէսզի ձեր փորձառութեամբ ընտրէ՛ք լաւ, գիտնալով Աստուծոյ կամքը, այսինքն՝ ինչ որ բարի է, ընդունելի է իրեն եւ կատարեալ» (Հռ 12.2: Տե՛ս նաեւ՝ Եփ 4.23): Այս բառերով առաքեալը ցոյց կու տայ.–

– Թէ մտքի նորոգութիւն ապրած անձը կը դառնայ «նոր մարդ», որովհետեւ անոր մէջ կը մեռնի հին մարդը, այլ խօսքով՝ մեղքի մարդը, աշխարհիկ մարդը:

² Տե՛ս նաեւ Մտ 3.2-ի բացատրութիւնը:

- Մտքի նորոգութիւնն ապրած անձը կարող կը դառնայ «իր փորձառութեամբ ընտրելու լալը»: Իսկ լալը՝ Մարիամի նման ընտրելն է այն բաժինը, որ բնաւ ետ պիտի չառնուի մեզմէ (Ղկ 10.42):

- Մտքի նորոգութիւնն ապրած անձ մը կրնայ գիտնալ Աստուծոյ կամքը, այլ խօսքով՝ կրնայ գիտնալ թէ ո՞ր մէկը բարի է, եւ ո՞ր մէկը՝ չար, ո՞ր մէկը ընդունելի է Աստուծոյ համար, եւ ո՞ր մէկը՝ անընդունելի, ո՞ր մէկը կատարեալ է, եւ ո՞ր մէկը՝ թերի:

Մտքի նորոգութիւնն ապրած ըլլալու ապացոյցը այն հոգեւոր պայքարն է՝ որ մտքի նորոգութիւնն ապրած անձը կ'ունենայ իր մարմինին ու մտքին միջեւ: Այս մասին Պօղոս առաքեալ կ'ըսէ. «Իմ մարմինիս անդամներուն մէջ կը տեսնեմ տարբեր օրէնք մը, որ իմ մտքիս ընդունած Օրէնքին դէմ կը պատեալուի ...» (Հռ 7.23): Մեր միտքը դէմ կը դնէ՞ այն ցանկութիւններուն որոնք յատուկ են մարմինին, այլ խօսքով՝ մեր մեղանշական բնութեան: Օրինակ, եթէ մեր մարմինը կապուած է երկրաւորին ու նիւթականին, ի՞նչ կ'ընէ մեր միտքը նման պարագայի. կը պայքարի՞ մեր մարմինին երկրասիրութեան ու նիւթապաշտութեան դէմ. եթէ չի պայքարիր՝ կը նշանակէ թէ մտքի նորոգութիւն չենք ապրած:

2) Յովհաննէս Մկրտիչի նման՝ Քրիստոս ինք եւս իր առաքելութիւնը սկսաւ «ապաշխարեցէ՛ք» կոչով: Այս կոչը ուղղուած է անշուշտ ամբողջ մարդկութեան, բայց առաջին հերթին եւ յատուկ կերպով Հրեաներուն, որովհետեւ անոնք Աստուծոյ կողմէ ընտրուած էին, բայց անհաւատարիմ գտնուած էին այդ ընտրութեան: Կանչուած էին Աստուծոյ օրէնքներուն գործադրութեան, բայց չէին գործադրած զանոնք: «Ապաշխարեցէ՛ք» կոչով, Յիսուս կարծէք անոնց կ'ըսէր. «Ապաշխարեցէ՛ք՝ Աստուծոյ եւ անոր ուխտին հանդէպ ձեր ցուցաբերած անհաւատարմութեան համար: Ապաշխարեցէ՛ք ու ցաւեցէ՛ք՝ Աստուծոյ օրէնքներուն ու պատուիրաններուն հանդէպ ձեր ցուցաբերած օրինազանցութիւններուն ու պատուիրանազանցութիւններուն համար: Ապաշխարեցէ՛ք ու զղջացէ՛ք՝ Աստուծոյ հանդէպ ձեր պարզած կամակորութեան, անտարբերութեան ու մեռածական կեցուածքին համար: Ապաշխարեցէ՛ք ու արցունք թափեցէ՛ք՝ Աստուծոյ սիրտը կոտրած ու անոր հոգին տրամեցուցած ըլլալնու համար: Ապաշխարեցէ՛ք, Աստուծոյ խօսքերէն աւելի՛ ձեր հայրերուն խօսքերուն հաւատացած ըլլալնու համար: Ապաշխարեցէ՛ք՝ Աստուծոյ սիրոյն ու կամքին կառչելէ աւելի՛ ձեր հայրերուն անանդութիւններուն կառչած ըլլալնու համար»: Բայց նոյն խօսքը այսօր մեզի ալ կ'ըսէ Տէրը. «Ապաշխարեցէ՛ք՝ Անմեղին դէմ ձեր գործած մեղքերուն համար: Ապաշխարեցէ՛ք, Աստուծոյ կամքին փոխարէն՝ ձեր կամքը կատարած ըլլալնու համար: Ապաշխարեցէ՛ք, երկինքէն աւելի՛ երկիրը սիրած ըլլալնու համար: Ապաշխարեցէ՛ք, Աննիւթական Հացին փոխարէն՝ նիւթական հացը հետապնդած ըլլալնու համար: Ապաշխարեցէ՛ք՝ Աստուծոյ սուրբ ու սրբարար մարմինն ու արիւնը

ձեր պիղծ ձեռներուն ու բերաններուն մէջ առած ըլլալնուդ համար: Ապաշխարեցէ՛ք, ձեր հաւաափի Հիմնադիրին հանդէպ՝ ձեր ցուցաբերած անհաւատութեան համար: Ապաշխարեցէ՛ք, իմ հովուական ձայնիս դիմաց՝ ձեր ականջները փակած ըլլալնուդ համար: Ապաշխարեցէ՛ք, իմ համբայէս փալելու փոխարէն՝ Սատանայի համբայէն փալած ըլլալնուդ համար: Ապաշխարեցէ՛ք, իմ ձեռքէս բռնելու փոխարէն՝ Սատանային ձեռքէն բռնած ըլլալնուդ համար: Ապաշխարեցէ՛ք, իմ խօսքերէս ատելի՝ մարդոց ու գիտնականներու խօսքերուն հաւատացած ըլլալնուդ համար: Ապաշխարեցէ՛ք, փառքէս ատելի՝ ձեր փառքը փնտռած ըլլալնուդ համար: Ապաշխարեցէ՛ք, զիս մեծարելու փոխարէն՝ ձեր նմանները մեծարած ըլլալնուդ համար: Ապաշխարեցէ՛ք, բարեգործութեան համար ձեզի տուած ժամանակս՝ չարագործութեամբ անցուցած ըլլալնուդ համար: Ապաշխարեցէ՛ք, խաչին վրայ հեղած արեանս հանդէպ՝ ձեր անտարբերութեան համար: Ապաշխարեցէ՛ք՝ մինչեւ հիմա փրկութեան հրաւերիս ընդառաջած չըլլալնուդ համար: Ապաշխարեցէ՛ք, երկնաւոր գթառատ Հօրս հանդէպ՝ ձեր յայտնաբերած անգութ վերաբերմունքին համար: Ապաշխարեցէ՛ք, ձեր զգուելի մեղքերով՝ Սուրբ Հոգին ձեզմէ հեռացուցած ըլլալնուդ համար: Ապաշխարեցէ՛ք՝ կտորած հոգիները բուժած չըլլալնուդ համար, թուցած ձեռքերը զօրացուցած չըլլալնուդ համար, հոսող արցունքները սրբած չըլլալնուդ համար, սգաւոր սիրտերը մխիթարած չըլլալնուդ համար, անտէրին տէր կանգնած չըլլալնուդ համար»:

3) Մենք պէտք է ապաշխարենք՝ ո՛չ թէ որպէսզի մեր մեղքերը սրբուին ու փրկուինք, այլ որովհետեւ մեր մեղքերով մենք ցաւցուցած ու անարգած ենք մեր գորովալից երկնաւոր Հայրը, մեր գթառատ Փրկիչը, եւ մեր կեանքն ու մխիթարութիւնը՝ Սուրբ Հոգին: Աստուած սոսկ դատաւոր մը չէ, որուն դիմաց պէտք է զղջալ ու արցունք թափել, որպէսզի ներում ձեռք ձգենք, այլ հայր է, սիրելի՛ հայր, եւ մենք պէտք է ցաւինք՝ երբ զինք ցաւցնենք մեր մեղքերով:

ՎԱՂԻՆԱԿ Ծ. ՎՐԴ. ՄԵԼՈՅԵԱՆ

(Շար. 11)

ՊԱՏՄԱ.-ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐԱԿԱՆ

90-ԱՄԵԱՅ ՀՈՒՆՁՔԸ ՄԵԾԻ ՏԱՆՆ ԿԻԼԻԿԻՈՅ ԿԱԹՈՂԻԿՈՍՈՒԹԵԱՆ ԴՊՐԵՎԱՆՔԻՆ

Տ. ՀՐԱՆԴ ԱՐՔ. ԽԱՉԱՏՈՒՐԵԱՆ 1926-1980

Ծնած է 1926-ին, Հալէպ (Սուրիա): Աւագանի անունն է Յարութիւն: Նախնական կրթութիւնը ստացած է ծննդավայրի Ազգ. Հայկազեան Վարժարանին մէջ: Մեծի Տանն Կիլիկիոյ Կաթողիկոսութեան Դպրեվանք ընդունուած է 1940-ին:

Աւարտելէ ետք դպրեվանքի ժառանգաւորացի քառամեայ շրջանը, 11 Յունիս 1944-ին Սարկաւազ ձեռնադրուած է, ձեռամբ Եփրեմ Արք. Տոհմունիի:

Յարութիւն Սարկաւազ իր ուսումը շարունակելով աւարտած է դպրեվանքի Ընծայարանի բաժինը: Ապա տարի մը բացակայելով դպրեվանքէն՝ 1946-1947, որպէս ուսուցիչ դասուանողած է Ամմանի Ազգ. Վարժարանին մէջ, ապա վերադարձած է դպրեվանք եւ Կուսակրօն Եկեղեցական ձեռնադրուած՝ 6 Յունիս 1948-ին, ձեռամբ Լիբանանի Հայոց Կաթողիկոսական Փոխանորդ Խաղ Արք. Աշապահեանի եւ վերակոչուած՝ Տ. ՀՐԱՆԴ ԱՐԵՂԱՅ:

Հայր Հրանդ այնուհետեւ Մայրավանքէն ներս զանազան պաշտօններ ստանձնած է, միաժամանակ հետեւելով Լիբանանի Պետական Երաժշտանոցի դաշնամուրի եւ հարմոնիի դասընթացքներուն (1947-1948): Հայ եկեղեցական եւ աշխարհիկ երաժշտութեան հանդէպ ունեցած իր մասնաւոր ընդունակութիւնը, այս ձեւով ան զարգացուցած է եւ իր հմայիչ ձայնով սատարած՝ Մայր Տաճարի երգեցողութեան եւ դպրաց դասու գորացման:

1952 Փետրուարին Միացեալ Նահանգներ մեկնած է հոգեւոր առաքելութեամբ եւ ստանձնած՝ Մէսէշուէթ նահանգի Հէյվըրհիլ քաղաքի հայ համայնքին հոգեւոր հովուութիւնը:

1957-ին, Միացեալ Նահանգներու Հայց. եկեղեցւոյ անտեսուած համայնքներու Ազգ. Երեսփոխանական Ժողովը խնդրագրով մը դիմած էր Զարեհ Ա. Կաթողիկոսին, Մեծի Տանն Կիլիկիոյ Կաթողիկոսութեան հոգեւոր թէ վարչական հովանաւորութեան տակ առնելու այդ համայնքները:

Երբ Վեհափառ Հայրապետի Սրբատառ Կոնդակով Թեմը մտած է Տանն Կիլիկիոյ հոգեւոր թէ վարչական իրաւասութեան ներքեւ, 15 Հոկտեմբեր 1957-ին Լիբանանի Թեմի Հայոց Առաջնորդ Խորէն Արք. Բարոյեան, որպէս Հայրապետական Պատուիրակ, մեկնած է Միացեալ Նահանգներ՝ ձեւակերպելու եւ կազմակերպելու թեմական աշխատանքները:

Այս առիթով, Հայր Հրանդ, որպէս հաւատարիմ միաբան Մեծի Տանն Կիլիկիոյ Ս. Աթոռին, միացած է Պատուիրակին, յայտնելով իր հաւատարմութիւնը Ս. Աթոռի Գահակալին եւ պատրաստակամութիւնը՝ ծառայելու նորակազմ թեմին մէջ:

Խորէն Արք. Բարոյեան երբ կը գտնուէր Ուոթըրթաունի Ս. Ստեփանոս Եկեղեցւոյ մէջ, 22 Հոկտեմբեր 1957-ին Վարդապետական Գաւազանի իշխանութիւն շնորհած է Հայր Սուրբին:

Յետ այնորիկ, Հրանդ Վարդապետ հրաժարելով իր հովուական պաշտօնէն, ընկերակցած է Պատուիրակ Սրբազանին՝ այցելելով Միացեալ Նահանգներու հոգեւոր համայնքները եւ ապա 16 Յունիս 1958-ին, Խորէն Սրբազանին հետ վերադարձած է Մայրավանք:

Զարեհ Ա. Կաթողիկոս գնահատելով Հրանդ Վարդապետի հաւատարմութիւնը Ս. Աթոռին նկատմամբ, 27 Հոկտեմբեր 1958-ին, կաթողիկոսարանի Մայր Տաճարին մէջ Մայրագոյն Վարդապետութեան իշխանութիւն շնորհած է անոր: Իսկ 2 Նոյեմբեր 1958-ին՝ Եպիսկոպոս ձեռնադրած եւ օծած է:

Հրանդ Եպս. Խաչատուրեան Մայրավանքէն ներս նշանակուած է լուսարարապետ Մայր Տաճարի: Կեանքը ընդելուզելէ ետք վանաբնակ միաբանութեան կեանքին, հոգեւոր առաքելութեամբ այցելութիւններ տուած է Կիլիկեան Թեմերուն (Լիբանան, Հալէպ եւ Կիպրոս):

Խորէն Արք. Բարոյեան, դարձեալ որպէս Հայրապետական Պատուիրակ, Միացեալ Նահանգներ մեկնած է, թեմին համար Առաջնորդարան մը ապահովելու եւ Առաջնորդի ընտրութիւնը կազմակերպելու յանձնարարութեամբ: 22 Ապրիլ 1959-ին եւ 9 Մայիս 1959-ին իր նախագահութեամբ գումարուած Ամերիկահայ Թեմի Ազգային Կեդրոնական Վարչութիւնը Առաջնորդական Տեղապահ ընտրած է Հրանդ Եպս. Խաչատուրեանը:

Հրանդ Եպս. Խաչատուրեան իր նոր պաշտօնատեղին մեկնած է 6 Յուլիս 1959-ին: Յաջորդող օրերուն ան ստանձնած է իր պաշտօնը եւ 15 Օգոստոս 1959-ին, Հայրապետական Պատուիրակ Խորէն Արք. Բարոյեանի նախագահութեամբ, Ազգային Իշխանութեան եւ ազգայիններու ներկայութեան բացումը կատարուած է Նիւ Եորքի մէջ Ամերիկահայոց Ազգ. Առաջնորդարանին:

Ամերիկահայոց Թեմի Ազգային Երեսփոխանական Ժողովը, գնահատելով Հրանդ Եպիսկոպոսի արդիւնաւոր գործունէութիւնը, իր 11 Նոյեմբեր 1961-ի

նիստին, գումարուած Տիթրոյթի մէջ, գայն ընտրած է Ամերիկահայ Կիլիկեան Թեմի Առաջնորդ:

Այնուհետեւ, Հրանդ Եպս. Խաչատուրեան շուրջ 14 տարի շարունակաբար, մինչեւ 20 Սեպտեմբեր 1973, աննահանջ հետեւողութեամբ եւ մեծ եռանդով վարած է ամերիկահայոց ընդարձակ թեմին եկեղեցական, վարչական, մշակութային եւ կրթական աշխատանքները, այս նպատակին համար իրագործած նոր եկեղեցիներու հողամասերուն գնումն ու եկեղեցիներու կառուցման աշխատանքը:

Իր Առաջնորդութեան օրով կառուցուած եւ օծուած են Տիթրոյթի Ս. Սարգիս, Ֆիլատելֆիոյ Ս. Գրիգոր Լուսաւորիչ, Էնսինոյի (Գալիֆորնիա) Սրբոց Նահատակաց, Ուաշինկթըն Տի. Սիի Ս. Խաչ, Ալպընիի Ս. Խաչ, Պէյ Սայտի Ս. Սարգիս, Սփրինկֆիլտի Ս. Գրիգոր Լուսաւորիչ, Օհայոյի Ս. Խաչ, Մոնթրէալի Ս. Յակոբ եւ Սան Ֆրանսիսքոյի Ս. Գրիգոր Լուսաւորիչ եկեղեցիները, եւ այս եկեղեցիները օժտուած են երիտասարդ եկեղեցականներով:

Շնորհիւ իր անսակարկ նուիրումին, ան յաջողած է իր աջակցութիւնը բերել Հայաստանեայց Եկեղեցւոյ շուրջ հաւաքուած երիտասարդական կազմակերպութեանց՝ հոգեւոր, բարոյական եւ մշակութային վերելքին:

Խորէն Ա. Կաթողիկոս Մեծի Տանն Կիլիկիոյ, գնահատելով Սրբազան Հօր ծառայութիւնն ու գործունէութիւնը, 1964-ին Արքութեան պատիւ եւ տիտղոս շնորհած է իրեն:

Հրանդ Սրբազանի Առաջնորդութեան շրջանին, թեմական աշխատանքներու ընդարձակման եւ յատկապէս Գալիֆորնիոյ շրջանի ազգային-եկեղեցական կեանքին նոր թափ տալու մտասեւեռումով, Կիլիկիոյ Ս. Աթոռին Ազգային Ընդհ. Ժողովը, 1972-ի Հոկտեմբեր 23-26-ի ընթացքին գումարուած ժողովի նիստերուն, որդեգրած է Միացեալ Նահանգներու մէջ երկու առանձին թեմեր ունենալու սկզբունքը: Առ այդ, Գալիֆորնիան առանձին թեմ դառնալով ունեցած է իր Առաջնորդը եւ Սահմանադրական ժողովները:

Հրանդ Արք. Խաչատուրեան առաջնորդական իր պաշտօնը վարած է մինչեւ 20 Սեպտեմբեր 1973: Թեմի Ազգ. Երեսփոխանական Ժողովին առաջարկով, 21 Յունիս 1973-ին Ամերիկայի Արեւելեան Թեմի Կաթողիկոսական Փոխանորդի պաշտօնին հրաւիրուած է Իրանա-Հնդկաստանի Թեմի Առաջնորդ Գարեգին Արք. Սարգիսեանը (Յետագային Կաթողիկոս Տանն Կիլիկիոյ եւ ապա Կաթողիկոս Ամենայն Հայոց), որ իր պաշտօնը ստանձնած է 21 Սեպտեմբեր 1973-ին:

Առաջնորդական պաշտօնէն ազատ կացուցուելէ ետք, Հրանդ Սրբազան գովելի մտածումով մը իր բարձրագոյն ուսումը ստանալու համար նախ ուսանած է Ալպընիի կաթողիկ Սէյնթ Էնթընի Ան Հատսըն Ֆրանսիսքըն Հոգեւոր

Ճեմարանին մէջ եւ յաջողութեամբ աւարտելէ ետք՝ տիրացած Մագիստրոսի տիտղոսին:

Ապա, Բրաւիտընսի կաթոլիկ Բրաւիտընս Գոլէճի մէջ շարունակելով իր բարձրագոյն ուսումը, տիրացած է Փիլիսոփայութեան Դոկտորի տիտղոսին, այս առիթով իբրեւ աւարտաճառ ներկայացուցած է հայ պատմագիրներու մասին պատրաստուած ուսումնասիրութիւն մը:

Սրբազանին կեանքը երկար չէ եղած: Տարիներ առաջ արդէն սիրտը տկարութեան նշաններ ցոյց տուած էր. եւ 27 Յունուար 1980-ին, յետ կարճատեւ հիւանդութեան, հիւանդանոցի խնամատարութեան ներքեւ աւանդած է իր հոգին:

Վերջին Օծման կարգը տեղի ունեցած է Նիւ Եորքի Ս. Լուսաւորիչ Եկեղեցւոյ մէջ, 31 Յունուար 1980-ին, ձեռամբ Միացեալ Նահանգներու Արեւելեան Թեմին Առաջնորդ Գերշ. Տ. Մեսրոպ եպս. Աշճեանին:

Վախճանեալ Սրբազանին մարմինը օգային ճամբով փոխադրուած է Անթիլիաս: Դագաղին ընկերակցած են Հիւսիսային Ամերիկայի Արեւելեան Թեմի Առաջնորդ Մեսրոպ Արք. Աշճեան, Զարեհ Քհն. Մարոնեան եւ Վախճանեալի եղբայրը՝ պրն. Անդրանիկ Խաչատուրեան:

Թաղմանական կարգը տեղի ունեցած է 3 Փետրուար 1980-ին: Յետ ծիսական արարողութեանց, դագաղը փոխադրուած է իր վախճանական հանգըստավայրը՝ Զարեհեան Դամբարանի ներքնամաս՝ միաբանութեան բաժինը:

ՍՈՒՐԷՆ ԱՐՔ. ԳԱԹԱՐՈՅԵԱՆ

(Շար. 19)



ՅՕԴՈՒԱԾՆԵՐ

**ՀԱՅ ԵԿԵՂԵՑԱԿԱՆ ԵՐԳԻՆ
ԾԱԳՈՒՄՆ ՈՒ ԶԱՐԳԱՅՈՒՄԸ**

**ՆԵՐՍԷՍ ՇՆՈՐՀԱԼԻ ԵՐԱԺԻՇՏԸ
ԵՒ Ս. ՊԱՏԱՐԱԳԻ ԵՐԳԵՑՈՂՈՒԹԻՒՆԸ**

Կրօնական քերթողութեան մէջ Գրիգոր Նարեկացի եւ Ներսէս Շնորհալի միասին կը յիշատակուին որպէս երկու գագաթներ, կրօնական երաժշտութեան կալուածին մէջ, սակայն Շնորհալի անգերազանցելի գագաթն է. եւ ասիկա ոչ միայն իր գրած շարականներուն, գանձերուն, տաղերուն ու մեղեդիներուն ներկայացուցած թիւին ու ծաւալին համար, այլ մանաւանդ այն բազմազանութեան որ ստեղծագործական տաղանդով յորդուն իր մեծ մտքին մասին կը վկայէ: Ի զուր չէ որ իր կենսագիրը հիացիկ բացազանչութեամբ մը կ'ըսէ. «Թէեւ հրաշալի էին իր երգերուն բառերը իմաստուն մտքերուն համար, բայց աւելի զարմանալի էր արուեստը բազմազան այն եղանակներուն, զորս կը յօրինէր իրարու անմասն, անսպառ եւ առատագոյն գանձարանի նմանող իր ճոխ եւ հարուստ մտքէն բխեցնելով զանոնք». եւ ի զուր չէ նաեւ, որ իրեն տուած են երգող մակդիրը: Բայց Շնորհալիի մեծութիւնը ասով չի բացատրուիր միայն: Ան երաժիշտ-յօրինողը չէ միայն, այլ երաժշտագէտ՝ բառին բուն իմաստովը եւ երաժիշտ-դաստիարակ միայնգամայն: Ծանօթ է որ ԺԲ. դարը բացառիկ ծաղկումի ժամանակաշրջանն է բոլոր տեսակի գիտութիւններուն համար՝ Հայաստանի եւ Կիլիկիոյ վանքերուն մէջ:

Այս ժամանակաշրջաններուն խազագիտութիւնը կը մտնէ նոր, երկրորդ հանգրուանի մը մէջ. երեւան կու գայ ձայնագրութեան աւելի կատարելագործուած դրութիւն մը, ճշգրտօրէն կարենալ արձանագրելու համար նոյնիսկ ութ-ձայնի դրութենէն դուրս ինկող ազատ ստեղծագործութիւնները: Շատ բնական է մտածել, որ Շնորհալիի պէս մեծ երաժիշտ մը հեռու կամ անմասն չէր կրնար մնալ այսպիսի բարեկարգական աշխատանքէ մը, մանաւանդ երբ նկատի առնենք որ իր եղբօր՝ Գրիգոր Պահլավունի Կաթողիկոսի խնդրանքով ինք ձեռնարկած էր եկեղեցական արարողութեանց եւ յատկապէս երգեցողութեան բարեկարգման, եւ միւս կողմէ քահանայութեան պատրաստուող թեկնածուներուն պայման կը դնէր «եկեղեցական գրուածքները ուղիղ կար-

դալ, ձայնի վերաբերեալ մանր ուսումները եկեղեցւոյ մէջ կատարել եւ ապա գալ քահանայական ձեռնադրութեան»:

Բայց խաղազրութիւնը կատարելագործող ու մասնագէտ-երաժիշտ Շնորհալին, միաժամանակ խոնարհ դաստիարակ մըն էր, որ Հայաստանի եւ Կիլիկիոյ զանազան կողմերէն Կաթողիկոսարանին շուրջ հաւաքուած եկեղեցւոյ պաշտօնեաներուն համբերութեամբ կ'ուսուցանէր շարականագիտութիւն ու խաղազրութիւն: Ինք անձամբ կ'ընդօրինակէ կամ կը պատրաստէ եւ անձամբ կ'ուսուցանէ զանոնք, հոգեւոր երաժշտութեան այդ գանձերուն հանդէպ անօրինակ նախանձախնդրութիւն եւ բծախնդրութիւն ցուցաբերելով: Չենք գիտեր, որ ի՛ր իսկ ձեռքով գրուած այդ շարականներէն կամ խաղազրութիւններէն բան մը հասա՞ծ է մեզի թէ ոչ: Բայց յոյսով ենք որ անոնցմէ ոմանք կը գտնուին օր մը անպայման եւ ձեռագրական բաղդատութիւններ երեւան կը բերեն նաեւ ա՛յս մարզին մէջ իր բերած նորութիւնները:

Գիտենք որ ընդհանրապէս եկեղեցական արարողութեանց բարենորոգման համար ինք օգտուեցաւ Մաքենեաց ուխտին ժամակարգութենէն, բայց յստակ կերպով չենք գիտեր, թէ Պատարագէն ալ բան մը բերա՞ւ:

«Ա-լէ» վանկերը այս ծանրածանր երգին վերջին Ալէուփա-ն կը ներկայացնեն: Մեզի կը թուի, թէ Շնորհալիի եղանակաւորումով է որ այս երգը մտած է հայկական պատարագամատոյցին մէջ, ինչ որ արդէն կը գտնենք Լամբրոնացիի քով: Լամբրոնացիի պատարագամատոյցին մէջ եղածը այսօրւան մեր ժամագիրքերուն մէջ եղածէն կը տարբերի, որովհետեւ այնտեղ կան նաեւ միջանկեալ շարականի տուներ:

ՊԱՏՄՈՒԹԻՒՆ ՀԱՅ ԶԱՅՆԱԳՐՈՒԹԵԱՆ

Հայ ձայնագրութեան հիմնադիրը հանդիսացող՝ Պապա Համբարձում Լիմոնճեան ծնած է 1768-ին Բերայի մէջ: Պոլսոյ ուսումնական վիճակը խիստ աննշան ըլլալուն պատճառով, հազիւ կրցած է թերի կրթութիւն մը ստանալ, եւ իր դեռահաս տարիքին մէջ ստիպուած է աշակերտութեան մտնել դերձակի մը քով, սակայն որովհետեւ իր կոչումն ու գաղափարները տարբեր էին այդ ասպարէզէն՝ շատ անգամ կ'ըմբոստանար վարպետին հրամանները գործադրելու միջոցին, մինչ միտքը կը փորձէր պահել եկեղեցական եղանակները: Դժբախտաբար Հ. Մինաս Բժշկեանի մանրամասն տեղեկութիւնները չունինք, զորս հաւաքած էր Մխիթարեանը՝ ժամանակակից ը-



լալով Հայ Ձայնագրութեան հեղինակին, որուն կենսագրութիւնն ալ իր հետ տարած էր՝ Վենետիկ մեկնած ատեն:

Այն ատեն (1800) մեծ համբաւ կը վայելէր Տիւզեանց գերդաստանը, որոնք բնակութիւն հաստատած էին Գուրուչէշմէի մէջ: Անոնց ծովեզերեայ ապարանքը երաժշտական կաճառ մըն էր գրեթէ: Համբարձում լսելով այդ բարեհամբաւ գերդաստանին նկատմամբ խօսուածները, ամէն ջանք ի գործ դրաւ եւ վերջապէս օր մը յաջողեցաւ ներկայանալ Յովհաննէս Չէլէպիին, որ երաժշտութեան արուեստին լաւատեղեակ ըլլալով, հետաքրքիր եղաւ այդ երիտասարդին հանդէպ, եւ գուշակելով միանգամայն, որ ապագային շատ մեծ դեր մը պիտի ունենայ Համբարձում իր բնական ձիրքերուն շնորհիւ, առաւ իր ծնողքին քովէն եւ բնակարան մը յատկացուց անոր՝ ապարանքին մէջ: Համբարձում իր փափաքներուն յագուրդ տալու համար յաճախ կը յաճախէր մայրաքաղաքի գլխաւոր եկեղեցիները եւ հոն դպրութիւն կ'ընէր: Այդ պաշտօնին նկատմամբ ջերմ հակում մը ունենալը նշմարելով Տիւզեան Յովհաննէս Չէլէպի, դասախօս կարգեց զինքը Մխիթարեան վարդապետներու տեսչութեան ներքեւ գտնուող Լուսաւորչեան վարժարանին:

Իր դասաւանդութեան միջոցին, Համբարձում երկու տարի աշխատեցաւ Ներսէս Շնորհալիի այն քաղցրալուր եղանակներն ի գիր ամփոփելու. եւ այս կարգադրութեան համար բաւական չհամարելով Եւրոպական ձայնագրութեան հետեւիլ, ետեւէն եղաւ Շարականներու խազերուն նմանցնելով՝ Հայկական ձայնանիշերը հնարել, եւ եօթը ամբողջ ձայներու անունները դնելով փուշ, էկորճ, վերնախաղ, բէնկորճ, խոսրովային, ներքնախաղ, պարոյկ, ու անոնց նախկին վանկերը միայն առնելով՝ անուանեց փո, է, վէ, բէ, խո, նէ, պա, որոնք կը համապատասխանեն Յունարէն բա, վո, դա, տի, ֆէ, զօ, նի, ինչպէս նաեւ Եւրոպական ռէ, մի, ֆա, սօլ, լա, սի, տօ ձայներուն: Հոս յետոյ ամանակներն ու շափերը որոշեց ու դասակարգեց, ապագային թողելով հետզհետէ կատարելագործել իր քրտնաջան աշխատութեամբ ձեռք բերած գիւտը: Պապա Համբարձում՝ Հայկական խազերը հնարելով ո'չ թէ միայն վերանորոգիչը, այլ հիմնադիրը եղաւ Հայ ձայնագրութեան: Իր առաջին գործը եղաւ բոլոր գիտցած եղանակները ձայնագրել եւ կանոնաւորել, ուստի ինչ որ կը լսէր անմիջապէս կ'արձանագրէր:

Մեզի հասածներէն զատ նաեւ կ'ըսուի, թէ ուրիշ Մեղեդիներ եւ Տաղեր ալ հեղինակած է, բայց դժբախտաբար անծանօթ մնացած են մեզի, ցարդ ձեռքերնիս հասած չըլլալուն համար: Յաւալի է որ այս մեծ անձնաւորութեան փոքրիկ մէկ նկարը չենք կրցած ունենալ այսօր:

ԺԹ. դարու սկիզբները եկեղեցւոյ դպրութիւնը այնքան բարգաւաճած վիճակ մը ունեցաւ, որ իրաւամբ կրնանք անուանել Դպրութեան Ոսկեդարը:

ՔԱՌԱՋԱՅՆ ՊԱՏԱՐԱԳԻ ԾՆՈՒՆԴԸ

Քրիստափոր Քարա-Մուրզա՝ որ հաստատողը պիտի ըլլար բազմաձայն պատարագի դրուժեան Ս. Էջմիածնի մէջ՝ ծնաւ 1854-ին՝ հրիմու Ղարասու-Բագար քաղաքը: 1886 Օգոստոսին՝ առաջին անգամ իր ամբողջ խումբով Պաքուի եկեղեցւոյ մէջ քառաձայն երգեց Ս. Պատարագի արարողութիւնը, որ մեծ ընդունելութեան արժանացաւ: Քրիստափոր երեւելի անձնաւորութիւններու կարծիքը առնելով՝ աշխատեցաւ աւելի աշխույժ երգեր յօրինել:

Սեպտեմբեր ամսուն մէջ հեռագիր մը կը ստանայ 1000 ռուբլի թոշակով Էջմիածին երթալու: Ուրախութիւնը անսահման էր այս բերկրառիթ լուրին վրայ, ուստի ամէն ինչ ձգելով ուղղակի Վաղարշապատ կ'երթայ՝ իր ընկերներով ու աշակերտներով: Տ. Մկրտիչ Ա. Կաթողիկոս հրիմեան ծանօթացած ըլլալով անուանի երաժշտագէտին հետ, սիրալիւր ընդունելութիւն մը ըրաւ անոր, որմէ քաջալերուած՝ Քարա-Մուրզա սկսաւ իր բոլոր ճիգը թափել քառաձայնի կատարեալ խմբերգ մը հասցնելու համար: Վերջապէս կարողացաւ հաստատել յաջող երգչախումբ մը, որով սկսաւ առաջին անգամ մուտք գործել քառաձայնը: Թէեւ սկիզբը մեծ ընդունելութեան արժանացաւ անոր յօրինած պատարագը, սակայն հետզհետէ սկսան դժգոհութեան ձայներ բարձրանալ ամէն կողմէ՝ առարկելով, թէ «Եկեղեցին սրբավայր մըն է եւ ո՛չ թէ թատրոն. անոր հեղինակը թող երթայ իր Հոռոմէադաւան ընկերներուն մէջ տարածէ այդ դրուժիւնը. մեզ պէտք չեն այսպիսի նորելուկ սովորութիւններ»:

Քրիստափորի մեկնումէն ետք, թէեւ պահ մը դադրեցաւ Էջմիածնի տաճարին մէջ բազմաձայն Պատարագի երգեցողութիւնը, բայց Նիկողոս Թաշճեանի առաջնակարգ աշակերտներէն՝ Մակար Եկմալեան, քաջահմուտ ըլլալով Հայկական ու Եւրոպական երաժշտութեան, սկսաւ ինքը վարել այն երգեցիկ խումբը՝ որ բաւական մարզուած էր Քարա-Մուրզայի հետ: Եկմալեան, որ գործօն դեր մը ունեցած էր ձայնագրեալ շարականներու տպագրութեան մէջ, հեղինակեց նաեւ երկձայն եւ միաձայն Ս. Պատարագի արարողութիւնները, ինչպէս նաեւ Ձայնագրութեան դասագիրքեր, որոնք տպագրուելով Էջմիածնի մէջ, մեծ ընդունելութեան արժանացան: Մակար Եկմալեան միջին ճամբայ մը ընտրած էր իրեն, ըստ որուն ո՛չ Քարա-Մուրզայի պէս բազմաձայնին եւ ոչ ալ միօրինակ միաձայնին հետեւեցաւ, այլ Նիկողոս Թաշճեանի երկձայնին քիչ մը բարեփոխեալը հնարեց: Այս պատճառով մայրաքաղաքի մէջ ալ շատեր իր դրուժեան հետեւեցան:

ՄԵՂԵԴԻՆԵՐ, ՏԱՂԵՐ ԵՒ ԳԱՆՁԵՐ

Մեղեդի եւ տաղ, որոնց գոյութիւնը առաւել ապահովութեամբ ծանօթ է ծրագրէն սկսեալ՝ Ստեփանոս Սիւնեաց Եպիսկոպոսի, անոր քրոջ՝ Սահակ-դուխտի եւ Այրիվանեցի Գրիգոր Գոգիկ Վարդապետի ստեղծագործութիւններով: Բայց մեղեդիներու եւ տաղերու քանակական թէ որակական իսկական բուն պոռթկումը սկիզբ առաւ 10-րդ դարուն, Ս. Գրիգոր Նարեկացիով, որուն երաժշտական հանճարը հրաշագան օրինակներ պիտի տար այս մարզին մէջ, միաժամանակ ծնունդ տալով հոգեւոր երգի նոր տեսակի մը՝ զանձին:

Տաղային արուեստը իր ընթացքը շարունակեց մինչեւ 19-րդ դարու վերջերը, նորանոր ստեղծագործութիւններով:

Մեղեդին, արձակ խօսքի վրայ՝ երաժշտական ազատ ու լայն ներշնչումով, ազատ կշռոյթով եւ առհասարակ ծանօթ կամ ընդունուած ձեւերու կամ տարազներու կաղապարէն ու կաշկանդումներէն զերծ, ազատ կերպով աճած հոգեւոր ծանրեղանակ երգն է:

Տաղը յստակ կշռոյթ ու տաղաչափութիւն ունեցող բանաստեղծութեան վրայ հիմնուած երաժշտական որոշակի կառոյց ունեցող ստեղծագործութիւն է: Բաղկացած կրնայ ըլլալ քանի մը կամ բազմաթիւ տուներէ, որոնք տօնին առանցքը կազմող դրուագը կը պատմեն կամ երեւոյթը կը սեւեռեն՝ քնարական-յուզական տարրերով հարուստ բովանդակութեամբ: Ինչ կը վերաբերի տաղերու երաժշտական կողմին, քնարական ազատ եւ ընդհանրապէս ծաւալուն ստեղծագործութիւններ են: Ծանրօրէն զարդարուն բնոյթ եւ լայնաշունչ ընթացք կ'ունենան: Ընդարձակ ձայնածաւալով եւ կատարողական լայն հմտութիւն ու ճկունութիւն պահանջող:

Գանձը իբրեւ բանաստեղծութիւն՝ գրեթէ անխախտ տաղաչափութեամբ ու կառոյցով կը ներկայանայ, եռանդամ 5-5-5 վանկանի տողերով: Բովանդակութիւնը առհասարակ աւելի պատմողական-նկարագրական ու մանաւանդ խորհրդածական-ներբողական բնոյթի կ'ըլլայ:

Կը թուի թէ մեղեդիները իրենց ծագումովն իսկ Պատարագին համար յօրինուած, կամ շատ կանուխէն անոր կապուած եւ այդպէս ալ մնացած են: Նոյնը չէ պարագան տաղերուն ու զանձերուն, որոնք կապուած չեն եղած միմիայն Պատարագի արարողութեան, այլ ուրիշ կիրառութիւններ եւս ունեցած են եւ այսօր ալ ունին: Տաղերն ու զանձերը, թէպէտ եկեղեցին անոնց մէջ ընտրութիւն կատարելով շնուիրագործեց ոմանք եւ դուրս չդրաւ ուրիշները: Բայց քանի մը բացառութիւններ տեղ գտան Հայաստանեայց եկեղեցւոյ ճաշոցին, Տօնացոյցին ու Ժամագիրքին մէջ: Քրիստոս պատարագեալ բաշխի երգը, Ներսէս Շնորհալիի հեղինակութիւնն է: Ներսէս կամբրոնացիի բացատ-

րական պատարագամատուցյին մէջ այդ երգին սաղմոսահամարներուն միահիւսուած կը գտնենք վեց տուն շարականներ կամ տաղեր դարձեալ Շնորհալիի գրիչէն:

ՏԱՂԵՐՈՒ ԵՒ ԳԱՆՁԵՐՈՒ ՀԵՂԻՆԱԿՆԵՐԸ

Գրիգոր Նարեկացի (10-րդ դար).- «Հաւիկ...», «Աչքն ծով...», «Գոհար վարդն...», «Հաւուն-հաւուն...»:

Գրիգոր Պահլաւունի Կաթողիկոս (12-րդ դար).- «Ով զարմանալի...»:

Ներսէս Շնորհալի Կաթողիկոս (12-րդ դար).- «Նոր ծաղիկ...», «Նստեալ կանաչքն ողբային...»:

Բարսեղ Ճոն Եպս. Դրագարկցի (12-րդ դար).- «Յայս յարկ նուիրանաց...»:

Վստահաբար, տակաւին կարելի է հեղինակներու շարքը երկարել, սակայն կը բաւարարուինք այս մի քանի օրինակներով:

Գիտենք, որ միջին դարերուն յատուկ սէր եւ ձգտում կար՝ հինէն եկող շարականներու պարզունակ եղանակները վերամշակելու, ծանրացնելու եւ զարդարելու: Յաճախ տաղի մը կամ գանձի մը խօսքերուն հեղինակը ինք նոր եղանակ յօրինելու տեղ՝ կ'որդեգրէ սիրուած եւ տարածում գտած տաղի մը արդէն ծանօթ եղանակը, ինչ որ ժողովրդական երգաստեղծութեան մէջ ալ շատ ծանօթ ու սովորական ձեւ մըն է:

Բնականաբար, տակաւին շատ աւելի ընդարձակ կրնանք խօսիլ Հայ Եկեղեցական երգին (շարականին) մասին, սակայն պիտի ուզենք այսքանով բաւարարուիլ, պարզապէս հակիրճ նախաճաշակ մը տալու մեր ընթերցողներուն, շարականներու ծագման ու զարգացման մասին:

ԱՆԴՐԱՆԻԿ ՎՐԴ. ՔԻՒՐԻՒՄԵԱՆ

(Շար. 2 եւ վերջ)



29 ՏԱՐԻՆԵՐՈՒ ԱՆՄՆԱՅՈՐԴ ԾԱՌԱՅՈՒԹԻՒՆ

1995-էն ի վեր, իւրաքանչիւր տարուան Յունիս ամիսը բոլորիս համար առիթ է նշելու եւ ըստ արժանւոյն յարգելու Ն.Ս.Օ.Տ.Տ. Արամ Ա. Վեհափառ Հայրապետին հոգեւոր անդաստանի եւ ազգային կեանքի բնագաւառներէն ներս մատուցած բոլորանուէր ծառայութիւնը: Վեհափառ Հայրապետին 29 տարիներու վրայ երկարող արդիւնաւէտ գործունէութիւնը եւ իր բազմաթիւ իրագործումները խօսքի սահմաններու մէջ կարելի չէ ամբողջականօրէն ներկայացնել. սակայն կարելի է անվարանօրէն հաստատել թէ անոնք մարմնաւորուեցան աստուածահաճոյ առաքելութեամբ, անմնացորդ ծառայութեամբ եւ անշահախնդիր սիրով:

Ճիշդ 29 տարիներ առաջ, Արամ Ա. արժանընտիր Կաթողիկոս Աստուծոյ ոգեղէն ներկայութեան ուխտեց հաւատարիմ մնալ աստուածաշնչական արժէքներուն, եկեղեցւոյ հոգեւոր ուսուցումներուն ու դաւանանքներուն, ծառայել Աստուծոյ, Հայ Առաքելական Եկեղեցւոյ ու Հայ ժողովուրդին: Վեհափառ Հայրապետին ամբողջանուէր եւ անառարկելիօրէն բազմաբեղուն ծառայութեան շնորհիւ, Հայ Առաքելական Եկեղեցին տարբեր եւ իւրայատուկ արժէք ստացաւ:

Մեծի Տանն Կիլիկիոյ Կաթողիկոսութեան ազգանուէր գործունէութիւնը նոր թափով ու արդիւնաւէտութեամբ շարունակուեցաւ, երբ 1995 Յունիս 28-ին, Կաթողիկոսական Գահ բարձրացաւ Արամ Ա. Վեհափառ Հայրապետը: Ան Կաթողիկոսական ընտրութեան առաջին իսկ պահէն յայտարարեց, թէ «եկեղեցին Աստուծոյ կամօքով մեզ ընտրեց ու մեզի տուաւ պարտքն ու պատիւը իբրեւ անձնդիր ու քաջ հովիւ՝ հովուելու ու առաջնորդելու մեր ժողովուրդը, ի խնդիր Հայ եկեղեցւոյ առաւել պայծառացման, անոր միութեան, առաւել զօրացման ու առաքելութեան առաւել կենսագործման»։ «մեր սիրելի ժողովուրդին ծառայելը նուիրական պարտք է ու բարձրագոյն պատիւ» անվերապահօրէն հաստատեց ան:

Այս գիտակցութեամբ ու յանձնառութեամբ Արամ Ա. Կաթողիկոս Կաթողիկոսական Գահ բարձրանալէն ի վեր լծուեցաւ Մեծի Տանն Կիլիկիոյ Կաթողիկոսութեան առաքելութեան վերակազմակերպման ու վերածաղկման նուիրական աշխատանքին:

Անցնող 29 տարիները Մեծի Տանն Կիլիկիոյ Կաթողիկոսութեան առաքելութեան մէջ յատկանշուեցան համազգային տարողութիւն ունեցող շարք մը

իւրայատուկ դէպքերով ու նախաձեռնութիւններով, որոնց մէջ Վեհափառ Հայրապետին դերը եղաւ առանցքային: Ազգընտիր Կաթողիկոսը դարձաւ լուսաւորող ներկայութիւն Սփիւռքեան կեանքի իրականութեան մէջ, իր կատարած անդուլ եւ տիտանական աշխատանքներուն շնորհիւ:

Լիբանանի պատմութեան ու լիբանանահայ կեանքի ամէնէն փոթորկոտ շրջանին, ձեռնհասութեամբ վարելէ ետք Լիբանանի Հայոց Թեմի Առաջնորդի պատասխանատու պաշտօնը, Արամ Ա. իր Կաթողիկոսութեան օրերուն մի՛շտ ալ եղաւ Կիլիկիոյ Կաթողիկոսութեան բոլոր թեմերուն քաջ հովիւն ու առաջնորդը. ան յաճախ եւ զանազան առիթներով հովուական այցելութիւններ տուաւ բոլոր թեմերուն, նոր աշխուժութիւն տալով թեմական կեանքին: Լիբանանի, Սուրիոյ եւ հայրենի Արցախի տագնապալի օրերուն, Նորին Սրբութիւնը այցելութիւններով, հանգանակութիւններով եւ զանազան այլ նախաձեռնութիւններով նեցուկ կանգնեցաւ մեր ժողովուրդի բոլոր զաւակներուն, անխտիր:

Արամ Ա.ի գահակալութեան օրերուն, Կիլիկեան Միաբանութիւնը իր որակով եւ քանակով զարգացում արձանագրեց. իսկ Դպրեվանքը Վեհափառ Հայրապետին խնամքին եւ ուշադրութեան արժանացաւ մի՛շտ եւ անխափանօրէն շարունակեց իր առաքելութիւնը: Ազգային-եկեղեցական, մշակութային, կրթական ու ընկերային մարզերէն ներս Վեհափառ Հայրապետին նախաձեռնութեամբ կազմակերպուեցան տարբեր համագումարներ, ժողովներ եւ աշխատանքային բնոյթի ձեռնարկներ: Արամ Ա. Կաթողիկոսին ջանքերով, մեր ազգի դատը մուտք գործեց իրաւական դաշտ, Թուրքիոյ Սահմանադրական Դատարանին եւ Եւրոպայի Մարդկային Իրաւանց Դատարանին մօտ Կիլիկիոյ Կաթողիկոսութեան կողմէ բացուած դատով:

Նորին Վեհափառութեան գործունէութեան մէջ կարեւոր տեղ գրաւեցին միջ-եկեղեցական, միջ-կրօնական, Միջին Արեւելքի Եկեղեցիներու Խորհուրդի, Եկեղեցիներու Համաշխարհային Խորհուրդի եւ էքիմէնիք աշխատանքները, որոնց մէջ մի՛շտ ալ ստանձնեց առաջնորդի դեր եւ ունեցաւ որոշիչ ու անփոխարինելի դերակատարութիւն:

Նորին Սրբութիւնը մշակեց նաեւ մտաւորական գործունէութիւն, հեղինակ դառնալով հայերէն, անգլերէն եւ ֆրանսերէն բազմաթիւ հատորներու եւ յօդուածներու, որոնց մէկ մասը թարգմանուած է տարբեր լեզուներու: Այս բոլորին զուգահեռ, Հայրապետին գահակալութեան տարիները յատկանշուեցան լայնածաւալ շինարարական աշխատանքներով նաեւ:

Այս բոլորը վաւերական ապացոյց են Վեհափառ Հայրապետին բազմաբնոյթ եւ բազմածաւալ գործունէութեան իրագործումներուն. մեր եկեղեցին ու ազգը երախտապարտ է անոր անդուլ եւ հետեւողական աշխատանքին:

Վեհափառ Հայրապետը օժտուած է բազմաթիւ առաքինութիւններով, զորս իբրեւ հովուապետ ամէն օր կ'արտացոլացնէ իր գործին մէջ: Կիլիկեան

ուխտին հաւատարիմ, արի, վճռակամ, աշխատասէր, ժողովուրդի ցաւով տառապող եւ անոր ապագային համար ծրագրող Արամ Ա. Կաթողիկոս, 29 տարիներէ ի վեր անխոնջ աշխատանք կը տանի մեր ժողովուրդին համար: Ան կը հանդիսանայ այն առաջնորդը, որ պահանջատէր է մեր ժողովուրդի դատի արդար լուծման, որ կը պայծառացնէ մեր ազգն ու եկեղեցին, եւ որ կ'ամրացնէ մեր քրիստոնէական հաւատքը:

Այս բեղուն գործունէութեան տարեդարձին առիթով, պէտք է հաստատել, թէ Մեծի Տանն Կիլիկիոյ Կաթողիկոսութիւնը միայն անցեալ չէ՛, որպէսզի մենք՝ անցեալի նուաճումները ժառանգելով, աւարտած համարենք մեր պարտքը. անիկա սահմանագծուած ներկայ մը չէ՛ միայն, որուն սահմանին հասնելով փորձենք հանգիստ քուն մտնել. անիկա ապագայ՝ մըն է, մեր բոլորիս ապագան. եւ ապագայ կը նշանակէ նոր ներդրումներու յանձնառութիւն, ժառանգութեան վրայ յաւելումներ գումարելու պարտքի զգացում եւ անխոնջ ծառայութիւն:

Արդարեւ, Վեհափառ Հայրապետին օրինակով, անոր յորդորներուն, առաքինի կենցաղին եւ հայրական վերաբերումին հետեւելով, Հայ եկեղեցւոյ ու Հայ ազգին ծառայելու մեր ուխտը յառաջ կը տանինք յաւելեալ պատասխանատուութեամբ եւ ինքնաճանաչման խորունկ գիտակցութեամբ՝ ի պանծացումն Հայ եկեղեցւոյ եւ ի յառաջդիմութիւն ու յաջողութիւն Հայ ժողովուրդին:

ԳԷՈՐԳ ՎՐԴ. ԳԱՐԱԿԷՕԶԵԱՆ



ՓԻԼԻՍՈՓԱՅԱԿԱՆ ԱԿՆԱՐԿ

ԱՍՏՈՒԱԾԻՄԱՍՏՈՒԹԻՒՆ*
THEOSOPHIA

ԽՈՐՀՐԴԱՊԱՇՏՈՒԹԻՒՆ MYSTICISM

Խորհրդապաշտություն¹ (Mysticism) հասկացությունը, կը բնորոշուի աստ-
լածային կամ բացարձակ իրականության մը փորձառութեան վկայութիւն-
ներով կամ արտայայտութիւններով կամ նմանօրինակ փորձառութիւններ
ունենալու ճիգով ու ջանքով: Իսկ ամենօրեայ օգտագործման կամ հանրա-
մատչելի գրականութեան մէջ, խորհրդապաշտություն եզրոյթով կը հասկնանք
ա՛յն հոգեկան եւ հոգեզմայլ ապրումները, զորս գիտականօրէն կարելի չէ
առարկայացնել կամ բացատրել եւ հայեցողութեամբ ու հասկացութիւններով
կարելի չէ իմանալի ու ճանաչելի դարձնել:

Խորհրդապաշտություն եզրոյթը, երոպական լեզուներու մէջ կը համա-
պատասխանէ, օրինակ անգլ.՝ Mysticism, ֆրնս.՝ Mysticisme, լատ.՝ mysticis
եւ գերմ.՝ Mystik եզրերուն, որոնք սերած են յունարէն mystikós եզրոյթէն, որ
իր կարգին կը նշանակէ՝ խորհրդաւոր, առեղծուածային կամ գաղտնուսույց:

* «Աստուածիմաստութիւն – Theosophia».- Ընդհանուր վերնագիրն է յօդուածաշարքի մը,
որ շարունակաբար լոյս պիտի տեսնէ ՀԱՍԿին մէջ: Այս ու յաջորդ թիւով՝ *Խորհրդապաշ-
տութիւն* (Mysticism) հասկացութեան մասին:

¹ **Խորհրդապաշտութիւն** (Mysticism).- Հասկացութիւնը երոպական լեզուներու մէջ կը
համապատասխանէ, օրինակ անգլ.՝ Mysticism, ֆրնս.՝ Mysticisme, լատ.՝ mysticis
եւ գերմ.՝ Mystik եզրոյթներուն, որոնք սերած են յունարէն mystikós եզրոյթէն, որ
իր կարգին կը նշանակէ՝ խորհուրդ կամ առեղծուած: Կառնչուի նաեւ յունարէն
mýein եզրոյթին, որ կը նշանակէ՝ փակել (աչք եւ բերան), ինչ որ մասնակից անհատի
մօտ պատկերաւոր իմաստ կը ստանայ խորհրդապաշտական արարողութեան մը,
օրինակ մտավերացման (Meditation) ընթացքին:

Պէտք չէ շփոթել *խորհրդանշապաշտութեան* (Symbolism) հետ:

Հետագային, «սրբազան խորհուրդ» իմաստով յառաջացաւ նաեւ լատ.՝ sacramentum եզ-
րոյթը, գերմ.՝ Sakrament, անգլ.՝ Sacrament, որ բաղդատաբար Mysterium-ի գուտ կրօնա-
կան-եկեղեցական իմաստ ունի:

Կ'առնչուի նաև յունարէն *mýein* եզրոյթին, որ կը նշանակէ՝ փակել (աչք եւ բերան), ինչ որ մասնակից անհատի մօտ պատկերաւոր իմաստ կը ստանայ՝ խորհրդապաշտական արարողութեան մը, օրինակ մտավերացման (Meditation) ընթացքին:

Խորհրդապաշտութիւնը քննարկումներու ու հետազօտութիւններու նիւթ է տարբեր կրօններու ու կրօնագիտութիւններու ոլորտին մէջ, ինչպէս նաև փիլիսոփայութեան (Philosophy), հոգեբանութեան (Psychology) ու հոգեմարմնական բժշկութեան (Psychosomatic Medicine) ոլորտներուն մէջ:

Հարկ է, մեթոդական տեսանկիւնէն, խորհրդապաշտութիւնը զանազանել փիլիսոփայութենէն:

- Փիլիսոփայութիւնը հարցերու քննարկումը կը սկսի «դուրսէն», առարկայական (Objective) աշխարհի երեւոյթներէն (ինչ որ բոլորին համար հասանելի է) եւ ինքնագիտակցութեան իրողութիւններէն ... այլ խօսքով, ան կ'անդրադառնայ զանազան տուեալներուն, կը վերլուծէ զանոնք, որով եւ համոզիչ կը դառնայ: Փիլիսոփայութիւնը երբեք գուշակութիւններ չ'ըներ եւ չի պնդեր, մանաւանդ ինչ որ անմատչելի ու թերեւս անիմանալի կը թուի: Փիլիսոփայութեան մէջ, ինչ որ կարելի չէ հիմնաւորել ու փաստել, կ'արհամարհուի կամ կը մերժուի:

- Խորհրդապաշտութիւնը հարցերու քննարկումը կը սկսի «ներսէն», անձի ենթակայական (Subjective) ներքին աշխարհէն եւ դրական անհատական փորձառութիւններէն, որոնք միայն այդ անձին կը պատկանին, այս պատճառով ալ անոնք կը մնան անհատական հաստատումներ եւ ուրիշներու համար կրնան համոզիչ չդառնալ: Այսուհանդերձ բոլոր ժամանակներու խորհրդապաշտները իրենց վկայութիւններու առնչութեամբ համաձայն են, որ անոնք արդիւնքն են իրենց ներքին փորձառութեան, որուն մեծապէս կը վստահին ու խորապէս համոզուած են:

Գերման բարոյագէտ-փիլիսոփայ **Ա. Շոպենհաուեր** (Arthur Schopenhauer, 1788 – 1860 թ.), որ քաջ ծանօթ էր արեւելեան կրօնափիլիսոփայութեան ու անոր խորհրդապաշտութեան, իր գլխաւոր երկին մէջ («Աշխարհը որպէս կամք եւ պատկերացում»), հետեւեալ հաստատումը կ'ընէ.-

«Մեր գոյութեան ետին, պահուած է ուրիշ բան մը, որ մեզի մատչելի (հասանելի) կը դառնայ, երբ մենք աշխարհը թափահարենք»²:

² Մէջբերումը՝ Ա. Շոպենհաուերի «Աշխարհը որպէս կամք եւ պատկերացում» (1819 թ., գերմ. բնագիր՝ „Die Welt als Wille und Vorstellung”, անգլ.՝ „The world as will and representation”) երկէն (I, § 70):

Ա. Շոպենհաուեր (Arthur Schopenhauer, 1788 – 1860 թ.)- Գերման նշանաւոր բարոյագէտ-փիլիսոփայ: Գերմանական գաղափարապաշտութիւն (German Idealism) փիլիսոփայական ուղղութեան ներկայացուցիչ:

Աստուածային կամ Բացարձակ Իրականութեան մը վկայակոչումը, բազմաթիւ կրօններու մէջ ունի պատմական երկար ավանդութիւն: Ոչ-կրօնական այլ ավանդութիւններ կը շեշտեն «աշխոյժ կեանքի» (լատ.՝ *vita activa*) եւ «խորհրդածական կեանքի» (լատ.՝ *vita contemplativa*) համարժէքութիւնը: Հաւանաբար երկու տարբերակներն ալ, որոշ չափով, իրարու կապուած են եւ զիրար կ'ամբողջացնեն:

Միաստուածեան 3 կրօններու (Յուդայականութիւն, Քրիստոնէութիւն, Իսլամութիւն) պարագային, խորհրդապաշտական (միստիկ) փորձառութիւնը կ'առնչուի՝ Աստուծոյ ու հաւատքին: Իսկ ոչ-աստուածային, ասիական ավանդութիւններուն, դաւանանքներուն ու ընդհանրապէս արեւելեան կրօնափիլիսոփայութիւններուն³ պարագային (Բուդայականութիւն, Ջահնականութիւն, Դաոյականութիւն, Կոնֆուցիականութիւն, եւայլն...), խորհրդապաշտական (միստիկ) փորձառութիւնը տեղի կ'ունենայ առանց աստուածային էութեան:



Ստորեւ, արեւելեան 5 կրօնափիլիսոփայութիւններուն (Հինդուականութիւն, Ջահնականութիւն, Բուդայականութիւն, Դաոյականութիւն, Կոնֆուցիականութիւն) եւ միաստուածեան 3 կրօններուն (Յուդայականութիւն, Քրիստոնէութիւն, Իսլամութիւն) խորհրդապաշտութեանց մասին հակիրճ տեղեկութիւններ:-

1. Հինդուականութիւն⁴ (Hinduism)

Հինդուականութեան պարագային խորհրդապաշտութիւնը կը ներկայանայ աստուածային Պրահմանի (Brahman) հետ միութեամբ մը, զոր կարելի

³ Արեւելեան կրօնափիլիսոփայութիւններ (Eastern Religious Philosophy).- Արեւելեան կրօնափիլիսոփայութիւններու մասին տե՛ս հեղինակի «ԲԱՐՈՅԱԳԻՏՈՒԹԻՒՆ-ՓԻՒԼԻՍՈՒՄՅԱՅԿԱՆ ԱԿՆԱՐԿ» (Անթիլիաս, Բ. հրատարակութիւն, 2021 թ.) երկը, հոն՝ Մաս-8, էջ 284-366:

⁴ Հինդուականութիւն (Hinduism).- Հնդկաստանի մէջ, կրօնափիլիսոփայութեանց առաջին նշանները կարելի է տեսնել 5 հազարամեակներ առաջ, սակայն վեդայական ժամանակաշրջանին (մ.թ.ա. 1750) եւ առանց հիմնադիր յիշատակութեան, կը կազմուի Հինդուականութիւնը, որ կը կոչուի նաեւ՝ «Յաւիտենական օրէնքը» (սնսկ.՝ *Sanātana dharma*), իր բազմաթիւ ճիւղաւորումներով, իր կրօնական իւրայատուկ աշխարհայացքով, գործնական բարոյագիտութեամբ եւ փիլիսոփայական պատկերացումներով, ինչպէս նաեւ իր բազմաթիւ աստուածներով (սնսկ.՝ *Deva*): Հինդուական գլխաւոր 3 աստուածները՝ *Բրահմա* (Brahma), *Վիշնու* (Vishnu) եւ *Շիվա* (Shiva) կը կազմեն եռամիասնականութիւն մը (սնսկ.՝ *Trimūrti*):

Ներկայիս, Հինդուականութեան կը հետեւի աւելի քան մէկ միլիարդ մարդ: Քանակական տեսանկիւնէն, ան կը նկատուի աշխարհի երրորդ կրօնը, Քրիստոնէութենէն ու Իսլամութենէն ետք:

չէ մեր մարդկային բառերով նկարագրել: Այս միաստիկ խորհրդապաշտութեան ընթացքին, փոխաբերաբար՝ «կ'ընդլայնի» հաւատացեալ անհատի գիտակցութիւնը դէպի անսահմանն ու անվերջը եւ անհատը կը վերանայ դէպի՝ անասելի լոյսը, որ կը ներկայացնէ նոյնինքն Պրահմա⁵ աստուածը:

Աստուած կամ աստուածայինը, թէեւ իւրաքանչիւր անհատի մէջ ներկայ է, սակայն շատ դժուար է զայն ըմբռնելն ու ընկալելը: Իսկ ըմբռնելու ու ընկալելու համար հարկ է խորաթափանց փորձառութիւնը՝ եոգայի⁶ (Yoga) ու մտավերացման (Meditation), ինչպէս նաեւ ընդունելու ճգնաւորական ապրելակերպը (Ascetism), որու միջոցով կարելի է ընդհանրապէս ձերբազատիլ աշխարհային գրեթէ բոլոր կարիքներէն:

2. Զաինականութիւն⁷ (Jainism)

Զաինականութեան պարագային, խորհրդապաշտութիւնը ինքզինք կը բացայայտէ խիստ ճգնաւորական ապրելակերպով՝ ծոմապահութեամբ, պահեցողութեամբ (միայն բուսակերութեամբ – Vegetarian, Vegan), մարմնական անգործունէութեամբ, միշտ նպատակ ունենալով հոգիի «մաքրումը» եւ անոր (հոգիի) վերջնական փրկութիւնը, որ բազմաթիւ վերամարմնաւորումներէ⁸

⁵ **Պրահմա** (Brahma).- Հինդուականութեան ստեղծիչ-արարիչ գերագոյն աստուածը: Իրմէ յառաջ եկած է իր կինը՝ *Սարասվատի* (Saraswati) իմաստութեան աստուածուհին: *Վիշնու* (Vishnu) եւ *Շիվա* (Shiva) աստուածներուն հետ կը կազմեն Հինդուականութեան եռամիասնականութիւնը (սնսկ.՝ Trimurdi):

⁶ **Եոգա** (Yoga).- Հնդկական կրօնափիլիսոփայութեան ոլորտի մէջ, *եոգան* ծանօթ է, որպէս ուսմունք եւ մարմնական ու հոգեկան վարժութիւններ, ինչպէս նաեւ մտային խոր կեդրոնացում: Ծագում առած է վեդայական ուշ ժամանակաշրջանին (մ.թ. 700 մ.թ.ա.): *Եոգայի* գլխաւոր նպատակները՝ հոգիի կաշկանդումներէն ազատագրումն ու ճշմարտութեան ճանաչումն են: Ժամանակի ընթացքին, *եոգան* որոշ փոփոխութիւններ կրեց եւ յառաջացան եոգայի արդիական դպրոցներ, որոնք աւելի կը կարեւորեն առողջապահական մարմնական վարժութիւնները:

Եոգա սանսկրիտերէն եզրը յառաջացած է “Yuj” (եւոջ) = «լծել» բայէն, ինչպէս կենդանին կը լծեն կառքին, նոյնպէս՝ հոգին (սնսկ.՝ Chitta - Չիթա) կը լծուի ու կը կեդրոնանայ:

⁷ **Զաինականութիւն** (Jainism).- Զաինականութիւնը, յառաջ եկաւ որպէս արդիւնք Հինդուական կրօնի բարեկարգութեան, մ.թ.ա. 6-րդ դարուն, Բուդդայականութենէն անմիջապէս առաջ: Հնդկական կրօնափիլիսոփայական այս ուղղութեան հիմնադիրն է՝ իշխան Վարդհամանա (Vardhamana), որ ստացած է *Մահավիրա* (սնսկ.՝ Mahavira = մեծ հերոս) ու *Ջինա* (սնսկ.՝ Jina = յաղթական) տիտղոսները: Զաինականութիւնը կը մերժէ՝ որեւէ անդրանցական աստուածութեան կամ աստուծոյ մը գոյութիւնը:

Ներկայիս, Զաինականութեան կը հետեւի մօտ. 5 միլիոն մարդ:

⁸ **Հոգիի վերամարմնաւորում** (Reincarnation).- Հնդկական կրօնափիլիսոփայութիւններու մէջ եւս կը խօսուի մարդկային հոգիի անմահութեան մասին, բայց նաեւ այդ հոգիի «վերամարմնաւորման» մասին, որով կը սկսի «ծնունդի եւ մահուան յարատեւ ու տա-

(Reincarnation) ետք, վերջապէս նիրվանայի⁹ (Nirvana) արժանանալուն մէջ կը կայանայ:

3. Բուդդայականութիւն¹⁰ (Buddhism)

Հնդկաստանի մէջ, Բուդդայականութեան պարագային, խորհրդապաշտութիւնը կը յատկանշուի Մահայանա (Mahayana) գործնական ուղղութեան աւանդութեամբ:

Բուդդայականութեան համաձայն, հոգին միութիւն մըն է, սակայն այս գաղափարը կը մնայ անգիտակից, որովհետեւ հոգին կառչած է «ես»ին եւ այն կարծիքը կը յառաջանայ, որ «ես»ը կրնայ գոյութիւն ունենալ անկախ այլ երեւոյթներէ: Այս բարդ իրավիճակէն կը յառաջանան՝ հոգիի տառապալից «երեւ թոյները».- ազահոութիւն, ատելութիւն եւ մոլորութիւն: Այս իրավիճակէն դուրս գալու համար, հարկ է՝ գիտակցութեամբ «մաքրել» վերոյիշեալ երեք թոյները եւ փարատել «ես»ի վերոյիշեալ թիւր պատկերացումը: Այս բոլորը, գործնականապէս կարելի կը դառնայ՝ մտավերացման (Meditation) ու աղօթքի միջոցներով, ինչպէս նաեւ եոգայի (Yoga) եւ տանտրայի¹¹ (Tantra)

նապալի շրջանառութիւնը» (անսկ.՝ Samsara): Մարդու վերջնական նպատակը, սակայն, ձեռքբերուիլն ու փրկուիլն է այս յարատեւ տառապանքէն եւ արժանանալ՝ գերագոյն բերկրանքին, կատարեալ գոհունակութեան ու յաւիտենական երանութեան, որ Հինդուականութեան մէջ կը կոչուի *մոկշա* (Moksha), իսկ Բուդդայականութեան ու այլ կրօնափիլիսոփայական աւանդութիւններու մէջ՝ *նիրվանա* (Nirvana):

⁹ **Նիրվանա** (Nirvana).- Մանկրիտ լեզուով կը նշանակէ՝ «հանգում» կամ «շիջում», ինչպէս նաեւ՝ կատարեալ գոհունակութիւն, գերագոյն բերկրանք ու յաւիտենական երանութիւն:

Կարելի է համապատասխանեցնել քրիստոնէական դրախտին:

¹⁰ **Բուդդայականութիւն** (Buddhism).- Բուդդայականութիւնը յառաջացած է հինդուական կրօնի բարեկարգութեան որպէս արդիւնք, մ.թ.ա. 6-րդ դարուն, Ջահնականութենէն անմիջապէս ետք: Հնդկական կրօնափիլիսոփայական այս ուղղութեան հիմնադիրն է՝ իշխան Սիդհարթա Գաուտամա, որ ստացած է Բուդդա (Buddha) տիտղոսը: Բուդդայականութիւնը եւս չէ ընդգրկած բնագանցական (Metaphysics) աստուծոյ մը գաղափարը կամ սուրբ գրային վարդապետութիւն մը՝ Ջահնականութեան նման:

Հնդկաստանէն դուրս, Բուդդայականութիւնը տարածուեցաւ հարեւան երկիրներու մէջ (Չինաստան, Ճապոնիա), ուր տեսակ մը համահաշտութիւն (Syncretism) գոյացաւ տեղական աւանդական կրօններուն հետ: Ապա տարածուեցաւ նաեւ Արեւմուտք (Եւրոպա, Ամերիկա):

Ներկայիս, Ջահնականութեան կը հետեւի մօտ. 500 միլիոն մարդ: Քանակական տեսանկիւնէն, ան կը նկատուի աշխարհի չորրորդ կրօնը, Քրիստոնէութենէն, Իսլամութենէն ու Հինդուականութենէն ետք:

¹¹ **Տանտրա** (Tantra).- *Տանտրականութիւնը* (Tantrism) հնդկական կրօնափիլիսոփայութիւններու ոլորտներու մէջ յառաջացած զանազան ծիսակատարական-պաշտամունքային հոսանքներ են, որոնք յայտնուեցան մեր թուարկութեան 6-րդ դարուն: Այստեղ կը

յարատեւ գործադրութեամբ:

Չինաստանի մէջ, որպէս կրօնական նոր հոսանք սկսած ու արագօրէն տարածուած (նախ հարեւան երկիրներու մէջ ապա Եւրոպա եւ Ամերիկա), Չան-Բուդդայականութիւնը (Chan-Buddhism) կը յատկանշուի իր խորհրդապաշտական զօրաւոր հակումներով, խմբային մտավերացման փորձերով եւ յատուկ արարողութիւններով:

4. Դաոյականութիւն¹² (Daoism)

Չինաստանի մէջ, Դաոյականութեան խորհրդապաշտութիւնը սկզբնական շրջանին կը ներկայանար 3 ուղղութիւններու աւանդութեամբ, որոնք (7-րդ դարուն) միանալով գործնականապէս կազմեցին 3 բաժիններով նոր միաստիկ խորհրդապաշտութիւն մը: Ան կը յատկանշուի հաւատացեալի մարմնական ապա գիտակցութեան վարժութիւններով, որոնց կը հետեւի անոր մուտքը՝ երկնային անդրանցական (Transcendental) աշխարհին մէջ:

Այս խորհրդապաշտութենէն քաղուած հմտութեամբ, անհատը կը ստանայ տիեզերական նոր (անիղձ ու անյոյզ) ինքնութիւն մը ու կը միանայ Դաոյին կամ սկզբնական Յիին¹³ (Qi):

շէշտուի իգական կամ մայր-աստուածուհիներու (սնսկ.՝ Ծակտի = Shakti) պաշտամունքը, կը յատկանշուի ծիսական պարերով ու *Տանտրական մտավերացումի* (Tantric Meditation) չորս մակարդակներով եւ կօզտագործուի *մանդալան* (սնսկ.՝ Mandala), որ կը նշանակէ «շրջանակ» եւ կը խորհրդանշէ աշխարհն ու տիեզերքը:

Տանտրա (Tantra) սանսկրիտերէն եզրոյթը (որմէ՝ «տանտրականութիւն» հասկացութիւնը) բառացիօրէն կը նշանակէ՝ «հիւսք», «կապ», «դրութիւն» (System) կամ «գրութիւն» (Text):

¹² **Դաոյականութիւն** (Daoism).- Դաոյականութիւնը, որպէս արեւելեան կրօնափիլիսոփայութիւն եւ աշխարհայացք, թէեւ սկսած է Չինաստանի մէջ մ.թ.ա. 5-րդ կամ 6-րդ դարերուն, սակայն ազդուած է կարգ մը գաղափարներէ, որոնք կու գային աւելի հին ժամանակներէն: Որպէս հիմնադիր կը նշուի առասպելական չին կրօնափիլիսոփայ **Լաոցի** (Laozi, մ.թ.ա. մօտ. 6-րդ դար), որ գրած պիտի ըլլայ կրօնափիլիսոփայական այս ուղղութեան հիմնական մատենանը:

Դաո (Dao) կը նշանակէ՝ «ուղին» կամ «ճիշդ ուղին»: Դաոյականութեան հիմնադիր Լաոցիի (Laozi, մօտ. 601 – 520? մ.թ.ա.) համաձայն, ան ամբողջ աշխարհի գերագոյն սկզբունքն է (Principle), գերագոյն իրողութիւնը, գերագոյն առեղծուածը (Mystery), նախասկզբնական միութիւնը, տիեզերական օրէնքը (Cosmic law), բարոյական ճիշդ ուղին եւ բացարձակը (Absolute):

¹³ **Յի** (Յի կամ Չի).- Դաոյական կրօնափիլիսոփայութեան ծիրէն ներս կը նշանակէ՝ «կենսական ուժ ու շունչ», որմէ գոյացած է ամբողջ տիեզերքը:

5. Կոնֆուցիականություն¹⁴ (Confucianism)

Չինաստանի մէջ, Կոնֆուցիականութեան պարագային, խորհրդապաշտութիւնը իր իւրայատուկ տեղը չունի:

Կոնֆուցիականութեան գերագոյն նպատակը՝ մարդու կատարելագործումն է եւ մարդկային յարաբերութիւններու բարելաւումը, թէ՛ ընտանիքին եւ թէ՛ հասարակութեան մէջ: Բարոյագիտութեան ոլորտի մէջ հիմնական դեր կը կատարէ մարդասիրութիւնը (յուն՝ philanthrōpía):

Կոնֆուցիոսի (կամ Կոնֆուցիականութեան) կը վերագրուի նաեւ հնագարեան «ուկեայ կանոնի»¹⁵ մէկ տարբերակը, հետեւեալ բանաձեւով.-

«Վարու՛ է այնպէս, ինչպէս որ կ'ուզես որ բեզի հետ վարուիմ»:

11-րդ դարուն, Կոնֆուցիականութիւնը կը բարեկարգուի եւ կը հաստատուի նոր ուղղութիւն մը, որ հետագային կը կրէ Նոր-Կոնֆուցիականութիւն (Neo-Confucianism) անունը: Այստեղ, աւանդական Կոնֆուցիականութեան մէջ մուտք կը գործեն՝ բուդդայական եւ դաոյական ուսմունքի տարրեր, ինչպէս նաեւ ասոնց հետ առնչուած խորհրդապաշտութիւն մը:

6. Իսլամութիւն¹⁶ (Islamism)

Իսլամական կրօնի պարագային, խորհրդապաշտութիւնը կը ներկայանայ

¹⁴ **Կոնֆուցիականութիւն** (Confucianism).- Կոնֆուցիականութիւնը, որպէս արեւելեան կրօնափիլիսոփայութիւն եւ աշխարհայացք, սկսած է Չինաստանի մէջ, մ.թ.ա. 6-րդ դարուն: Հիմնադիրն է **Կոնֆուցիոս** (լատ.՝ Confucius, 551 – 479 մ.թ.ա.), որու անունով կոչուած է Կոնֆուցիականութիւն: Լատինացուած այս անունը, չինարէնի մէջ ծանօթ է որպէս Kǒng Fǔ-zǐ կամ Kǒng Zǐ, որ կը նշանակէ՝ «ուսուցիչ Կոնգ»: Կոնֆուցիականութիւնը եւս, որպէս հիմք չունի որեւէ բնագանցական (Metaphysics) ատեան կամ աստուածութիւն:

¹⁵ **Ոսկեայ Կանոն** (Golden Rule).- Պատմութեան ընթացքին, կարելի է հանդիպիլ *ոսկեայ կանոնի* բազմաթիւ բանաձեւերու, որոնք նախ կու գան ասիական կրօնափիլիսոփայական ուղղութիւններէն, ապա յունական հին մշակոյթէն ու փիլիսոփայութենէն, ինչպէս նաեւ զանազան կրօններու մօտ.- Յուդայականութիւն, Քրիստոնէութիւն եւ Իսլամութիւն:

Պատմութեան ընթացքին, նաեւ քննադատուած է *ոսկեայ կանոնը*: Հակառակ այդ բազմաթիւ քննադատութիւններուն, *ոսկեայ կանոնը* կարելի է նկատել մարդկային խոհեմութեան ուղղուած կոչ մը, որպէսզի անհատը խորհրդածէ իր վարմունքի առաւելութիւններուն ու թերութիւններուն մասին. կոչ մը՝ դէպի արդարութիւն եւ մարդկային արժանապատուութիւն:

¹⁶ **Իսլամութիւն** (Islamism).- որպէս միաստուածեան կրօն, հաստատուած է 7-րդ դարուն, *Մուհամմադի* (Muhammad, 570 – 632 թ.) կողմէ, որ իսլամութեան հիմնադիրն ու մարգարէն կը նկատուի: Իսլամութեան գլխաւոր ու սուրբ գիրքը *Քուր'ան* (արաբ.՝ Qur'an = القرآن) կը կոչուի, որու բնագիրը արաբերէն է, հետագային ան թարգմանուած է զանազան լեզուներու:

Պատմութեան ընթացքին, Իսլամութեան մէջ մուտք գործեցին բազմաթիւ բաժանումներ, որոնցմէ կարելորդներն են.- Սուննիները (Sunni) եւ Շիաները (Shia): Այսօր, Իսլամութեան կը հետեւի աւելի քան 1,8 միլիարդ մարդ, որով ան կը նկատուի աշխարհի, քանակական տեսանկիւնէն, երկրորդ կրօնը, Քրիստոնէութենէն ետք:

Սուֆիզմ (Sufism, արաբ․՝ tasawwuf = تَصَوُّف) ուղղութեան ականդութեամբ:

Սուֆիզմը կը յատկանշուի ճգնաւորական, հոգեւորական ու խորհրդապաշտական (միստիկ) հակումներով, նպատակ ունենալով Աստուծոյ հետ միութիւն մը (արաբ․՝ tauhid = تَوْحِيد): Սուֆիզմի հետեւորդը կը կոչուի «սուֆի» (Sufi, արաբ․՝ سُفِي) որ պէտք է թափանցէ իսլամական սուրբ գիրքի Քուր'անի (արաբ․՝ Qur'an = الْقُرْآن) ներքին իմաստին, ճանաչականութեան (Gnosticism) իմաստով, որ արաբերէնի մէջ ծանօթ է irfân (արաբ․ = إِرْفَان) եզրոյթով:

Սուֆիզմը, իր սկզբնական ձեւին մէջ, ծնունդ առած է՝ 7-րդ. եւ 8-րդ. դարերուն, այսօրուան Իրաքի մէջ, ապա տարածուած արաբական ու իսլամական աշխարհի մէջ:

Այնուհետեւ, փիլիսոփայ աստուածաբաններու կողմէ, ինչպէս Ալ-Ղազալի (Al-Ghazali, 1058 – 1111 թ.) եւ ուրիշներ, կը մշակուին զանազան գիրքեր, ուր Սուֆիզմը կը բացատրուէր ու կը կարգաւորուէր: 12-րդ. դարէն սկսեալ հաստատուեցան Սուֆիզմի տարբեր ուղիներու (արաբ․՝ tariqa = طَرِيقَة) զուտ կրօնական միաբանութիւններ, որոնցմէ հանրածանօթ են՝ Մելվեփները (Mevlevi), իրենց «պտտուող դերվիշներ» հետեւորդներով, 14-րդ դարուն Կեդրոնական Ասիայէն ծագում առած՝ Նաֆշբանդիները (Naqshbandi), եւ այլն:

Խորհրդապաշտութիւնը, նաեւ իսլամական Ալավիներու (Alawi) հաւատքին մէջ իր իւրայատուկ տեղը ունի:

7. Յուդայականութիւն¹⁷ (Judaism)

Յուդայականութեան պարագային, խորհրդապաշտութիւնը կը ներկայանայ Կաբալա (Kabbalah) ուղղութեան ականդութեամբ:

Կաբալան կը յատկանշուի մարդու Աստուծոյ հետ ունեցած յարաբերութեամբ եւ փորձառութեամբ: Թէեւ Կաբալայի բազմաթիւ գրութիւններ կան, սակայն բոլորին կողմէ ընդունուած միացեալ ուսմունք մը կամ վարդա-

¹⁷ **Յուդայականութիւն** (Judaism).- որպէս միաստուածեան կրօն, ունի աւելի քան 3 հազար տարուան պատմութիւն: Յուդայականութեան Սուրբ Գիրքը կը կոչուի Թանախ (Tanach), որ կազմուած է 3 մասերէ.- Թորա (Torah), որ նոյնիսկ Հին Կտակարանի կամ մովսիսական հնգամատեանն (Pentateuch) է, ապա Մարգարէներ (Prophets), թիւով 19, վերջաւորութեան Գրութիւններ (Writings), որոնք կը բովանդակեն՝ հետեւեալ գիրքերը՝ Մադմուսաց, Առակաց եւ Երգ-Երգոցը:

Յուդայականութեան պատմութեան ընթացքին յառաջացան հետեւեալ գլխաւոր ճիւղաւորումները.- *Աշկենագներ* (Ashkenazi), որոնք եւրոպական հրեաներն են, *Միզրահի* (Mizrahi), որոնք արեւելեան հրեաներն են եւ *Սեֆարտի* (Sephardi), որոնք իբրեւեան հրեաներն են (15-16-րդ դարուն տեղահանուած ու ցրուած):

Այսօր, Յուդայականութեան կը հետեւի մօտ 15 միլիոն մարդ, գլխաւորաբար Իսրայէլի եւ Ամերիկայի Միացեալ Նահանգներու մէջ:

պետությունն մը չկայ: Խորհրդապաշտական Կաբալայի ընթացքին, անհատը, պէտք է գիտակցորէն յաղթահարէ առօրեայ ու սովորական «ես»ը եւ մուտք գործէ հոգեզմայլանքի (Ecstasy) մէջ: Գործնական այս ընթացքը գաղտնուսոյց է եւ կարելի է սորվիլ, սակայն ամէն մարդ չի կրնար յաջողութեան հասնիլ, այլ խօսքով, հոգեզմայլանքի մէջ մտնել եւ աստուածիմաստութեան (Theosophy) տիրանալ: Կաբալայի պատմական աւանդութիւնը նաեւ կ'ընդգրկէ՝ Ճանաչականութեան (Gnosticism), Նոր-Պլատոնականութեան (Neoplatonism) եւ Քրիստոնէութեան յատուկ տարրեր:

8. Քրիստոնէութիւն¹⁸ (Christianity)

Քրիստոնէութեան պարագային, խորհրդապաշտութիւնը իր գործընթացով, նպատակ ունի Աստուծոյ հետ միութիւն մը (լատ.՝ unio mystica), այլ խօսքով, խորհրդապաշտութեան միջոցով, անհատը Աստուծոյ անմիջական ներկայութեան գիտակցութիւնը պէտք է ունենայ:

Քրիստոնէայ խորհրդապաշտութեան ամենաբեղուն շրջանը եղած է Միջնադարը: Այս նիւթը պիտի ներկայացուի որոշ մանրամասնութեամբ (յաջորդ թիւով):

ԴՈԿՏ. ՍԱՐԳԻՍ Ա. ՔԷՀԵԱՆԱՆ


Գերմանիա

(Շար. 6)

¹⁸ Քրիստոնէութիւն (Christianity).- որպէս միաստուածեան կրօն, ունի աւելի քան 2 հազար տարուան պատմութիւն: Քրիստոնէութեան Սուրբ Գիրքը կազմուած է Հին եւ Նոր Կտակարաններէն: Հին Կտակարանը, նոյնինքն Հրեաներու Թանախն է, իսկ Նոր Կտակարանը, իր չորս աւետարաններով եւ առաքեալներու գրութիւններով, կը ներկայացնէ Յիսուս Քրիստոսը, որպէս՝ Որդի Աստուծոյ եւ միաստուածեան անբաժան *Երրորդութեան* (Հայր - Որդի - Հոգի) երկրորդ անձը, որ միաժամանակ ճշմարիտ Աստուած է ճշմարիտ մարդ է: Ան, մարդոց մեղքերուն համար նախ մարդացաւ ապա խաչուեցաւ, թաղուեցաւ եւ երրորդ օրը յարութիւն առաւ:

Քրիստոնէութեան պատմութեան ընթացքին, յառաջացան հետեւեալ երեք գլխաւոր ճիւղաւորումները.- Կաթոլիկ (Catholic), Բողոքական (Protestant) եւ Ուղղափառ (Orthodox) եկեղեցիները: Այսօր, Քրիստոնէութեան կը հետեւի աւելի քան 2,2 միլիարդ հաւատացեալ, որով ան կը նկատուի աշխարհի, քանակական տեսանկիւնէն՝ առաջին կրօնը:

ՆՈՐ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹԻՒՆ



«ՀԱՍԿ ՀԱՅԱԳԻՏԱԿԱՆ ՏԱՐԵԳԻՐՔ»

Հրամանաւ Ն.Ս.Օ.Տ.Տ. Արամ Ա. Կաթողիկոսին, Մեծի Տանն Կիլիկիոյ Կաթողիկոսութեան տպարանէն լոյս տեսաւ «Հասկ հայագիտական տարեգիրք»ին ԺԳ. տարուան թիւը՝ ձօնուած Ս. Ներսէս Շնորհալի Հայրապետի վախճանման 850-ամեակին: Հատորին խմբագիրն է՝ Գերշ. Տ. Շահան Արք. Սարգիսեան:

Հրատարակութիւնը կ'իրականանայ շնորհիւ մեկենասութեան Մհեր Տէր Յովհաննէսեանի եւ ընտանիքին՝ ի յիշատակ Սաթիկ Տէր Յովհաննէսեանի:

Արամ Ա. Վեհափառ Հայրապետին՝ Շնորհալի Հայրապետին 850-ամեակին առիթով հրապարակուած կոնդակով բացուող գիրքը կը պարունակէ նոյն ամեակին առնչուող տասնչորս յօդուածներ, եօթ արխիւային եւ պատմական յօդուածներ, երաժշտական չորս մշակումներ եւ մատենագիտական երկու յօդուածներ:

Հատորը կրնաք ստանալ այցելելով Կաթողիկոսարանի գրախանութր:

ՊԱՇՏՈՆԱԿԱՆՔ

**ԵՐԿՈՒ ՎԵՐԱՓՈՒ ՀԱՅՐԱՊԵՏՆԵՐՈՒՆ ՄԻՋԵՒ
ԽՈՐՀՐԴԱԿՑՈՒԹԻՒՆՆԵՐԸ ԿԸ ՇԱՐՈՒՆԱԿՈՒԻՆ**

• Երեքշաբթի, 7 Մայիս 2024-ի երեկոյան, Ն.Ս.Օ.Տ.Տ. Արամ Ա. Կաթողիկոս Մեծի Տանն Կիլիկիոյ, կապ հաստատելով Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ. Ամենայն Հայոց Կաթողիկոսին հետ, իր ամբողջական զօրակցութիւնը յայտնեց Էջմիածնայ Կաթողիկոսութեան Գերագոյն Հոգեւոր Խորհուրդին կողմէ հրապարակուած Հայաստանէն ներս ստեղծուած կացութեան առընչուած յայտարարութեան գծով:



Վեհափառ Հայրապետները տեսակետներու փոխանակում ունեցան Հայաստանը դիմագրաւող ներկայ տագնապներուն շուրջ, մասնաւորաբար Տաւուշի մարզէն ներս ստեղծուած կացութեան լոյսին տակ: Անոնք որոշեցին շարունակել իրենց խորհրդակցութիւնները՝ շեշտելով Հայ եկեղեցւոյ առանցքային դերակատարութիւնը Հայ ժողովուրդը ու Հայաստանը յուզող տագնապներու յաղթահարման գծով:

• Իմանալէ յետոյ Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ. Ամենայն Հայոց Կաթողիկոսին Սարդարապատ մուտքի ժամանակ ոստիկաններուն կողմէ եղած խոչընդոտին մասին, Նորին Սրբութիւն Արամ Ա. Կաթողիկոսը խստօրէն դատապարտեց այս մեծապես ամօթալի երեւոյթը, որ խոտոր կը համեմատի մեր ազգի վարքագիծին եւ բարոյական ու հոգեւոր արժեքներուն: Ապա ան ըսաւ. «Ո՞ր կ'երթայ Հայաստանը՝ մեր սիրելի Հայրենիքը, որուն անկախութեան ու յաւերժութեան ի խնդիր դարեր շարունակ մեր սուրբերը աղօթեցին, մեր նախահայրերը ստեղծագործեցին եւ մեր նահատակները իրենց արիւնը թափեցին: Ինքնաքանդումի ու ինքնասպանութեան ներկայ ընթացքը պետք է կա՛նգ առնէ: Մեր եկեղեցին չի՛ կրնար անտարբեր մնալ ի տես Հայրենիքի քանդումին»:

• Արամ Ա. Կաթողիկոս իր Մայիս 28-ի պատգամին մեջ կարեւորութեամբ շեշտեց Հայաստանի անկախութիւնը հողային ամբողջականութեամբ ու անվտանգութեամբ ամուր պահելու հրամայականը, որպէս գերագոյն արժէք մեր ողջ ազգին համար: Նորին Սրբութիւնը նաեւ կոչ ուղղեց մեր ժողովուրդի զաւակներուն, ամէն ջանք ի գործ դնել յաղթահարելու բոլոր տեսակի մարտահրաւերներն ու տագնապները, անխախտ միասնակա- նութեամբ ու միակամութեամբ՝ որպէս երաշխիք ներքին հզօրութեան:

Ապա Վեհափառ Հայրապետը ըսաւ. «Այս օրերուն, հայրենի մեր ժողովուրդի զաւակները խորապէս մտահոգ Հայրենիքի անկախութեան ու նոյնիսկ գոյութեան սպառնացող վտանգներուն նկատմամբ, իրենց հաւաքական ընդվզումը եւ պահանջքը կ'արտայայտեն: Ինչպէս Ս. Էջմիածինը իր վերջին յայտարարութեան մեջ կը յորդորէ, նաեւ մեր Ս. Աթոռին թելադրութիւնն է հանրային գործողութիւններու մասնակիցներուն, իրենց բողոքը արտայայտելու «բացառապէս օրէնքի սահմաններէն ներս առաջ- նորդուելու զգօնութեամբ եւ չտարուելու հնարաւոր սադրանքներով»: Միաժամանակ, դատապարտելով ոստիկաններու կողմէ անհամաչափ ոյժի եւ բռնութեան կիրարկումը, կոչ կ'ուղղենք որ «յարգեն հայրենակից- ներուն հիմնարար իրաւունքները, ազատութիւնները, պատիւն ու արժա- նապատուութիւնը եւ գործեն միմիայն մարդասիրութեան եւ օրինակա- նութեան սկզբունքներու խստագոյն պահպանութեամբ»:



**ԱՐԱՄ Ա., ԹԱՌԻԱՏՐՈՍ Բ. ԵՒ ԱՖՐԱՄ Բ.
ՀՈԳԵՒՈՐ ՊԵՏԵՐՈՒ ՀԱՆԴԻՊՈՒՄԸ ԳԱՅԻՐԷՒ ՄԷՋ**

Ուրբաթ, 10 Մայիս 2024-ին, Մեծի Տանն Կիլիկիոյ Կաթողիկոս՝ Ն.Ս.Օ. Տ.Տ. Արամ Ա., Ղպտի Եկեղեցւոյ Հոգեւոր Պետ՝ Ն.Ս. Թառուարոս Բ. Պատրիարք եւ Ասորի Եկեղեցւոյ Հոգեւոր Պետ՝ Ն.Ս. Աֆրամ Բ. Պատրիարք միօրեայ հանդիպում մը ունեցան Գահիրէի Ղպտի Եկեղեցւոյ Պատրիարքարանին մէջ: Յիշեալ հանդիպումը մաս կը կազմէ երեք Հոգեւոր Պե- տերու միջեւ երկու տարին անգամ մը տեղի ունեցող աշխատանքային հանդիպումներու շարքին:

Երեք եկեղեցիներու գործակցական կառոյցը հիմնուած է 1996-ին՝ Վեհափառ Հայրապետին առաջարկով եւ Շնուտա Գ. Պատրիարքին ու Չաքքա Ա. Պատրիարքին հաւանութեամբ: Առաջին հանդիպումը տեղի ունեցած է 1998-ին, Գահիրէ: Նոյն հանդիպման ընթացքին նշանակուած



Է գործադիր վարչություն մը՝ իւրաքանչիւր եկեղեցւոյ կողմէ երկու ներկայացուցիչներու մասնակցութեամբ: Անցնող տարիներու ընթացքին, ճշդ-լած ուղեգիծին համաձայն, գործադիր վարչութիւնը ունեցած է իր տարեկան հանդիպումները, իսկ Հոգեւոր Պետերը հանդիպած են երկու տարին անգամ մը, յաջորդաբար՝ Անթիլիասի, Դամասկոսի եւ Գահիրէի մէջ: Գործադիր վարչութեան Մեծի Տանն Կիլիկիոյ Կաթողիկոսութեան ներկայացուցիչները եղած են՝ Գերշ. Տ. Սեպուհ Արք. Սարգիսեանն ու Գերշ. Տ. Նարեկ Արք. Ալեմեզեանը:

Երեք Հոգեւոր Պետերը քննարկեցին իրենց հանդիպումին նախորդող գործադիր վարչութեան երկօրեայ աշխատանքային ժողովէն բխած նիւթերուն ամփոփումն ու առաջարկները եւ աւարտին հրապարակեցին միացեալ յայտարարութիւն մը: Յիշեալ յայտարարութեան մէջ, ողջունելէ ետք իրենց եկեղեցւոյ հաւատացեալները, անոնք կարելորութեամբ շեշտեցին շրջանէն ներս քրիստոնեական ներկայութիւնը աւելի կազմակերպ ու աշխոյժ դարձնելու հրամայականը, դատապարտեցին Իսրայէլի կողմէ Կազայի դեմ շղթայագերծուած պատերազմը եւ շեշտեցին քրիստոնեայիսլամ համակեցութեան անհրաժեշտութիւնը՝ փոխադարձ յարգանքի ու վստահութեան հիման վրայ:

Անդրադառնալով միջ-եկեղեցական գործակցութեան ու աստուածաբանական երկխօսութեան, անոնք առաջնահերթ կարելորութիւն ընձայեցին Արեւելեան Ուղղափառ եկեղեցիներուն ունեցած աստուածաբանական երկխօսութեան՝ Կաթողիկ եկեղեցւոյ եւ Ուղղափառ եկեղեցիներու ընտանիքին հետ, եւ այդ ծիրէն ներս քննարկեցին կարգ մը խնդիրներ. միա-

Ժամանակ անոնք ընդգծեցին վերանորոգ թափով միջ-եկեղեցական գործակցությունը շարունակելու կարելիությունը, մասնաւորաբար եկեղեցիներու Համաշխարհային Խորհուրդին եւ Միջին Արեւելքի եկեղեցիներու Խորհուրդին հետ:

Ժողովական աշխատանքներուն ամընթեր, երեք Հոգեւոր Պետերը ամիթ ունեցան խորհրդակցելու իրենց եկեղեցիներուն եւ ընդհանրապէս Միջին Արեւելքին ամնչուած կարգ մը հարցերու շուրջ:

Գործադիր վարչութեան ժողովին մասնակցեցան Գերշ. Տ. Նարեկ Արք. Ալեմեզեան, Գերշ. Տ. Մակար Արք. Աշգարեան եւ Հոգշ. Տ. Սարգիս Կրդ. Աբրահամեան:



ԱՐԱՄ Ա. ԿԱԹՈՂԻԿՈՍ ԻՐ ՑԱԲԱԿՑՈՒԹԻՒՆԸ ԿԸ ՅԱՅՏԵ ԻՐԱՆԻ ԻՍԼԱՄԱԿԱՆ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹԵԱՆ ՀՈԳԵՒՈՐ ՊԵՏԻՆ

Երկուշաբթի, 20 Մայիս 2024-ին, Արամ Ա. Կաթողիկոս Իրանի Իսլամական Հանրապետութեան Հոգեւոր Առաջնորդ՝ Այաթոլլահ Ալի Խամենեին յղած նամակով, իր խոր ցաւակցութիւնը յայտնեց ուղղաթիռի արկածի հետեւանքով իրենց կեանքը կորսնցուցած Իրանի Իսլամական Հանրապետութեան Նախագահ՝ Ալ-Սայետ Իպրահիմ Ռայիսիի, Արտաքին Գործոց Նախարարին, Արեւելեան Ատրպատականի Կառավարիչին եւ անոնց ուղեկցող պետական անձնաւորութիւններու մահուան անխնայ:

Նորին Ս. Օծութիւնը Մեծի Տանն Կիլիկիոյ Կաթողիկոսութեան եւ Իրանի Հայ համայնքին անունով նաեւ իր վշտակցութիւնը յայտնեց զոհուածներու ընտանիքներուն եւ Իրանի ժողովուրդին:

Վեհափառ Հայրապետը յիշեց, որ Միջին Արեւելքի պատմութեան տագնապալից ներկայ ժամանակներուն, Իրանի պետական պատասխանատուներուն ողբերգական մահը կրնայ նոր դժուարութիւններ ստեղծել՝ ի խնդիր արդարութեան ու խաղաղութեան համար տարուող աշխատանքներուն: Վստահ ենք, որ Աստուծոյ օժանդակութեամբ կարելի պիտի ըլլայ յաղթահարել ներկայ տագնապը եւ երկիրը առաջնորդել դէպի առաւել զարգացում, ինչպէս նաեւ շրջանէն ներս արդարութեան վրայ հիմնուած ամբողջական ու մնայուն խաղաղութիւն:



**ՀԱՆԴԻՊՈՒՄ ԱՐԱՄ Ա. ՎԵՀԱՓԱՌԻ ՀԱՅՐԱՊԵՏԻՆ
ԵՒ ՌԱՅԻ ՊԱՏՐԻԱՐԹԻՆ ՄԻՋԵՒ**

Երկուշաբթի, 10 Յունիս 2024-ին, Պեքրբեի Մարոնիթ Պատրիարքարանին մեջ հանդիպում մը կայացաւ Ն.Ա. Ռայի Պատրիարքին եւ Ն.Ս.Օ. Տ.Տ. Արամ Ա. Վեհափառ Հայրապետին միջեւ:

Հանդիպման ընթացքին քննարկուեցան Լիբանանի ներկայ կացութեան հետ աղերս ունեցող խնդիրներ ու մտահոգութիւններ, յատկապէս՝ Հանրապետութեան Նախագահի ընտրութեան հարցը: Նորին Սրբութիւնը տեղեակ պահեց Մարոնիթ Պատրիարքը, որ պիտի մեկնի Վատիկան՝ Արեւելեան Համալսարանին մեջ դասախօսութիւն մը տալու, ինչպէս նաեւ հանդիպում մը ունենալու Նորին Սրբութիւն Ֆրանսիս Պապին հետ:



Երկու Հոգեւոր Պետերու միջեւ տեսակետերու փոխանակում տեղի ունեցաւ Նախագահական ընտրութեան գծով Ֆրանսիս Պապին փոխանցուելիք տեղեկութիւններուն շուրջ:

Ապա, Վեհափառ Հայրապետը ճաշի հիւրը եղաւ Ռայի Պատրիարքին:

Պեքրբեէն ետք, Արամ Ա. Կաթողիկոս հանդիպում մը ունեցաւ Լիբանանի մօտ Պապական նուիրակ՝ Փաուլօ Պորճիա Եպիսկոպոսին հետ: Հանդիպման գլխաւոր նիւթն էր Նորին Ս. Օծութեան Վատիկանի մեջ Ֆրանսիս Պապին եւ այլ պատասխանատուներուն հետ ունենալիք հանդիպումները:



Յայտնենք, որ նոյն օրը առաւօտեան, հեռաձայնային զրոյց մը տեղի ունեցաւ երկու Վեհափառ Հայրապետներուն միջեւ՝ թէ՛ Հայաստանէն ներս տեղի ունեցող զարգացումներուն եւ թէ Ֆրանսիս Պապին հետ Արամ Ա. Կաթողիկոսին ունենալիք հանդիպման գծով:



ԱՐԱՄ Ա. ԿԱԹՈՂԻԿՈՍ ԿԸ ՄԵԿՆԻ ՎԱՏԻԿԱՆ

Երեքշաբթի, 11 Յունիս 2024-ի առաւօտուն, միօրեայ այցելութեամբ Արամ Ա. Վեհափառ Հայրապետը մեկնեցաւ Վատիկան: Նորին Սրբութիւնը հրաւիրուած էր Վատիկանի Արեւելեան համալսարանին մէջ դասախօսութիւն տալու՝ «Կրօնքին դերը աշխարհաբաղաբականութեան մէջ» նիւթին շուրջ:

Վատիկան կատարելիք իր միօրեայ այցելութեան ընթացքին, ան յաջորդաբար հանդիպումներ ունեցաւ Ն.Ս. Ֆրանսիս Պապին, Վատիկանի Արտաքին Գործոց Նախարարին, միջ-եկեղեցական յարաբերութեանց բաժանմունքի նախագահին եւ Արեւելեան Կաթոլիկ եկեղեցիներու բաժանմունքի նախագահին հետ:

Սոյն այցելութեան Վեհափառ Հայրապետին կ'ընկերակցեր Կաթողիկոսարանի Միջին Արեւելքի միջ-եկեղեցական եւ քրիստոնեայ-իսլամ յարաբերութեանց բաժանմունքի վարիչ՝ Յոզ. Տ. Սարգիս Վրդ. Արքահամեան:

**«ԿՐՕՆԻ ԴԵՐԸ ԱՆԺԻՏԵԼԻ Է
ԱՇԽԱՐՀԱՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹԵԱՆ ՄԷՋ»**

Նորին Սրբութիւնը այս հաստատումը կատարեց 11 Յունիսին Վատիկանի Արեւելեան համալսարանին մէջ տուած դասախօսութեան ընթացքին: Դասախօսութիւնը կազմակերպուած էր յիշեալ համալսարանի, Կրեկորեան համալսարանի եւ Լիբանանի դեսպանատան միացեալ նախաձեռնութեամբ:



Արամ Ա. Կաթողիկոս նախ պարզեց հին դարերէն սկսեալ կրօնի առանցքային դերը աշխարհաբաղաբականութեան մէջ: Յիշելէ ետք, թէ պատմութեան ընթացքին կրօնի դերը հոլովոյթի ենթարկուած է աշխարհաբաղաբական պայմաններու փոփոխութեան զուգահեռ, ընդգծեց միաստուածեան կրօններու (հրեութիւն, քրիստոնէութիւն, իսլամութիւն) ունեցած կեդրոնական դերը յատկապէս Եւրոպայի եւ Միջին Արեւելքի՝ քաղաքական, մշակութային եւ ընկերային մարզերէն ներս:

Ապա, Վեհափառ Հայրապետը իր խօսքը կեդրոնացուց Միջին Արեւելքի աշխարհաբաղաբական զարգացումներուն ծիրէն ներս կրօնի ունե-

ցած իւրայատուկ դերին վրայ՝ իր դրական ու բացասական երեսներով ու հետեւանքներով: Այս շրջագծէն ներս Նորին Ս. Օծութիւնը անդրադարձաւ հետեւեալ կէտերուն.-

Ա) Հաւատք եւ բանականութիւն: Միաստուածեան կրօնները տարբեր մօտեցում ունին հաւատքի ու բանականութեան փոխ յարաբերութեանց գծով: Որքանո՞վ բանականութիւնը կը հակակշռէ հաւատքի հասկացողութեան ու արտայայտութեան վրայ. որքանո՞վ հաւատքը նկատի կ'առնէ բանականութեան մօտեցումները. ինչպէ՞ս կարելի է ներդաշնակութիւն ստեղծել այս երկուքին միջեւ՝ հեռու մնալով մէկուն կամ միւսին բացարձակ գերակայութենէն:

Բ) Կրօնին եւ քաղաքականութեան իւրայատուկ յարաբերութիւնը: Գիշդ չէ կրօնը նոյնացնել քաղաքականութեան հետ, միաժամանակ կարելի չէ կրօնը քաղաքականութենէն հեռու պահել: Դարձեալ, ինչպէ՞ս կարելի է ներդաշնակութիւն ստեղծել անոնց յարաբերութեան մէջ, մէկ կողմէ՝ առանց քաղաքականացնելու կրօնը եւ միւս կողմէ՝ առանց կրօնական բովանդակութիւն եւ ուղղութիւն տալու քաղաքականութեան:

Գ) Կրօնին թե՛ միացուցիչ եւ թե՛ բաժանարար ազդակ ըլլալը: Այսպէս կը վկայէ պատմութիւնը եւ ներկայ իրականութիւնը: Իր բնոյթով ու նպատակով կրօնին դերը միշտ կը մնայ միացնող եւ հաշտեցնող, այլ խօսքով՝ կամուրջի դեր ունի կրօնը: Սակայն կրօնը նաեւ օգտագործուած է քաղաքական նպատակներու, եւ հետեւաբար, պատճառ դարձած է յաճախ բաժանումներու ու պատերազմներու:

Վերոյիշեալ երեք երեւոյթներու մասին անդրադառնալէ ետք, Վեհափառ Հայրապետը յիշեց հետեւեալ կէտերը, որոնք պէտք է կազմեն կրօնին իւրայատուկ դերը ներկայ ընկերութեան ու յատկապէս Միջին Արեւելքէն ներս.-

1) Փոխադարձ վստահութեան ամրապնդում: Կարելի չէ մնայուն ու ամբողջական խաղաղութիւն հաստատել, երբ կը պակսի փոխադարձ վստահութիւնը: Որքան ալ քաղաքական ծիրէն ներս խաղաղութեան դաշնագիրներ ստորագրուին, երբ ժողովուրդներու միջեւ փոխադարձ վստահութիւնը կը պակսի, խաղաղութիւնը միշտ կը մնայ փխրուն ու ժամանակաւոր:

2) Արդարութեան հիման վրայ հաստատուած խաղաղութիւն: Որքան ալ խաղաղութեան պայմանները ըլլան փոխադարձաբար ընդունելի, արդարութիւնը պէտք է կազմէ հիմքը մնայուն խաղաղութեան:

3) Կրօնի կենսական դերը ընկերութեան կեանքէն ներս մարդկային իրաւունքներու պաշտպանութեան գծով: Ընկերութիւնը կառուցուած պէտք է ըլլայ կառավարման այնպիսի կառոյցներով ու սկզբունքներով, ուր թափանցիկութիւնն ու հաշուետուութիւնը դառնան մղիչ ուժերը ընկերութեան կեանքին:

4) **Պայքար՝ արմատական շարժումներու դեմ:** Ներկայ ժամանակներուն քաղաքական ու գաղափարախօսական նպատակներէ մեկնած՝ արմատական շարժումներ յաճախ կը յառաջանան ընկերութիւններու կեանքէն ներս: Կրօնը զգոյշ պետք է ըլլայ նման շարժումներուն կողմէ շահագործուելէ եւ պետք է դառնայ բարոյական ու հոգեւոր արժեքներու պահպանը:

5) **Կրօնին առանցքային դերը տագնապներու կանխազգուշացման մէջ:** Տագնապներ լուծելը շատ ակելի դժուար է, քան զանոնք կանխարգիլելը: Կրօնը կոչուած է որպէս բարոյական հեղինակութիւն՝ կարելոր նպաստ բերելու հարցերու լուծման եւ կողմերու միջեւ հասարակաց յայտարարներ որոնելու ուղղութեամբ:

Յիշեալ կետերուն անդրադառնալով, Նորին Սրբութիւնը կարելորութեամբ ընդգծեց կրօնին իւրայատուկ դերը: Իր խօսքի աւարտին, անդրադառնալով Միջին Արեւելքին պարզած ներկայ փոթորկալից կացութեան, ան յիշեցուց, թէ կրօնը Միջին Արեւելքի ընկերութեան պատմութեան ու ներկայ կեանքին մէջ իր ունեցած գործօն ներկայութեամբ եզակի դերակատարութեամբ կրնայ կարելոր նպաստ բերել հարցերու լուծման, խաղաղ գոյակցութեան ամրապնդման եւ փոխադարձ վստահութեան ծաւալման՝ պատմական տուեալներէն ու արդարութեան սկզբունքներէն մեկնած: Վեհափառ Հայրապետը առաջարկեց, որ երեք կրօններու բարձրագոյն ներկայացուցիչները հանդիպին Երուսաղէմի մէջ, ուր պատմականօրէն ամրագրուած է անոնց ներկայութիւնը եւ խաղաղութեան կոչ ուղղեն:

Նորին Ս. Օծութեան դասախօսութենէն առաջ յաջորդաբար խօսք առին համալսարանի Տնօրէնը, Վատիկանի մօտ Լիբանանի Դեսպանը եւ Վատիկանի միջ-եկեղեցական յարաբերութեանց բաժանմունքի նախագահ Կարտինալ Քոխը: Անոնք անդրադառնալէ ետք Նորին Սրբութեան կենսագրական գիծերուն՝ շեշտեցին, թէ ան միջազգային դեմք է՝ միջ-եկեղեցական ու միջ-կրօնական աշխարհէն ներս իր ունեցած տարիներու փորձառութեամբ, հեղինակած գիրքերով եւ միջազգային համագումարներու մասնակցութեամբ:

Դասախօսութեան ներկայ էին Հայ Կաթողիկէ եկեղեցւոյ Հոգեւոր Պետ՝ Ռաֆայել Պետրոս ԻԱ. Հոգեւոր Տէրը, այլ առաքելութեամբ մը Հռոմ ժամանած Արաբական Միացեալ Էմիրութեանց, Քաթարի եւ Շրջակայից Հայոց Թեմի Առաջնորդ Գերշ. Տ. Մեսրոպ Արք. Սարգիսեանը, համալսարաններու դասախօսներ, դեսպաններ եւ Վատիկանի զանազան բաժանմունքներու պատասխանատուներ:

ՀԱՆԴԻՊՈՒՄ ՆՈՐԻՆ ՍՐԲՈՒԹԻՆ ՖՐԱՆՍԻՍ ՊԱՊԻՆ ՀԵՏ

Չորեքշաբթի, 12 Յունիս 2024-ին, Ն.Ս.Օ.Տ.Տ. Արամ Ա. Վեհափառ Հայրապետը Վատիկանի մեջ հանդիպում ունեցավ Նորին Սրբութիւն Ֆրանսիս Պապին հետ:

Հանդիպման ընթացքին, Արամ Ա. Կաթողիկոս նախ իր ջերմ շնորհակալութիւնը յայտնեց անցնող շրջանին Արցախի հարցին գծով անոր ցուցաբերած զօրակցութեան համար՝ միաժամանակ խնդրելով, որ նոյն զօրակցութիւնը շարունակուի Արցախի հայութեան միջազգային երաշխաւորութեամբ Արցախ վերադառնալու եւ Ազրպէյճանի մեջ գտնուող Հայ բանտարկեալներուն շուտափոյթ ազատ արձակման գծով: Վերոյիշեալ հարցերուն շուրջ Վեհափառ Հայրապետը նաեւ խօսեցաւ Վատիկանի Արտաքին Գործոց Նախարար՝ Կարտինալ Զալադըրին եւ Արեւելեան Կաթողիկ եկեղեցիներու գրասենեակի պատասխանատու՝ Կարտինալ Կիւճերոթին հետ:

Հանդիպման ընթացքին տեսակետներու փոխանակում տեղի ունեցաւ Վեհափառ Հայրապետին կողմէ առաջարկուած հետեւեալ կետերուն շուրջ.-

ա) Միջ-եկեղեցական յարաբերութիւններու առաւել ծաւալումը ու յարաբերութիւնը գործակցութեան վերածելու հրամայականը:

բ) Ս. Յարութեան տօնը բոլոր եկեղեցիներուն կողմէ միասնաբար նոյն թուականին նշելու հարցը:

գ) Երրորդ Վատիկանի ժողով մը գումարելու անհրաժեշտութիւնը՝ գործօն ներկայութեամբ ոչ-կաթողիկ եկեղեցիներուն:

դ) Լիբանանի մեջ քրիստոնեայ-իսլամ համակեցութեան ամրապնդումը եւ նոր նախագահի ընտրութիւնը:



ե) Ազրայեյճանի մեջ գտնուող Հայ քաղաքական բանտարկեալներու շուտափոյթ ազատ արձակումը:

զ) Արցախի հայութեան վերադարձը իր պապենական հողերը՝ միջազգային երաշխաւորութեամբ:

Յայտնենք, որ շաբաթներ առաջ Ռուս եկեղեցւոյ Հոգեւոր Պետ Զիրիլ Պատրիարքին ուղղած իր նամակին մեջ, Վեհափառ Հայրապետը առաջարկած էր Պատրիարքին, որուն հետ երկար տարիներու անձնական բարեկամական կապեր ունի, միջամտելու Ռուսիոյ Նախագահին մօտ, իր կարգին աշխատանք տանելու Ազրայեյճանի մեջ գտնուող Հայ քաղաքական բանտարկեալներու ազատ արձակման, ինչպէս նաեւ հոգեւոր ու մշակութային հարստութեանց ու ժառանգութեանց պահպանման համար:



ՎԱՏԻԿԱՆԻ ՄԵՋ ԱՅԼ ՀԱՆԴԻՊՈՒՄՆԵՐ

Ն.Ս.Օ.Տ.Տ. Արամ Ա. Կաթողիկոս յաջորդական հանդիպումներ ունեցաւ Վատիկանի հետեւեալ բաժանմունքներու բարձրաստիճան պատասխանատուներուն հետ.-

ա) Վատիկանի Վարչապետը նկատուող Կարտինալ Փարոլինի բացակայութեան, Վատիկանի Արտաքին Գործոց Նախարար՝ Կարտինալ Զալադրին հետ: Քննարկուեցան յատկապէս Լիբանանի դիմագրաւած ներկայ դժուարութիւնները եւ Ազրայեյճանի մօտ գտնուող Հայ քաղաքական բանտարկեալներու հարցը, ինչպէս նաեւ Լիբանանի Նախագահական ընտրութիւնը:

բ) Միջ-եկեղեցական յարաբերութեանց բաժանմունքի Նախագահ՝ Կարտինալ Զոխին հետ: Անդրադարձ կատարուեցաւ ընդհանրապէս միջ-եկեղեցական շարժումին դիմագրաւած ներկայ մարտահրաւերներուն եւ յատկապէս Կաթոլիկ եկեղեցւոյ ու Արեւելեան Ուղղափառ եկեղեցիներու միջեւ գոյութիւն ունեցող աստուածաբանական երկխօսութեան:

գ) Արեւելեան Կաթոլիկ եկեղեցիներու բաժանմունքի պատասխանատու՝ Կարտինալ Կիւճերոթին հետ: Քննարկուեցաւ միջին արեւելեան երկիրներու մեջ հաստատուած Կաթոլիկ եկեղեցիներու եւ Ուղղափառ ու Բողոքական եկեղեցիներու գործակցութիւնը եւ ընդհանրապէս քրիստոնեայ-իսլամ երկխօսութեան առնչուած հարցեր: Դարձեալ անդրադարձ կատարուեցաւ Արցախի ժողովուրդին միջազգային հովանաւորութեամբ վերադարձին եւ Ազրայեյճանի մօտ գտնուող Հայ բանտարկեալներու ազատ արձակման:

դ) Հաւատք եւ դաւանանք բաժանմունքի պատասխանատու՝ Կարտինալ Ֆերնանտեզի հետ: Քննարկուեցաւ աստուածաբանութիւնը վերարժեւորումի ենթարկելու կարելոթիւնը՝ ներկայ ժամանակներու մարտահրաւերներու լոյսին տակ:

Յայտնենք, որ Վատիկան կատարած իր կարճ այցելութեան ընթացքին Վեհափառ Հայրապետը հիւրը եղաւ Հոգեւոր Տիրոջ, որ ի պատիւ Նորին Սրբութեան ընթրիք մը սարքեց «Լեւոնեան» Վարժարանին մէջ: Նորին Ս. Օծութեան ի պատիւ նաեւ ընթրիք սարքեցին Վատիկանի մօտ Լիբանանի Դեսպան՝ Ֆարիտ Ալ-Խազէնը եւ Կարտինալ Զոհր:

Հանդիպումներու ընթացքին Նորին Սրբութեան կողքին էին Գերշ. Տ. Մեսրոպ Արք. Սարգիսեանն ու Հոգշ. Տ. Սարգիս Կրդ. Աբրահամեանը:



**ԼԻՔԱՆԱՆԻ ՀՈԳԵՒՈՐ ՊԵՏԵՐՈՒ ԶԱՆԴԻՊՈՒՄ
ՊԵՏՐՔԵԻ ՄԷՋ**

**«ՓՈԹՈՐԻԿԻ ՄԷՋ ՄՆԱՑԱԾ ԼԻՔԱՆԱՆԵԱՆ ՆԱԻՐ
ԱՆՍԻՋԱԿԱՆ ԿԱՐԻՔԸ ՈՒՆԻ ՆԱԻԱՊԵՏԻ»**

Ն.Ս.Օ.Տ.Տ. ԱՐԱՄ Ա. ԿԱԹՈՂԻԿՈՍ

Այսպես արտայայտուեցաւ Արամ Ա. Կաթողիկոս Երեքշաբթի, 25 Յունիս 2024-ին, Մարոնիթ եկեղեցւոյ կեդրոնատեղի Պետրքեի մէջ կայացած Լիքանանի քրիստոնէայ ու իսլամ Հոգեւոր Պետերու հաւաքին:

Մարոնիթ եկեղեցւոյ Պետ՝ Ռայի Պատրիարքին հրաւերով տեղի ունեցած յիշեալ հաւաքի ընթացքին, յաջորդաբար խօսք առին՝ Ռայի Պատրիարք, Կարտինալ Փարոլի, Արամ Ա. Կաթողիկոս եւ Աուտէ Արքեպիսկոպոս. իսկ իսլամներուն կողմէ՝ հանրապետութեան միւլքթի Շէյխ Տըրիան, Շէյխ Ապի Մունա եւ Շէյխ Ալի Զատուր: Բոլորը շեշտեցին նախագահական շուտափոյթ ընտրութեան կարեւորութիւնը:

Վեհափառ Հայրապետը առիթը ունեցաւ Կարտինալ Փարոլիի հետ զրոյց ունենալու եւ Լիքանանի նախագահական ընտրութեան գծով իր տեսակետը պարզելու. ան նաեւ անդրադարձաւ Հայաստան-Ազրայեյճան յարաբերութեան եւ Արցախի ժողովուրդի միջազգային երաշխաւորութեամբ վերադարձին ու Հայ ռազմագերիներու հարցին:

Յայտնենք, որ այս հարցերուն շուրջ, Նորին Ս. Օծութիւնը անդրադարձած էր Վատիկանի մէջ եւս իր ունեցած հանդիպումներու ընթացքին:



ՏՕՆԱԿԱՆ

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹԵԱՆ 106-ԱՄԵԱԿԻ
ԵՒ ԱՐԱՄ Ա. ԿԱԹՈՂԻԿՈՍԻ ԱՆՈՒԱՆԱԿՈՉՈՒԹԵԱՆ ՆՇՈՒՄ՝
ԱՆԹԻԼԻԱՍԻ ՄԷՋ**

Նախագահութեամբ ու հանդիսապետութեամբ Ն.Ս.Օ.Տ.Տ. Արամ Ա. Կաթողիկոսին, Անթիլիասի Մայրավանքի «Ս. Գրիգոր Լուսաւորիչ» Մայր Տաճարին մէջ, Կիրակի, 25 Մայիս 2024-ին, Գերշ. Տ. Թորգոմ Արք. Տօնոյեանի ձեռամբ մատուցուած Ս. եւ Անմահ Պատարագի ընթացքին կատարուեցաւ Հանրապետական Մաղթանք եւ Հայաստանի դրօշի օրհնութիւն՝ Հայաստանի Ա. Հանրապետութեան հռչակման 106-ամեակին առիթով, ինչպէս նաեւ՝ հոգեհանգրստեան պաշտօն անկախութիւնը կերտելու ճամբուն վրայ նահատակուած մեր քաջարի հերոսներու հոգիներուն համար:

Արդարեւ, Ս. Պատարագի ընթացքին, յաւուր պատշաճի իր քարոզին մէջ Թորգոմ Սրբազան Հայրը կեդրոնացաւ յոյսի կարեւորութեան վրայ՝ թուելով Հայոց Պատմութեան վերիվայրումներու ընթացքին յոյսը չկորսնցնելու արժանիքը Հայ ազգին: Ան ըսաւ, որ իւրաքանչիւր անհատ, երկինքէն երկիր ձգուած յոյսի թելին կառչած ըլլալով՝ լաւատեսութեամբ կը նայի կեանքին, որովհետեւ յոյս տուողը Աստուած ինքն է եւ «յոյսը ամօթով չի ձգեր» (Հո 5.5): Անդրադառնալով Մայիս 28-ին, ան նշեց, որ 1918 թուականը Հայ ժողովուրդի ներքին յոյզերուն ու յոյսերուն կենդանացման նոր թուական մը դարձաւ, իսկ այդ թուականէն 50 տարիներ ետք, 1968-ին, նոյն այս Մայրավանքին մէջ եւ նոյն այս Ս. Խորանին վրայ, Վեհափառ Հայրապետը ստացաւ քահանայական իր օծումը եւ դարձաւ Արամ Աբղ. աւելին. ա՛ն եւս նոր զարթօնք բերաւ մեր Ս. Աթոռին՝ իր ծառայական եւ առաջնորդական նուիրումով: Վկայակոչելով



Եղիա մարգարէի եւ անոր աշակերտ ու հոգեգաւակ՝ Եղիսէ մարգարէի պատմութիւնը, ուր վերջինս երեք անգամ կը հաստատէ Եղիա մարգարէի կողքին ըլլալու իր վճռակամութիւնը՝ այնքան ատեն, որ մարգարէն ողջ է ու Աստուած կայ, Թորգոմ Արք., յանուն Կիլիկեան Ուխտեալ Միաբանութեան եւ հաւատացելոց, վերանորոգեց Արամ Ա. Կաթողիկոսի կողքին կանգնելու վճռակամութիւնը: Քարոզի աւարտին, Նորին Ս. Օծութեան անուանակոչութեան առիթով, Սրբազան Հայրը աղօթք բարձրացուց առ Աստուած՝ Կաթողիկոսին արեւշատութեան եւ երկար ծառայութեան ու գահակալութեան համար:

Արարողութեան աւարտին, հաւատացեալները, որոնց շարքին էին Կաթողիկոսութեան Ազգ. Կեդր. Ժողովի անդամները, Պուրճ Համուտի Քաղաքապետը, Հայրենիքէն ժամանած Հ.Մ.Ը.Մ. Արցախի մեկուսի շրջանի սկաուտներն ու Մայրավանքի Կիրակնօրեայ վարժարանի աշակերտները, ուղղուեցան Վեհարանի դահլիճ, ուր Դպրեվանքի սաներուն կողմէ տեղի ունեցաւ գեղարուեստական յայտագիր մը, անկախութեան գլխաւոր կերտիչին՝ Արամ Մանուկեանի անունը կրող Արամ Ա. Վեհափառ Հայրապետին անուանակոչութեան: Կիրակնօրեայ վարժարանի աշակերտները, իրենց ձեռքին ունենալով եռագոյն դրօշ ու ձեռնային աշխատանքներ, Մայիս 28-ի շունչով զարդարեցին դահլիճը:

Դպրեվանքի սաները, իրենց գեղեցիկ երգեցողութեամբ եւ արտասանութեամբ, վերակոչեցին Մայիսեան ոգին: Դպրեվանեցիներուն անունով ուղերձ արտասանեց Գ. Ընծայարանէն Բրշ. Վարդան Սրկ. Ասայեան: Ան ըսաւ, որ թագաւորութիւն կորսնցուցած, բռնատիրութեան տակ ապրած ու, աւելին. Ցեղասպանութիւն վերապրած ժողովուրդի մը անկախութիւն կերտելը կ'ա-



պացուցեց ազգին ազատատենչ ու անկոտրում կամքն ու անսասան հաւատքը: Այս իմաստով ան յիշեցուց «սերունդներ, դուք ձեզ ճանաչէք Սարգարապատից» բառերուն խորհուրդը: Դպրեվանեցի սարկաւազը նաեւ անդրադարձաւ Արամ Ա. Վեհափառ Հայրապետին անուանակոչութեան ուրախ առիթին եւ ընդգծեց Արամ Մանուկեանի նման իրաւապահանջի կազմուածքը Նորին Սրբութեան: Ան դիտել տուաւ, որ ան Մեծի Տանն Կիլիկիոյ Կաթողիկոսութիւնը դարձուցած է Հայութեան համախմբումի կեդրոն եւ միջազգային յարաբերութիւններու լուսաւոր փարոս: Վերջապէս, բոլորին անունով ան բարեմաղթանքներով շնորհաւորեց Նորին Ս. Օծութեան անուանակոչութեան տունը:

Ապա, դահլիճ մուտք գործեցին Արցախէն ժամանած խումբ մը Հ.Մ. Ը.Մ.ական սկաուտներ եւ Վեհափառ Հայրապետին յանձնեցին Արցախի դրօշը՝ ըսելով. «Վեհափառ Տէր, այս դրօշը, որ Արցախէն բերած ենք, կը փափաքինք Ձեզի փոխանցել՝ այն յոյսով, որ մօտիկ ապագային, Ձեր ձեռքով, զայն կը ծածանեցնէք Արցախի մէջ»:



Հուսկ, Նորին Ս. Օծութիւնը ուղղեց իր Հայրապետական պատգամը: Ան ըսաւ, որ պատմութիւնը կը վկայէ, որ ազգեր կ'անմահանան իրենց արժէքներով ու իտէալներով, իսկ անկախութիւնը ազգի մը գերագոյն եւ սրբազան արժէքն է: Ան յայտնեց, որ Հայ ժողովուրդը, իր ծագումէն ի վեր, ազատատենչ եղած է եւ միշտ ալ պայքարած է վասն անկախութեան: «Անկախութեան ոգին, տեսիլք եւ մանաւանդ անկախութիւն իրագործելու հաւաքական նուիրումն ու վճռակամութիւնը, Հայոց Պատմութեան մէջ եղած է տիրական եւ առանցփային ներկայութիւն, պարտութիւններ կրելով հանդերձ՝ միշտ վառ մնացած է Հայրենիքը վերակերտելու Հայ ժողովուրդի կամքը»:

Վեհափառ Հայրապետը շեշտեց պատմութեան դառնալու եւ անկէ բխած պատգամին ականջալուր ըլլալու հրամայականը, որպէսզի կարելի ըլլայ

պատմութեան ոգին մեր հաւաքական եւ անհատական կեանքին մէջ ապրիլ: Ան ընդգծեց, որ Մայիս 28-ը սոսկ ամեակ մը չէ՛, այլ մեր պատմութեան բոլոր ժամանակներուն ամէնօրեայ պատգամ է. «Փաստօրէն, այսօր մեր ժողովուրդը շրջապատուած է ահաւոր տագնապներով եւ լուրջ մարտահրաւերներով: Հայաստանի ապագան այսօր հարցականի տակ է: Հայաստանի գոյութիւնը վտանգուած է: Որեւէ ժամանակէ աւելի այսօր կոչուած ենք Հայաստանի անկախութիւնը հզօրացնելու՝ Հայաստանի ամբողջականութիւնը պահելով ամուր, անվտանգութիւնը՝ հզօր, եւ մեր ժողովուրդի միասնականութիւնը՝ աւելի ամրապնդուած»: Ան ընդգծեց, որ բաւարար չէ՛ անկախութիւն ունենալ, պէտք է գայն պահել եւ այդ կ'ենթադրէ հաւաքական հաւատք, նուիրում ու պայքար:

Իր պատգամը ուղղելով հայրենի մեր ժողովուրդի զաւակներուն՝ Վեհափառ Հայրապետը ըսաւ. «Սա պահուն, Մեծի Տանն Կիլիկիոյ Կաթողիկոսութեան նստավայրէն պատգամ մը կ'ուղղեմ հայրենի մեր ժողովուրդին: Ճիշդ է, Հայաստանի անկախութեան հզօրացումը իւրաքանչի՛ր հայուն պարտքն է, ամէն տեղ, սակայն առաջին հերթին հայրենի մեր ժողովուրդին՝ պարտքն է: Սփիւռքի մէջ, երբ Հայաստանի անկախութիւնը դարձաւ պատմութիւն, մենք եռագոյն դրօշին տէ՛ր դարձանք, որովհետեւ եռագոյնին մէջ տեսանք մեր անկախութեան ոգին եւ անկախութեան հաւատարիմ ըլլալու մեր կամքը մնաց ամուր: Սովորական դրօշ չեղաւ մեզի համար եռագոյնը, այլ ուզեցինք անոր պատկերով, հաւատով, ոգիով, տեսլականով ու երազով տեսնել ազատ-անկախ Հայաստանը: Հետեւաբար, կը կրկնեմ, նախատագրական օրեր եւ ժամանակներ ապրող Հայաստանը՝ ի՛ր ժողովուրդով, Սփիւռքը եւ մեր համայն ազգը, կոչուած են ամուր պահել Հայաստանի անկախութիւնը՝ ինչ որ մենք ժառանգեցինք մեր պապերէն: Հայաստանի անկախութիւնը, որպէս սրբազան արժէք, պէտք է մնայ ամո՛ւր եւ ամբողջական»:

Շարունակելով իր խօսքը եւ ակնարկելով Անթիլիասի Մայրավանք ժամանած արցախցի սկառտներուն՝ ան ըսաւ, որ այս պատանիններուն մէջ ո՛չ թէ կը տեսնէ կորսուած Արցախը, այլ՝ վաղուան Արցախը՝ անգամ մը եւս շեշտելով, որ Մեծի Տանն Կիլիկիոյ Կաթողիկոսութեան համար Արցախը անցեալ չէ՛, այլ ներկայ է ու ապագայ: Նորին Սրբութիւնը վստահեցուց, որ Արցախը պիտի շարունակէ մնալ Հայութեան համար սրբազան արժէք ունեցող հող եւ հայրենիք. «Այս պատանիններուն ներկայութիւնը մեզ կը մղէ վերահաստատելու մեր ամբողջական հաւատարմութիւնը ու նաեւ հաւաքական պայքարը՝ պահելով Արցախը ներկայութիւն մեր ժողովուրդի կեանքէն ներս եւ պաշտպանելով Արցախի իրատունները, որպէսզի արցախահայութիւնը պայծառ օր մը վերադառնայ Հայրենիք՝ Արցախ, իսկ մենք կարենանք Հայաստան-Արցախ-Սփիւռք եռամիութիւնը, իր ամբողջութեանը մէջ պահել ամուր՝ մեր ազգի փառքին եւ մեր ժողովուրդի պայծառ ապագայի համար» եզրափակեց Վեհափառ Հայրապետը:

Հանդիսութիւնը աւարտեցաւ «Պահպանիչ...» աղօթքով եւ Հայրապետական Մաղթերգի երգեցողութեամբ:

**ՀԱՅՐԱՊԵՏԱԿԱՆ ՄԱՂՔԱՆԸ՝
Ն.Ս.Օ.Տ.Տ. ԱՐԱՄ Ա. ԿԱԹՈՂԻԿՈՍԻ
ԸՆՏՐՈՒԹԵԱՆ ԵՒ ՕԾՄԱՆ 29 ԱՄԵԱԿԻՆ ԱՌԻԹՈՎ**

Կիրակի, 30 Յունիս 2024-ին, Անթիլիասի Մայրավանքի «Ս. Գրիգոր Լուսավորիչ» Մայր Տաճարին մէջ մատուցուած Ս. եւ Անմահ Պատարագի ընթացքին կատարուեցաւ Հայրապետական Մաղթանք՝ Մեծի Տանն Կիլիկիոյ Կաթողիկոսութեան դարաւոր Ս. Աթոռի Արժանընտիր Գահակալ՝ Ն.Ս.Օ.Տ.Տ. Արամ Ա. Կաթողիկոսի Կաթողիկոսական ընտրութեան եւ օծման 29-րդ տարեդարձին առիթով:

Միաբան հայրեր Ս. Խորան բարձրացան եւ գոհաբանական աղօթքներով, շարականի երգեցողութեամբ եւ աստուածաշնչական ընթերցումներով Վեհափառ Հայրապետին մաղթեցին արեւշատութիւն, առողջութիւն եւ արդիւնաւոր ծառայութիւն: Անոնք Տիրոջմէ խնդրեցին, որ Կաթողիկոսը պարուրէ Իր քաղցր զօրութեամբ, որպէսզի ան անսայթաք կեանքով եւ առաքինի առաջնորդութեամբ Տիրոջ կամքը կատարէ՝ ի փառս Ամենասուրբ Երրորդութեան եւ ի պատիւ Կիլիկեան Ս. Աթոռին անսասանութեան: Այս առիթով հաւատացեալ ժողովուրդ եւ հոգեւորականաց դաս միաբերան աղերսեցին Տիրոջ, որ Իր շնորհներով զարդարէ Հայ եկեղեցւոյ բոլոր սպասաւորները եւ Մեծի Տանն Կիլիկիոյ Կաթողիկոսութեան Միաբանական Ուխտը:

Յաւուր պատշաճի քարոզախօսութիւնը կատարեց պատարագիչ Գերպ. Տ. Փառէն Ծ. Վրդ. Վարդանեան: Իր քարոզին մէջ, ան անդրադարձաւ օրուան աւետարանական հատուածէն՝ հինգ հազարի կերակրումի հրաշքէն բխած երեք պատգամներու՝ գերադասել հոգեւոր սնունդը մարմնաւոր սնունդէն, անվարանօրէն ապաւինիլ Աստուծոյ եւ ամբողջութեամբ պահել ու պահպանել Աստուծոյ տուածը: Փոխանցելէ ետք օրուան Հոգեւոր պատգամը, Գերպ. Հայր Սուրբը անդրադարձաւ Վեհափառ Հայրապետի ընտրութեան եւ օծման 29-րդ տարեդարձին, ըսելով. «Այսօր յատուկ նշանակութիւն ունեցող Կիրակի է Մեծի Տանն Կիլիկիոյ Կաթողիկոսութեան եւ ընդհանրապէս Հայ եկեղեցւոյ համար: 29 տարիներ շարունակ մեր



Ս. Աթոռը ունեցաւ տփնաջան ու ժաշան Հայրապետ, որ իր աշխատասիրութեամբ ու յանձնառութեամբ այլափոխեց Կաթողիկոսարանին ու թեմերուն կեանքը: Անցնող 29 տարիները եղան լեցուն՝ տպագրական, կրօնագիտական, եկեղեցագիտական, մշակութային ու պահանջատիրական ծրագիրներով ու իրագործումներով»: *Հնդգծելէ ու լուսարձակի տակ առնելէ ետք Արամ Ա. Կաթողիկոսի ծառայական գործունէութիւնը՝ յանուն Կիլիկեան Ուխտի Միաբանութեան, թեմերուն եւ ժողովրդեան շնորհաւորեց Նորին Ս. Օծութեան գահակալութեան 29-րդ տարեգարձը՝ մաղթելով երկար ու բեղուն գահակալութիւն, արեւշատ օրեր եւ եկեղեցանուէր ու ազգանուէր նորանոր յաջողութիւններով լեցուն ծառայական առաքելութիւն:*



Գերպ. Հայր Սուրբը իր քարոզը եզրափակեց Հայրապետական Մաղթեցին բառերով. «Պահեա՛, ո՛վ Տէր, անսասան, մեր Ս. Աթոռ Կիլիկեան. կեցցէ՛, կեցցէ՛ առ յաւէտ՝ Տ.Տ. Արամ Հայրապետ»:



ՄԻՋ-ԵԿԵՂԵՑԱԿԱՆ

**ՄԵՍՐՈՊ ԱՐՔ. ՍԱՐԳԻՍԵԱՆ ԿԸ ԲԱՆԱԽՕՄԷ
ԻՍԼԱՄԱԿԱՆ ԵՐԵՑՆԵՐՈՒ ԽՈՐՀՈՒՐԴԻՆ**

Շաբաթ, 4 Մայիս 2024-ի երեկոյան, Արաբական Միացեալ Էմիրութիւններու, Քաթարի եւ Շրջակայից Հայոց Թեմի Առաջնորդ՝ Գերշ. Տ. Մեսրոպ Արք. Սարգիսեան, ընդառաջելով Իսլամական երէցներու խորհուրդի հրաւերին, Ապու Տապիի ցուցահանդէսներու կեդրոնին մէջ արաբերէն լեզուով բանախօսեց համերաշխութեան եւ գոյակցութեան նիւթին շուրջ:

Փոխանցելէ ետք Արամ Ա. Կաթողիկոսին զօրակցութիւնը կրօններու միջեւ գործակցութեան, Սրբազան Հայրը իր բանախօսութեան մէջ լայնօրէն անդրադարձաւ ժողովուրդի կեանքին մէջ ընդհանրապէս համերաշխութեան եւ յատկապէս Ա.Մ.Էմիրութիւններէն ներս անոր տիրական ներկայութեան: Ապա, Մեսրոպ Արք. ընդհանուր գիծերու մէջ ներկայացուց համերաշխութեան պահպանութեան եւ զարգացման միջոցներն ու տուեալները՝ շեշտը դնելով բոլոր կրօններու հասարակաց հասկացողութեան եւ ընկերութեան առողջ պահպանութեան տարրերուն վրայ, որոնք են ընտանիք, դպրոց եւ երիտասարդութիւն:

Իր խօսքի աւարտին, Սրբազան Հայրը յատուկ շնորհակալութիւն յայտնեց երկրի իշխանութեան ու կառավարիչներուն, որոնք երկրէն ներս բոլոր կրօններուն առիթը ընծայած են իրենց կրօնական հաստատութիւնները ունենալու:



**ԱՐԱՄ Ա. ԿԱԹՈՂԻԿՈՍ ՆԵՐԿԱՅ ԿԸ ԳՏՆՈՒԻ
ԱՐԵՒԵԼԵԻ ԶՐԻՍՏՈՆԵՈՒԹԵԱՆ ՆՈՒԻՐՈՒԱԾ
ՀԱՄԱԳՈՒՄԱՐԻՆ**

Հինգշաբթի, 23 Մայիս 2024-ին, Արամ Ա. Կաթողիկոս, Ասորի եկեղեցուց Պատրիարք Աֆրամ Բ.ի հետ միասին, ներկայ գտնուեցաւ Արեւելքի քրիստոնէութեան նուիրուած համագումարի բացման նիստին:

Համագումարը կազմակերպուած էր Հունգարիոյ Արեւելքի Քրիստոնէութեան Ուսումնասիրութեան Կեդրոնին եւ Ասորի եկեղեցուց Պատրիարքութեան կողմէ: Համագումարին կը մասնակցէին Միջին Արեւելքի զանազան երկիրներէ 50 անհատներ: Բացման նիստին նաեւ ներկայ էին պետական ու համայնքային հրաւիրեալներ:

Նիստի աւարտին, Նորին Ս. Օծութինը հանդիպում մը ունեցաւ համագումարին առիթով Լիբանան այցելած Հունգարիոյ պետութեան միջ-կրօնական բաժանմունքի պատասխանատուն հետ, ներկայութեամբ Լիբանանի մօտ Հունգարիոյ դեսպանատան ներկայացուցիչին: Հանդիպման ընթացքին քննարկուեցաւ Վեհափառ Հայրապետը յառաջիկային Հունգարիա հրաւիրելու ծրագիրը:

Նորին Արքեպիսկոպոսի ներկայ էին Կաթողիկոսարանի «Կիլիկիա» Մատենադարանի Տնօրէն՝ Գերշ. Տ. Շահան Արք. Սարգիսեան եւ Միջին Արեւելքի միջ-եկեղեցական ու իսլամ-քրիստոնէայ յարաբերութեան պատասխանատու՝ Հոգշ. Տ. Սարգիս Վրդ. Աբրահամեան:



ՆՈՐԻՆ ՍՐԲՈՒԹԻՒՆԸ ԸՆԴՈՒՆԵՑ Ա.Ս.ՆԱՅԱԼԳՆԵՐՈՒ ԲՐԻՍՏՈՍԻ ՄԻԱՑԵԱԼ ԵԿԵՂԵՑԻՈՅ ՆԱԽԱԳԱՅՈՒՅԻՆ

Շաբաթ, 29 Յունիս 2024-ին, Արամ Ա. Կաթողիկոս Պիքֆայայի Ս. Աստուածածին Վանքին մէջ ընդունեց Ա.Մ.Նահանգներու Քրիստոսի Միացեալ Եկեղեցւոյ նախագահուհի՝ Դոկտ. Քարէն Թոմփսընը, ընկերակցութեամբ Մերձաւոր Արեւելքի Հայ Աւետարանական Եկեղեցիներու Միութեան եւ Հայկազեան համալսարանի նախագահ՝ Վերապատուելի Փօլ Հայտոսթեանին:



Նախագահուհին Լիբանան այցելած էր ներկայ գտնուելու Մ.Ա.Հ.Ա.Ե.Մ. 100 ամեակի հանդիսաւոր պաշտամունքին եւ 77-րդ Համաժողովին:

Հանդիպումը առիթ հանդիսացաւ քննարկելու միջ-եկեղեցական շարժումին պարզած ներկայ կացութիւնը ընդհանրապէս եւ Եկեղեցիներու Համաշխարհային Խորհուրդի դերը մասնաւորաբար:



ԿՐՕՆԱԿԱՆ ԲՆԱԳԱԲԱՌԵՆ ՆԵՐՍ ԿԻՆԵՐՈՒ ՄԱՍՆԱԿՑՈՒԹԻՒՆԸ ԶԱՋԱԼԵՐՈՂ ՀԱՄԱԳՈՒՄԱՐ

2006 թուականին Լիբանանի մէջ հիմնուած «Ատիէն» (Adyan) կազմակերպութիւնը տարեկան այլազան բնոյթի հանդիպումներ կազմակերպելով՝ կը փորձէ հասարակաց արժէքներու շուրջ համախմբել Միջին Արեւելքի քրիստոնեայ ու իսլամ հոգեւորականներ, երիտասարդներ, մտաւորականներ եւ զանազան բնագաւառներու պատկանող մասնագէտներ: Այս կազմակերպութիւնը գրասենեակներ ունի տարբեր երկիրներու մէջ: Անոր նպատակն է երկխօսութիւն ու համագործակցութիւն յառաջացնել կրօններու միջեւ, յատկապէս իսլամութեան ու քրիստոնէութեան:

Առ այդ, Շաբաթ, 29 Յունիս 2024-ին, նախաձեռնութեամբ «Ատիէն» կազմակերպութեան, տեղի ունեցաւ միջ-կրօնական համագումար մը, որուն նրպատակն էր քաջալերել կիներու դերակատարութիւնը, մասնակցութիւնը եւ իրաւունքները կրօնական բնագաւառէն ներս: Համագումարին իրենց մասնակցութիւնը բերին Մարոնի, Յոյն Ուղղափառ ու Կաթողիկէ, Հայ Ուղղափառ ու Աւետարանական եկեղեցիներու ներկայացուցիչներ եւ Տիրզի համայնքէն ներկայացուցիչ մը:

Համագումարի ընթացքին Սէն Ժոզէֆ համալսարանի երկու դասախօսներ յաջորդաբար ներկայացուցին կնոջ համահաւասար դիրքը ստեղծագործութեան մէջ եւ ապա խօսեցան քրիստոնէութեան ու իսլամութեան պրիսմակէն դիտուած կնոջ բարձր արժէքին մասին: Աստուածաշունչէն եւ Քուրանէն մէջբերումներ կատարելով՝ դասախօսները շեշտեցին կրօններու զարգացման ու տարածման մէջ կիներուն ունեցած դերակատարութիւնը:

Յիշեալ համագումարին, Ն.Ս.Օ.Տ.Տ. Արամ Ա. Կաթողիկոսին տնօրինութեամբ, իր մասնակցութիւնը բերաւ Կաթողիկոսարանի Միջին Արեւելքի միջեկեղեցական ու իսլամ-քրիստոնեայ յարաբերութեանց պատասխանատու՝ Հոգ. Տ. Սարգիս Վրդ. Աբրահամեան:

Յայտնենք, որ տարի մը առաջ «Ատիէն» կազմակերպութեան պատասխանատուներ այցելած էին Նորին Սրբութեան եւ ներկայացուցած կազմակերպութեան յառաջիկայ ծրագիրները: Նորին Ս. Օծութիւնը յիշեալ կազմակերպութեան մէջ Կաթողիկոսարանի ներկայացուցիչ նշանակած է Հայր Սարգիսը:

**ՄԱՍՆԱԿՑՈՒԹԻՒՆ՝ Ե.Հ.Խ.Ի ԷԶԻՄԵՆԻՔ
ԴԱՍՏԻԱՐԱԿՈՒԹԵԱՆ ԵՒ ԿԱԶՄԱԲՈՐՄԱՆ
ՅԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՀԱՆԴԻՊՄԱՆ**

Եկեղեցիներու Համաշխարհային Խորհուրդի (Ե.Հ.Խ.) «Էքիմենիք Դաստիարակութեան եւ Կազմաւորման Յանձնաժողով»ը իր առաջին անձամբ ժողովը գումարեց Յունիս ամսու վերջին շաբթուան ընթացքին, Սէուլի Եոնսէյ համալսարանին մէջ, Հարաւային Քորէա:

Յանձնաժողովը օրակարգի վրայ ունէր ութամեայ գործունէութեան ծրագրաւորումը, յատկապէս երկու տարին անգամ մը կազմակերպուող «Կէթի» Համաշխարհային Էքիմենիք Աստուածաբանական Ինստիտուտի ծրագրի եւ Էքիմենիք կազմաւորման առցանց դասապահերու նոր ծրագրի մը՝ Պոսէյ Էքիմենիք Ինստիտուտի հետ համագործակցաբար:



Ժողովականները առիթ ունեցան այցելելու Քորէական ապառազմականացած գօտին եւ աղօթելու շրջանի խաղաղութեան ու կողմերու հաշտեցման համար: Հարկ է նշել, որ Ե.Հ.Խ.ը հիմնական դերակատարութիւն ունեցած է Քորէայի մէջ խաղաղութեան վերականգման ի խնդիր:

Ն.Ս.Օ.Տ.Տ. Արամ Ա. Կաթողիկոսին տնօրինութեամբ սոյն յանձնաժողովին մասնակցեցաւ Ուաթըրթաունի Ս. Ստեփանոս եկեղեցւոյ նորանշանակ Հոգեւոր Հովիւ եւ Ե.Հ.Խ.ի Կեդր. Վարչութեան անդամ՝ Գերպ. Տ. Հրանդ Մ.Վրդ. Թահանեան:

ՁԵՌՆԱԴՐՈՒԹԻՒՆՆԵՐ

**ՉՈՐՍ ԵՐԻՏԱՍԱՐԴ ՄԻԱԲԱՆՆԵՐ
ՎԱՐԴԱՊԵՏԱԿԱՆ ԳԱԲԱՉԱՆ ԿՐԵԼՈՒ
ԻՇԽԱՆՈՒԹԻՒՆ ՍՏԱՅԱՆ**

Հանդիսապետութեամբ եւ տնօրինութեամբ Ն.Ս.Օ.Տ.Տ. Արամ Ա. Կաթողիկոսին, Կիրակի, 12 Մայիս 2024-ին, Անթիլիասի Մայրավանքի «Ս. Գրիգոր Լուսաւորիչ» Մայր Տաճարին մէջ, յընթացս Ս. եւ Անմահ Պատարագին, չորս երիտասարդ Միաբան Հայրեր՝ Հոգ2. Տ. Եղեկիէլ Աբղ. Սելլումեան, Հոգ2. Տ. Եսայի Աբղ. Էօրտէքեան, Հոգ2. Տ. Եզրաս Աբղ. Թէնէքէճեան եւ Հոգ2. Տ. Եղիա Աբղ. Մալխասեան վարդապետութեան մասնաւոր իշխանութեան չորս աստիճանները ստացան՝ ձեռամբ Գերշ. Տ. Նարեկ Արք. Ալեմէզգեանի եւ խորտաւիլակութեամբ՝ Հոգ2. Տ. Սարգիս Վրդ. Աբրահամեանի:

Արարողութեան ընթացքին, Սրբազան Հայրը եկեղեցւոյ ատեանին մէջ հաւատքի քննութիւն կատարեց ընծայեալ Հայր Սուրբերուն, որոնք նզովեցին բոլոր աղանդաւոր հերձուածները եւ հաստատեցին իրենց հաւատարմութիւնը ուղղափառ դաւանանքին՝ արտասանելով Հաւատոյ Դաւանանքը:

Արարողութեան աւարտին, յաւուր պատշաճի քարոզեց Նարեկ Սրբազան Հայրը՝ բնաբան ունենալով Պօղոս առաքեալի հետեւեալ խօսքը. «Եկայ ձեզի՝ բոլորիդ, շրջեցայ եւ Աստուծոյ արքայութիւնը քարոզեցի» (Գրծ 20,25): Փառք



եւ գործունեութիւն յայտնելով Աստուծոյ, որ այս տարի եւս, Արամ Ա. Վեհափառ Հայրապետին տնօրինումով եւ Հոգեգալստեան տօնի ծիրին մէջ, մեր ընծայեալ Միաբան Հայերն ու Դպրեվանքի սաները, բազմազան ձեռնարկութիւններով, Ս. Հոգիի առատաբուղի շնորհներով առաւել կը պայծառանան: Սրբազան Հայրը նշեց, որ այս շորս երիտասարդ Միաբան Հայերը իրենց առաքելագաղտերէն ժամանած են նոր իմն Երուսաղէմ՝ Անթիլիասի Մայրավանք, իրենց ստանձնած ծառայական առաքելութիւնը առաւել լիցքաւորելու:

Սրբազան Հայրը խօսեցաւ վարդապետի արժանիքներուն ու պատասխանատուութիւններուն մասին, ընդգծելով, որ «վարդապետը պարտաւոր է անխտիր բոլորի՛ն երթալու». ան դիտել տուաւ, որ Մեծի Տանն Կիլիկիոյ Միաբանութիւնը առաջին հերթին կ'աշակերտի Դպրեվանքին եւ Մայրավանքին ու ապա, Քրիստոսատիպ կեանքի օրինակով, կը շրջի՝ Քրիստոսը տանելու համար աշխարհին. «Այս սկզբունքին հաւատարմութեամբ, այսօր, աւելի քան երբեք, Մեծի Տանն Կիլիկիոյ Կաթողիկոսութեան Միաբանութիւնը ներկայութիւն է մեր ազգի աշխարհասփիւռ զաւակներու կեանքին մէջ»: Սրբազան Հայրը իր խօսքը ուղղեց նորընծայ վարդապետներուն նշելու համար, որ վարդապետին կոչումն է Աստուծոյ արքայութեան քարոզիչը դառնալ ու անդրադառնալով Դպրեվանքի առաքելութեան, խօսքը ուղղեց ծնողներուն, յիշեցնելու համար, որ կրթական տարեշրջանի աւարտին, այժմէն պէտք է որոշեն իրենց զաւակները Դպրեվանք ուղարկել, որպէսզի մեր հոգեւոր տունի «սափորէն ալիւրը չհատնի եւ կուժէն իւղը չպակսի» (Գ.Թգ 17.14):

Ս. Պատարագէն անմիջապէս ետք, Նորին Ս. Օծութիւնը Վեհարանին մէջ ընդունեց նորընծայ վարդապետները եւ իր հայրական օրհնութիւնը շնորհեց անոնց:



Յայտնենք, որ Շաբաթ, 11 Մայիսին, չորս աբեղաները ներկայացուցին իրենց աւարտաճառերը, յաջորդաբար՝ Հայր Եղեկիէլ՝ «Գործք Առաքելոցի Մեկնութիւն», Հայր Եսայի՝ «Ներսէս Լամբրոնացիի Ատենաբանութիւն, Գիրք սիրոյ եւ խաղաղութեան», Հայր Եգրաս՝ «Անանիա Վարդապետ Նարեկացիի խրատագիրքը» եւ Հայր Եղիա՝ «Ս. Ստեփանոս Սիւնեցի եւ իր աստուածաբանական երկերը» նիւթերով:

Վեհափառ Հայրապետը իւրաքանչիւր ներկայացման եւ պաշտպանութեան աւարտին, իր թելադրութիւնները տուաւ եւ ընդգծումներ կատարեց՝ նիւթերը կատարելագործելու համար: Հոսակ, եզրափակիչ խօսքին մէջ, ան գնահատեց Միաբան Հայրերուն կատարած աշխատանքները եւ իր օրհնութիւնը տուաւ աբեղաներուն՝ շեշտելով հոգեմտաւոր զարգացման կարեւորութիւնը:



**ԻՆՆԸ ՍԱՆԵՐ ԿԸ ՄԻԱՆԱՆ ԴՊԻՐՆԵՐՈՒ ՈՒ
ԿԻՍԱՍԱՐԿԱԲԱԳՆԵՐՈՒ ՇԱՐՔԵՐՈՒՆ**

Կիրակի, 2 Յունիս 2024-ին, Հայ եկեղեցին նշեց Կաթողիկէ Ս. Էջմիածնի տօնը: Արդարեւ, Ն.Ս.Օ.Տ.Տ. Արամ Ա. Վեհափառ Հայրապետին նախագահութեամբ, Անթիլիասի Մայրավանքի «Ս. Գրիգոր Լուսաւորիչ» Մայր Տաճարին մէջ մատուցուեցաւ Ս. եւ Անմահ Պատարագ, որուն ընթացքին, ձեռամբ Կա-



թողիկոսարանի «Կիլիկիա» Մատենադարանի եւ հնատիպերու ու ձեռագիրներու բաժանմունքներու Տեսուչ՝ Գերշ. Տ. Շահան Արք. Սարգիսեանի եւ խարտաւիլակութեամբ Դպրեվանքի Տեսչական կազմէն՝ Հոգշ. Տ. Ազատ Աբղ. Ֆիլիքեանի, տեղի ունեցաւ դպրաց եւ կիսասարկաւագաց ձեռնադրութիւն:

Յընթացս Ս. Պատարագին, «Այսօր ուրախացեալ ցնծան...» շարականի երգեցողութեամբ, ձեռնադրիչ Շահան Արք. խնկարկութեամբ մուտք գործեց եկեղեցւոյ դաս եւ ձեռնադրութեան յատուկ արարողակարգով դպիր ձեռնադրեց դպրեվանքի վեց սաներ՝ Անթոնի Թումայեան, Յովսէփ Մովսէսեան, Սարգիս Պալապանեան, Յակոբ Սիսեան, Սերժիօ Թումայեան եւ Զօհրապ Ճուռեան. իսկ կիսասարկաւագ ձեռնադրեց երեք սաներ՝ Յովսէփ Գալըպճեան, Գաբրիէլ Թահանեան եւ Ներսիկ Պարսումեան:

Հուսկ, Սրբազան Հայրը յաւուր պատշաճի քարոզեց՝ մեկնելով Դուկասու աւետարանի 16-րդ գլուխէն. «Ով որ փոքր ծառայութեան մէջ հաւատարիմ է՝ մեծին մէջ ալ հաւատարիմ է, իսկ ով որ փոքր ծառայութեան մէջ անհաւատարիմ է՝ մեծին մէջ ալ անհաւատարիմ է» (Ղկ 16.10): Ան, առաջին հերթին, անդրադարձ կատարեց Ս. Գրիգոր Լուսաւորիչ Հայրապետին ելն ի Վիրապի եւ Կաթողիկէ Ս. Էջմիածնի տօներուն ու այսպիսով Հայաստան աշխարհ Քրիստոսի լոյսը տարածուելուն: Սրբազան Հայրը յայտնեց, որ Լուսաւորչի Աստուածաշնորհ տեսիլքին ճամբով՝ Ս. Էջմիածին տաճարին յայտնութիւնը հիմքը դարձաւ Հայ եկեղեցւոյ եւ նշեց, որ «Միածինը այսօր կ'իջնէ Մեծի Տանն Կիլիկիոյ Կաթողիկոսութեան Ս. Գրիգոր Լուսաւորիչ Հայրապետի անունով այս փառահեղ տաճարին մէջ եւ իր լոյսին հետ իր շնորհները կը հեղու ան-



գամ մը եւս Մեծի Տանն Կիլիկիոյ Կաթողիկոսութեան հոգեւոր ճեմարանին՝ Դպրեվանքի ուսանողներուն վրայ, որոնցմէ ահաւասիկ դպրութեան ու կիսասարկաւագութեան կարգերով այս տղաքը արժանի եղան այդ շնորհին»:

Վերադառնալով բնաբանին, Շահան Սրբազան Հայրը յորդորեց նորօք ձեռնադրեալները իրենց հաւատարմութիւնը ծառայեցնելու Աստուծոյ եւ եկեղեցւոյ՝ դիտել տալով, որ իրենց ստացած եկեղեցական կարգերը լոկ արտաքին նշաններ չեն: Սրբազան Հայրը ընդգծեց, որ մեքենայաբար եւ առանց հոգիի կատարուած պաշտօնները անիմաստ ու դատարկ են, ուստի հարկ է սիրով, սրբութեամբ ու հաւատարմութեամբ մօտենալ Վեհափառ Հայրապետին տնօրինումով շնորհուած պաշտօններուն: Շարունակելով իր խօսքը՝ ան յայտնեց, որ «Տիրոջ աչքին պէտք է մեծնաք, եւ մեծնալու համար պէտք է ծառայութեան ճանապարհը բռնէք, որ ընտրեցիք մեր հոգեւոր տան՝ Դպրեվանքին միջոցով: Այն ինչ որ քիչ առաջ աղօթքներուն մէջ մէկ առ մէկ արձանագրուեցան, ձեր ուշադրութեան յանձնեցի, որպէսզի կերտուին ձեր նկարագիրին մէջ»:

Քարոզի աւարտին, ձեռնադրիչ Սրբազան Հայրը շնորհաւորեց նորօք ձեռնադրեալ Դպրեվանքի սաները, անոնց հարազատներն ու հաւատացեալ ժողովուրդը, իր որդիական երախտագիտութիւնը յայտնեց Նորին Սրբութեան, ինչպէս նաեւ շնորհակալութիւն՝ Դպրեվանքի Տեսչութեան եւ Դպրեվանքի բարերարներուն ու բարեկամներուն: Ուստի ան հաւատացեալները հրաւիրեց իրենց ընտրելագոյն զաւակները Դպրեվանք ուղարկելու, որպէսզի դառնան Աստուծոյ փառքին ու ժողովուրդի բարօրութեան ճառագայթը:

Ապա, Ս. Սեղանին սպասարկութիւնը կատարեցին նորընծայ դպիրներն ու կիսասարկաւագները:



ԵՐԵՔ ԴՊՐԵՎԱՆԵՑԻՆԵՐ ՄԻԱՅԱՆ ՍԱՐԿԱԲԱԳԱՑ ԴԱՍՈՒՆ

Կիրակի, 9 Յունիս 2024-ին, Անթիլիասի Մայրավանքի «Ս. Գրիգոր Լուսաւորիչ» Մայր Տաճարին մէջ մատուցուած Ս. եւ Անմահ Պատարագի ընթացքին, նախագահութեամբ Ն.Ս.Օ.Տ.Տ. Արամ Ա. Վեհափառ Հայրապետին եւ ձեռամբ Գերշ. Տ. Շահան Արք. Սարգիսեանի, երեք դպրեվանեցիներ՝ Մինաս Ծանսրզեան, Յովհաննէս Պալտունեան եւ Գէորգ Եագուպեան կիսասարկաւագ-

ներ, ձեռնադրութեամբ ստացան Հայ եկեղեցւոյ երեք նուիրապետական աստիճաններէն առաջինը՝ Սարկաւագական կարգը:

Ձեռնադրութեան խարտաւիլակութիւնը կատարեց Դպրեվանքի հսկիչներէն՝ Հոգշ. Տ. Գէորգ Վրդ. Գարակէօզեան: Ընծայեալները Հոգշ. Հայր Սուրբին առաջնորդութեամբ ծնրագիր բարձրացան Ս. Խորան, ուր հրապարակաւ հրաժարեցան աշխարհէն եւ ուխտեցին նուիրուիլ Հայ եկեղեցւոյ եւ Ս. Սեղանին ծառայութեան: Ձեռնադրիչ Սրբազան Հայրը ընծայեալներուն ուսե-



րուն վրայ գետեղեց Քրիստոսի լուծը խորհրդանշող սուրբ ուրարները եւ հոգեշունչ աղօթքներով անոնց տուաւ Աւետարան ընթերցելու, սկիհի վերաբերում կատարելու եւ անոյշ բոյր խնկելու իշխանութիւնները:

Շահան Սրբազան Հայրը ապա յաւուր պատշաճի քարոզեց՝ լուսարձակի տակ առնելով Ս. Հոգիին մեզի տուած շնորհքները Տիրոջ եւ եկեղեցւոյ սպասարկութեան ծառայեցնելու կարեւորութիւնը: Ան ըսաւ, որ Ս. Հոգին իւրաքանչիւրիս շնորհք մը կը պարգեւէ հասարակաց բարիքին համար, իսկ ձեռնադրութեան արարողութեան ճամբով Ամենակալէն խնդրեցինք, որ Ս. Հոգիին շնորհքը առատօրէն հեղու նոր ձեռնադրուողներուն վրայ: Մեկնելով Պօղոս առաքեալի կորնթացիներուն ուղղած առաջին նամակէն, Սրբազան Հայրը վստահեցուց, որ Ս. Հոգին գիտէ մեր կարիքները եւ ըստ այնմ կ'ընդառնա՞նք մեզի:

Խօսքը ուղղելով նորընծայ բարեշնորհ սարկաւագներուն՝ ձեռնադրիչ Սրբազան Հայրը ըսաւ, որ սպասարկութեան եւ ծառայութեան ախոյեանը մեր Տէրը՝ Յիսուս Քրիստոս Ինքն է: Ան ըսաւ, որ սարկաւագութիւնը եկեղեցական ամենախոնարհ կարգն է, բայց քրիստոնէական հաւատքին առաջին նահա-

տակին՝ Ս. Ստեփանոս նախասարկալագի օրինակին մարմնացումն է: Այս խօսքերով Շահան Արք. քաջալերեց, որ սարկալագները սուրբին նման Աստուծոյ խօսքը քարոզեն հոն, ուր կարիքը կայ, պարկեշտօրէն սպասարկեն Տիրոջ՝ աղօթքը անպակաս ընելով իրենց շրթներէն: Սրբազան Հայրը քարոզը եզրափակեց՝ ըսելով. «Այսօր Քրիստոսի լուծը ձեր ձախին կախուած է: Այս լուծը նաեւ խորհրդանիշն է Քրիստոսի ձեր կապուածութեան: Տէր Յիսուս Քրիստոսին կապուեցաք այս սուրբ ու նուիրական ուրարով. զայն ունեցէք որպէս սրբութիւն, որպէսզի, ինչպէս ձեռնադրութեան Մաշտոցը կ'ըսէ, արժանի հոգեւոր շնորհքով լեցուն օր մը, այն ձեր վիզէն անցնելով՝ վերածուի փորուրարի, եւ այս անգամ ամբողջական նուիրումով ու յանձնառութեամբ ծառայէք մեր Ս. Եկեղեցիին»:



Իր քարոզի աւարտին, Սրբազան Հայրը շնորհաւորեց նոր ընծայեալ սարկալագները, Դպրեվանքի Տեսչութիւնն ու ծնողները եւ իր երախտագիտութիւնը յայտնեց Վեհափառ Հայրապետին՝ անոր հայրական տնօրինումին համար, իսկ Կիլիկեան Ուխտեալ Միաբանութեան անդամներուն մաղթեց, որ անոնց կեանքի օրերը միշտ լուսաւոր ըլլան եւ Քրիստոսի ճանապարհով հաւատացեալները առաջնորդեն յաւիտենական կեանքի բարքին:

Եկեղեցական արարողութեան աւարտին, ձեռնադրիչ Սրբազան Հօր գլխաւորութեամբ եւ Դպրեվանքի Տեսուչ՝ Հոգշ. Տ. Պարոյր Վրդ. Շէրնէզեանի առաջնորդութեամբ, նորընծայ սարկալագները, կիսասարկալագներն ու դպիրները բարձրացան Նորին Սրբութեան մօտ՝ ստանալու համար անոր Հայրապետական օրհնութիւնը: Այս առիթով, ան իր հայրական յորդորներն ու թելադրութիւնները փոխանցեց անոնց եւ գնահատեց Դպրեվանքի Տեսչութիւնը:

ԴՊՐԵՎԱՆՔ

ՀՈԳԵՄՏԱԻՈՐ ԿԵԱՆԸՐ ԴՊՐԵՎԱՆՔԷՆ ՆԵՐՍ

ՅԱՐԳԱՆՔԻ ԵՐԵԿՈՅ՝ ՆՈՒԻՐՈՒԱԾ ԿՈՄԻՏԱՍ
ՎԱՐԴԱՊԵՏԻ ԾՆՆԴԵԱՆ 155-ԱՄԵԱԿԻՆ

Ուրբաթ, 3 Մայիս 2024-ի յետմիջօրէին, տնօրինութեամբ Տեսչական կազմին եւ կազմակերպութեամբ Ուսանողական խորհուրդին, «Բրաբրոն Տումանեան» հանդիսասարահին մէջ, տեղի ունեցաւ դասախօսութիւն մը՝ նուիրուած Կոմիտաս Վարդապետին:

Բացման խօսքով հանդէս եկաւ աւարտական դասարանի սաներէն Բրշ. Սերժ Սրկ. Քիւշէրեան, որ իր խօսքին մէջ ըսաւ. «Կոմիտաս Վարդապետն ու երաժշտութիւնը անբաժան մասնիկներն են մեր Դպրեվանքեան էութեան ու ոգիին, ինչ որ մեզի կը թելադրէ անոր հետ առաւել եւս մտերմանալ, զինք ճանչնալ, երաժշտութեան խորքը թափանցել եւ զայն մեր ժողովուրդին հասանելի դարձնել»: Բացման խօսքէն ետք, ներկայացուցաւ գեղարուեստական յայտագիր մը, որ կ'ընդգրկէր Գեղամ Սարեանի գրիչին պատկանող «Դէպի Կառափնարան՝ Կոմիտասի Յիշատակին» ասմունքը եւ Կոմիտասի մշակած երգերէն՝ «Գարուն ա» եւ «Ես Սարէն Կու գայի» կտորներուն ներկայացումը:



Օրուան դասախօսն էր վաստակաշատ խմբավար՝ Պարգեւ Թասլաքեան, որ հաղորդական ոճով խօսեցաւ Կոմիտաս Վարդապետի երաժշտութեան արուեստին եւ անոր ունեցած իւրայատկութեան մասին:

Աւարտին, Տեսուչ Հայր Սուրբը բեմ բարձրանալով իր սրտի խօսքը փոխանցեց: Շնորհակալութիւն յայտնելէ ետք դասախօսին, ան ըսաւ. «Կոմիտաս Վարդապետի յաջողութիւնը ո՛չ թէ միայն հոն էր, որ ան փրկեց Հայ երաժշտութիւնը եւ մեզի ինքնութիւն տուաւ, այլ նաեւ՝ իր երաժշտութեամբ աշակերտներ պատրաստեց»: Իր սրտի խօսքէն ետք, Տեսուչ Հայր Սուրբը Պրն. Թասլաքեանը պատուեց յուշանուէրով մը:

Օգտաշատ դասախօսութիւնը իր աւարտին հասաւ յիշատակելի խմբանկարով մը:

ՏԱՐԵԿԱՆ ՊՏՈՅՏ

Հինգշաբթի, 9 Մայիս 2024-ի առաւօտուն, Քրիստոսի Համբարձման տօնին առիթով, Դպրեվանքէն ներս տեղի ունեցաւ Անդաստանի արարողութիւն: Ապա, Դպրեվանքի մեծ ընտանիքը, Տեսչութեան գլխաւորութեամբ, իր տարեկան պտոյտը ունեցաւ:

Պտոյտը սկիզբ առաւ ուղղուելով դէպի Լիբանանի հիւսիս՝ «էհտէն» շրջանը: Դպրեվանքեցիներ այցելեցին զանազան վանքեր ու սրբավայրեր, ուր շարականներու երգեցողութեամբ՝ իւրաքանչիւր դպրեվանքի իր աղօթքը բարձրացուց առ Աստուած: Ապա, անոնք ունեցան իրենց կէսօրուան ճաշը: Ճաշէն ետք, մեկնեցան «Ճրպրան Խալիլ Ճրպրան» թանգարան: Այս հոգեպարար օրուան աւարտին, դպրեվանքեցիներ անմոռանալի յիշատակներով վերադարձան իրենց տունը՝ Դպրեվանք:



«ԳԱՐՆԱՆԱՅԻՆ ՃԱՇԿԵՐՈՅԹ»՝

ՊԻՔՖԱՅԱՅԻ Ս. ԱՍՏՈՒԱԾԱԾԻՆ ՎԱՆՔԻՆ ՄԷՋ

Զորեքշաբթի, 22 Մայիս 2024-ի առաւօտուն, հովանաւորութեամբ Տեսչութեան, կազմակերպութեամբ Տիկնանց խորհուրդին եւ նախագահութեամբ Տիկ. Թամար Զէյթլեանի, Պիքֆայայի Ս. Աստուածածին վանքի շրջաբակին մէջ տեղի ունեցաւ «Գարնանային ճաշկերոյթ», որուն նպատակն էր Դպրեվանքի մտերմութեան մէջ հաճելի ժամանակ մը անցընել:



Բարի գալուստի խօսքը փոխանցեց Տիկնանց խորհուրդի անդամներէն՝ Տիկ. Մարո Թազեան, որմէ ետք Դպրեվանքի Տեսուչ՝ Հոգշ. Տ. Պարոյր Վրդ. Շէրնէզեանի աղօթքով ձեռնարկը սկիզբ առաւ: Ապա, Տեսուչ Հայր Սուրբը ներկաներուն խօսեցաւ Դպրեվանքի առաքելութեան եւ անշահախնդիր ծառայութեան մասին: Ան նաեւ պատուեց օրուան նախագահ՝ Տիկ. Թամար Զէյթլեանը, որ սատար հանդիսացած էր սոյն ձեռնարկի յաջողութեան: Ապա, Տիկ. Շաքէ Գարայեան խօսեցաւ հայկական ականդութիւններու մասին: Ճաշկերոյթի ընթացքին Դպրեվանքի սաները ներկայացուցին գեղարուեստական յայտագիր մը՝ երգերով եւ ասմունքներով:

Վարձքը կատար բոլոր անոնց, որոնք կը հաւատան Դպրեվանքի առաքելութեան եւ միշտ նեցուկ կը կանգնին անոր յաջողութեան ու առաւել հզօրացման:

ԴԱՍԱԽՈՍՈՒԹԻՒՆ՝ 1918-Ի ՀԱՅԱՍՏԱՆԻ ԱՌԱՋԻՆ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹԵԱՆ ՄԱՍԻՆ

Ուրբաթ, 24 Մայիս 2024-ի երեկոյեան, «Բրաբրոն Տումանեան» հանդիսասրահին մէջ, Տեսչական կազմի տնօրինութեամբ, տեղի ունեցաւ դասախօսութիւն՝ Հայաստանի Ա. Հանրապետութեան՝ 1918-ի Մայիս 28ին կերտուած անկախութեան մասին:

Բացման խօսքով հանդէս եկաւ Բ. Ընծայարանի սաներէն՝ Բրշ. Յովհաննէս Կիս.Սրկ. Պաշտունեան, որ իր խօսքին մէջ ըսաւ. «Մենք իբրեւ Դպրեվանեցիներ, պէտք է լաւապէս ճանչնանք մեր պատմութիւնը եւ լիիրաւօրէն արժեւորենք մեր պապերուն կողմէ մեզի կտակուած ժառանգը»: Ապա Ընծայարանի սաներէն՝ Բրշ. Մինաս Կիս.Սրկ. Ճանսըզեան ասմունքեց Անդրանիկ Ծառուկեանի «Թուղթ Առ Երեւան» բանաստեղծութիւնը: Հուսկ, ժառանգաւորացի սաներէն՝ Յովհաննէս Յովհաննէսեան երգեց «Աղբերս ու ես» երգը, դաշնամուրի ընկերակցութեամբ՝ Լեւոն Սեդրակեանի:

Օրուան դասախօսն էր՝ Ամերիկայի Միացեալ Նահանգներու Միշիկըն համալսարանի Պատմաբանութեան Փրոֆէսէօր եւ նոյն համալսարանի Հայագիտական Հետազօտութեան Կեդրոնի Վարիշ՝ Դոկտ. Արա Սանճեան, որ մասնագիտական հմուտ մօտեցումով ներկայացուց Հայաստանի Ա. Հանրապետութեան եւ առաջին անկախութեան յաղթանակը: Դոկտ. Սանճեան շեշտեց, թէ պէտք է այդ ժամանակաշրջանի պայմանները լաւ հասկնալ եւ ուսումնասիրել՝ լաւապէս ըմբռնելու համար յետագայ հետեւանքները, որոնք ազդեցին Հայ ժողովուրդի կեանքին վրայ:

Այնուհետեւ, բեմ բարձրանալով Դպրեվանքի Տեսուչ՝ Հոգշ. Տ. Պարոյր Վրդ. Շէրնէզեան, իր սրտի խօսքը փոխանցեց, որուն ընթացքին իր երախտագիտութիւնը յայտնեց յարգելի դասախօսին: Ապա ան ըսաւ. «Հայաստանի անկախութիւնը բոլոր ժամանակներու ընթացքին մեզի յոյս տուող կրակ է: Եթէ



մեր հայրերը կրցան ոչինչէն պետութիւն կերտել, ուրեմն մենք ալ կրնանք անոնց կառուցածին վրայ աւելի նորն ու հզօրը կառուցել: Այս գիտակցութեամբ է, որ մենք իբրեւ Դպրեվանեցիներ պէտք է պատրաստուինք այս մարդակերտ կեդրոնին մէջ»:

Աւարտին, Տեսուչ Հայր Սուրբը յուշանուէրով մը պատուեց օրուան դասախօսը. ձեռնարկի աւարտին առնուեցաւ յիշատակելի խմբանկար մը եւ երեկոն իր աւարտին հասաւ «Մեր Հայրենիք» քայլերգով:

**Հ.Մ.Ը.Մ. ԱՐՅԱԽԻ ՍԿԱՌԻՏՆԵՐՈՒՆ
ԱՅՅԵԼՈՒԹԻՒՆԸ ԴՊՐԵՎԱՆՔ**

Երկուշաբթի, 27 Մայիս 2024-ի երեկոյեան, Դպրեվանքի Ս. Աստուածածին մատրան մէջ տեղի ունեցաւ Սրբոց Գայիանեանց կոյսերու նախատօնակը, նախագահութեամբ Դպրեվանքի Տեսուչ՝ Հոգշ. Տ. Պարոյր Վրդ. Շէրնէզեանի:

Արարողութեան ներկայ էին նաեւ Լիբանան ժամանած Հ.Մ.Ը.Մ Արցախի սկառտները, գլխաւորութեամբ Եղբ. Անդրանիկ Զաւուշեանի: Ժամերգութեան աւարտին, Տեսուչ Հայր Սուրբը փոխանցեց օրուան պատգամը եւ ողջունեց Արցախցի սկառտներուն այցելութիւնը Դպրեվանք: Ան իր խօսքին մէջ ըսաւ. «Հռիփսիմեանց եւ Գայիանեանց կոյսերը ցոյց տուին, որ իրենց հաւատքը Քրիստոսի հանդէպ աւելի անգին է, քան իրենց կեանքը: Այսօր այդ հաւատքը մեզի կը թելադրէ, որ նոյն բժախնդրութեամբ մօտենանք մեր հոգեւոր եւ ազգային արժէքներուն»:

Ապա, Արցախցի սկառտները շրջեցան Ս. Աստուածածին Վանքի համալիր եւ Դպրեվանք, մօտէն ծանօթանալով Վանքի պատմութեան եւ առաքելութեան:

**ԾԱՆՕԹԱՑՈՒՄ՝ ՀԱՓՈՆԱԿԱՆ ՄԵԹՈՏՆԵՐՈՎ
ԹՈՒԱՔԱՆԱԿԱՆ ՀԱՇՈՒԱՐԿՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՀՄՏՈՒԹԵԱՆ**

Ուրբաթ, 31 Մայիս 2024-ի երեկոյեան, Դպրեվանք այցելեց Soroban Education Mental Arithmetic System-ի (SEMAS) Տնօրէնուհի՝ Սեւան Քէնտիրճեան-Շէրպէթեան եւ սաներուն բացատրեց ճափոնական մեթոտներով թուաբանական հաշուարկումներ կատարելու հմտութիւնը, որմէ ետք իր առաջնորդութեամբ, աշակերտները վարժութիւններ կատարեցին:

Աւարտին, Տեսուչ՝ Հոգշ. Տ. Պարոյր Վրդ. Շէրնէզեան գնահատեց եւ քաջալերեց SEMAS-ի կատարած աշխատանքը եւ դպրեվանեցիներուն յայտնեց, որ այսօրուան յառաջադէմ արհեստագիտական աշխարհին մէջ պէտք է վստահիլ մեր զարգացող մտքին, եւ այս թուաբանական վարժութիւնները մեզի կ'օգնեն այդ իմաստով: Ապա, Տեսուչ Հայր Սուրբը յուշանուէրով մը պատուեց Տիկ. Քէնտիրճեանը:

ՏԱՐԵՎԵՐՋԻ ՈՒՍՈՒՑՉԱԿԱՆ ԺՈՂՈՎ

Չորեքշաբթի, 19 Յունիս 2024-ին, Դպրեվանքի Ուսուցչաց կազմը գումարեց Դպրեվանքի 94-րդ ուսումնական-կրթական տարեշրջանի ամսվերջի իր ժողովը՝ քննարկելով անցած տարուան գործունեությունը եւ ծրագրելով յառաջիկայ տարուան աշխատանքները:



Դպրեվանքի Տեսուչ՝ Հոգշ. Տ. Պարոյր Վրդ. Շէրնէզեան իր խօսքին մէջ գնահատեց ուսուցիչները եւ խօսեցաւ կրթական նոր մեթոտներու որդեգրման աշխատանքներու մասին:

Ժողովի աւարտին տեղի ունեցաւ հաւաքական ճաշկերոյթ, մասնակցութեամբ սաներուն: Խնճոյքի ընթացքին անոնք բարի երթ եւ արդիւնաբեր առաքելութիւն մաղթեցին տեսչական կազմէն՝ Հոգշ. Տ. Գէորգ Վրդ. Գարակէօզեանին: Հաւաքը փակուեցաւ «Աշակերտք Քրիստոսի...» շարականով:

2023-2024 ՏԱՐԵՇՐՋԱՆԻ ՓԱԿՈՒՄ

Այնպէս, ինչպէս Դպրեվանքի ուսումնական-կրթական տարեշրջանը կը բացուի Սրբոց Թարգմանչաց վարդապետաց տօնին, նոյնպէս ալ կը փակուի Թարգմանչաց վարդապետներէն՝ Ս. Սահակի եւ Ս. Մեսրոպի տօնին: Այդ առիթով վերջինիս զուգահիւսող Կիրակին՝ 23 Յունիս 2024-ին, Անթիլիասի Մայրավանքի «Ս. Գրիգոր Լուսաւորիչ» Մայր Տաճարին մէջ մատուցուեցաւ Ս. եւ Անմահ Պատարագ, նախագահութեամբ Ն.Ս.Օ.Տ.Տ. Արամ Ա. Կաթողիկոսին եւ ձեռամբ Դպրեվանքի Տեսուչ՝ Հոգշ. Տ. Պարոյր Վրդ. Շէրնէզեանին: Ս.

Պատարագի մատուցումէն ետք, Վեհարանի դահլիճին մէջ տեղի ունեցաւ տարեշրջանի փակման հանդիսութիւնը:

Իր յաւուր պատշաճի քարոզին մէջ, պատարագիչ Հայր Սուրբը դիտել տուաւ, որ Ս. Աստուածածնի տփոյ գտման տօնին առիթով Աւետարանը կը յիշեցնէ մեր Տիրոջ՝ Յիսուս Քրիստոսի պատմած առականերէն որոմի առակը, որ ո՛չ միայն Տիրոջ՝ Իր բոլոր զաւակներուն հանդէպ ունեցած սիրոյն եւ համբերութեան մասին կը խօսի, այլ նաեւ հրաւէր մըն է բոլորիս՝ ջանալու նմանիլ Անոր օրինակին՝ ընդգծելով, որ ի տարբերութիւն արտի որոմին, որ բնաւ սերմ չի կրնար դառնալ, Աստուած համբերութեամբ առիթ կուտայ իր «որոմ» զաւակներուն, որպէսզի հասկ դառնան: Հայր Սուրբը նշեց, որ Դպրեվանքը եւս, հետեւելով աւետարանական օրինակին, արտը կը մշակէ ու սերմը կը ցանէ՝ պատրաստելու համար ազգին ու եկեղեցւոյ ծառայատէր ղեկավարներ, որոնց պէտք ունինք այսօր աւելի քան երբեք: Քարոզի աւարտին, ան կոչ ուղղեց ընտանիքներուն՝ իրենց զաւակները վստահելու Դպրեվանքին:



Պատարագի աւարտին, «Ուրախ լեր» շարականի երգեցողութեամբ՝ Հայրապետական թափօրը ուղղուեցաւ Վեհարան, ուր գեղարուեստական կոկիկ յայտագրով Դպրեվանքի 2023-2024 կրթական-ուսումնական տարեշրջանի փակման հանդիսութիւնը տեղի ունեցաւ:

Պատարագի աւարտին, «Ուրախ լեր» շարականի երգեցողութեամբ՝ Հայրապետական թափօրը ուղղուեցաւ Վեհարան, ուր գեղարուեստական կոկիկ յայտագրով Դպրեվանքի 2023-2024 կրթական-ուսումնական տարեշրջանի փակման հանդիսութիւնը տեղի ունեցաւ:

Բացման խօսքով հանդէս եկաւ աւարտական դասարանի սարկաւազներէն՝ Բրշ. Երուանդ Սրկ. Եղիայեան, որ յարգանք ու երախտագիտութիւն յայտնեց Դպրեվանք-կրթօճախին տարած առաքելութեան: Ընդգծելով անոր յատկութիւնները՝ Երուանդ Սրկ. շնորհակալական խօսք արտասանեց անցեալի եւ ներկայի Տեսուչներուն, Տեսչական անդամներուն, Ուսուցիչներուն, Տիկնանց խորհուրդին եւ ծնողներուն՝ վեր առնելով իւրաքանչիւրին ներդրումը Դպրեվանքի գործունէութեան մէջ: Իր խօսքի աւարտին, որդիական խորին երախտագիտութիւն յայտնեց Վեհափառ Հայրապետին, որուն հայրական անսպառ հոգատարութիւնը, յորդորներն ու մշտական ներկայութիւնը դպրեվանքի կեանքին մէջ առաւել եւս կ'իմաստաւորեն Դպրեվանքի առաքելութիւնը:

Դպրեվանքի սաներէն՝ Գարլօ Մարտիրոսեան երգեց «Ծիրանի ծառ...»ը,

Յովիկ Խաչերեան ասմունքեց Եղիշէ Արք. Դուրեանի «Կը սիրե՞ս զիս...» քերթուածը, իսկ Դպրեվանքի «Արմաշ» երգչախումբը հրամցուց «Մի գեղեցիկ...» եւ «Մենք սաներն ենք...» երգերը:

Ապա տեսչական իր խօսքը ուղղեց Հոգշ. Տ. Պարոյր Վրդ. Շէրնէզեան (լրի խօսքը տես ստորեւ):

Հանդիսութեան աւարտին իր Հայրապետական պատգամը փոխանցեց Նորին Սրբութիւնը: Ան յայտնեց, որ օրուան պատգամը վկայութիւն մըն է Դպրեվանքի մասին, ուստի պատգամախօսը Դպրեվանքը ինքն է՝ իր գործով եւ առաքելութեամբ: Ան ըսաւ, որ այս առաքելութեան բարձրագոյն նուիրումով իրագործուելուն մղիչ ոյժը հաւատքն ու մարդակերտումի յանձնառութիւնն են եւ շարունակեց՝ կեդրոնանալով մարդակերտումին վրայ: Նկատի ունենալով, որ Նորին Ս. Օծութիւնը 2024-ը հռչակած է «Մարդուծի Պատրաստութեան տարի», ան ընդգծեց մարդուծի պատրաստութեան յոյժ եւ անմիջական կարեւորութիւնը՝ մարդ բառին բուն իմաստով: Արարելէ ետք երկրագունդը, Աստուած երկրագունդի ստեղծագործութեան որպէս շարունակող ոյժ ստեղծեց մարդը՝ զայն դարձնելով իր գործակիցն ու Քրիստոսի դեսպանը, որպէսզի Աստուծոյ հաւատարմութեամբ ու համարատուութեամբ շարունակէ ծաղկեցնել կեանքը. «Այսօր Մա՛րդ կը փնտռենք՝ Պուրճ Համուտէն մինչեւ Հալէպ, Աթէնքէն մինչեւ Ապու Տապի, Նիւ Եորք, Լոս Անճելոս, Փարիզ, Լոնտոն, Մոնթրէալ, Արժանթին, Թեհրան եւ մինչեւ Երեւան...Մա՛րդ կը փնտռենք... ո՛չ սովորական մարդ, այլ՝ գիտակից, նուիրեալ ու հաւատարիմ մեր հոգեւոր, բարոյական ու ազգային արժէքներուն: Մարդ՝ որ մեր կեանքին մէջ որոմ չէ՛, այլ հասկ է, որ կ'աճի եւ պտուղ կու տայ» ընդգծեց ան: Նորին Ս. Օծութիւնը իր խօսքը շարունակեց՝ խօսելով ազգային բոլոր բնագաւառներուն մէջ գլխազիր մարդու պահանջքին մասին՝ հրաւիրելով բոլորը ըլլալու իրատես, իրականութեան հետ ճիշդ կերպով առերեսուելու եւ պատրաստ համապատասխան մօտեցում ճշդելու:



Խօսքը ուղղելով Դպրեվանքի սաներուն՝ Վեհափառ Հայրապետը անգամ մը եւս յիշեցուց, որ զանոնք սովորական կրթական օճախի աշակերտները չեն եւ հրաւիրեց անոնց վերանորոգելու իրենց գիտակցութիւնը, թէ անոնք կը ծառայեն իրենցմէ վեհ ու վսեմ իտէալներու ու արժէքներու: Վերջապէս, ան գնահատեց Տեսուչ Հայր Սուրբը, Տեսչական եւ Ուսուցչաց կազմերը, բարե-

խօսքը ուղղելով Դպրեվանքի սաներուն՝ Վեհափառ Հայրապետը անգամ մը եւս յիշեցուց, որ զանոնք սովորական կրթական օճախի աշակերտները չեն եւ հրաւիրեց անոնց վերանորոգելու իրենց գիտակցութիւնը, թէ անոնք կը ծառայեն իրենցմէ վեհ ու վսեմ իտէալներու ու արժէքներու: Վերջապէս, ան գնահատեց Տեսուչ Հայր Սուրբը, Տեսչական եւ Ուսուցչաց կազմերը, բարե-



րարներն ու բարեկամները: Ան աղօթք բարձրացուց առ Աստուած եւ իր երախտագիտութիւնը յայտնեց, որ հակառակ բոլոր տեսակ դժուարութիւններուն, այս տարեշրջանին եւս կարողացանք յաջողութեամբ բոլորել Դպրեվանքի ուսումնական-կրթական տարեշրջանը:

Աւարտին, հնչեց Դպրեվանքի քայլերգ «Միրտ ի սիրտ...»ը, որմէ ետք Վեհափառ Հայրապետը «Պահպանիչ...» աղօթքով օրհնեց Դպրեվանքն ու ներկաները: Հանդիսութիւնը աւարտեցաւ «Կիլիկիա» օրհներգի եւ «Ի վեհ բարձանց...» Հայրապետական մաղթերգի միաբերան երգեցողութեամբ:

Այստեղ կը ներկայացնենք Դպրեվանքի Տեսուչ՝ Հոգշ. Տ. Պարոյր Վրդ. Շէրնէզեանի Դպրեվանքի 2023-24 ուսումնական-կրթական տարեշրջանի փակման հանդիսութեան ընթացքին ընթերցած Տեսչական խօսքը:-

Ն.Ս.Օ.Տ.Տ. Արամ Ա. Կաթողիկոս Մեծի Տանն Կիլիկիոյ,
Գերաշնորհ, Գերապատիւ, Հոգեշնորհ Միաբան հայրեր,
եւ Դպրեվանքի Բարեկամներ,

Փառք եւ գոհութիւն կը յայտնենք Աստուծոյ, որ իր շնորհքով եւ օրհնութեամբ, Մեծի Տանն Կիլիկիոյ Կաթողիկոսութեան Դպրեվանքի 94րդ ուսումնական-կրթական տարեշրջանը, որ ըստ աւանդութեան կը սկսի Թարգմանչաց սուրբ հայրերուն տօնին, ահաւասիկ այսօր կ'աւարտի, նոյն սուրբերուն նուիրուած տօնին շաբթուան ընթացքին, Դպրեվանքեան առաքելութեան նաւը հասցնելով 95րդ տարեշրջանի սեմին:

Դպրեվանքը դադար չունեցող առաքելութեան լուսատու կայան մըն է, որ իր գրկին մէջ կ'ընդունի եկեղեցւոյ ու ազգին հանդէպ սէր ունեցող պատանիներ ու երիտասարդներ, եւ զանոնք թրծելով՝ կը պատրաստէ ազգին ու եկեղեցւոյ նուիրուած սպասաւորներ: Առաքելութիւն մը, որուն կարիքը մեծապէս կը զգացուի այսօր, բոլոր ժամանակներէն աւելի, Սփիւռքի բոլոր գաղութներուն մէջ: Այդ սպասումով է, որ մեր ժողովուրդի զաւակները, ազգային եւ եկեղեցական կեանքի աշխուժացման կարիքը գոհացած տեսնելու փափաքով, իրենց աչքերը յառած են Պիքֆայայի բարձունքին՝ այս առաքելութիւնը մարմնաւորող օրրանին, Դպրեվանքին:

Ի դիմաց այդ սպասումներուն, Դպրեվանքը կը շարունակէ իր առաքելութիւնը, հաւատք եւ կոչում սերմանելով դպրեվանեցիներու մատղաշ հոգիներուն եւ մտքերուն մէջ: Երբ այսօրուան աշխարհը պատերազմ կը մղէ հոգեւոր, ազգային եւ բարոյական արժէքներուն դէմ, Դպրեվանքը լծուած է իւրաքանչիւր աշակերտի մէջ գիտակցական տաճար մը կերտելու գործին, որուն ընդմէջէն դպրեվանեցի կը սորվի մեր արժէքներն ու սրբութիւնները անբիծ պահել, եւ պատասխանատու նուիրումով՝ զանոնք տարածել մեր ազգի հաւաքական կեանքին մէջ:

Ժամանակակից աշխարհին բարդ պայմաններուն մէջ, կրթութիւնը դարձած է ամէնէն քարքարոտ ճանապարհը: Կրթութեան համար ընձեռուած կարելիութիւնները կը բազմանան ու հետզհետէ կը դիւրանան, սակայն միւս կողմէ ժխտական հոսանքները կը ծանրանան եւ կը բարդացնեն կրթական գործը: Հակառակ բոլոր տեսակի մարտահրաւէրներուն եւ նորօրեայ ապրելակերպի բացասական ազդեցութիւններուն, մեր կրթօրրանին հոգեմտաւոր արժէքները առաւել եւս կ'ամրապնդուին եւ մենք յաւելեալ յանձնառութեամբ կը լծուինք մեր նպատակներուն ու տեսլականներուն իրագործման, յանուն մեր ազգի ու եկեղեցւոյ ապագային:

Վեհափառ Տէր, միշտ կը շեշտէք, թէ Դպրեվանքը աշակերտին մէջ կը պատրաստէ հոգեմտաւոր մարդը. այս գիտակցութեամբ, մեր ուսանողները Դպրեվանքի ձուլարանին մէջ տարի մը եւս աճեցան ու կազմաւորուեցան հոգեւոր սնունդով ու ծառայական ոգիով եւ անոնց միտքը ուռճացաւ քրիստոնէական եւ հայեցի դաստիարակութեամբ: Տարի մը եւս, անոնք հարազատօրէն իւրացուցին այն աւանդը, որ մեր հայրերը վստահած են մեզի: Անոնց մէջ Կիլիկիոյ Կաթողիկոսութեան Հայրապետներուն եւ նուիրեալ Միաբանութեան ոգին վերաթարմացաւ՝ Դպրեվանքեան շունչի հաւատարմութեամբ: Տարեշրջան մը եւս, ծառայութեան եւ նուիրումի տեսիլքը գծագրուեցաւ դպրեվանեցիներու մտահորիզոնին վրայ, որպէսզի անոնք պատրաստուին, զինուին, եւ առաքելութեան լծուին՝ զայն արդիւնաւէտ ձեւով իրագործելու յոյսով:

Դպրեվանքը ներամփոփ, իր իսկ պատեանին մէջ կ'ծկուած ուսումնակրթական կեդրոն մը չէ, այլ՝ ակադեմիական աշխատանքի կողքին, Քրիստոսի

սէրը, Աւետարանի պատգամը, ազգին ոգին եւ մեր հարուստ մշակոյթը ժողովուրդին հասցնելու անսակարկ նուիրումի կրթօճախ է: Այս իմաստով, տեղին է նշել, որ անցնող տարեշրջանին, Դպրեվանքը իր մասնակցութիւնը բերաւ Լիբանանահայ գաղութի եւ նաեւ լիբանանեան տարբեր ձեռնարկներու, մըրցումներու, հանդիսութիւններու եւ համագումարներու: «Արմաշ» երգչախումբը Դպրեվանքի ձայնը լսելի դարձուց տարբեր բեմերու վրայ՝ Հայ երաժշտութեան կենդանի շունչը փոխանցելով ժողովուրդին: Արտադասարանային ձեռնարկներով, Դպրեվանքը աշխուժ ներկայութիւն դարձաւ մեր ժողովուրդի կեանքին մէջ:

Դպրեվանքը տաքուկ ծննդատուն է, ուր ամէն ուսանող, նոյնիսկ տեսչական անդամ, ուսուցիչ, թէ տիկնանց խորհուրդի անդամ, կը վերածնի Դպրեվանքի ոգեղէն մկրտարանին մէջ: Հոս ծնունդ կ'առնեն ազնիւ նկարագիրով, մաքուր հոգիով ու փայլուն մտքով այնպիսի անձեր, որոնք նոյնանալով ազգին ու եկեղեցիին տազնապներուն հետ, եւ ի պատասխան անոնց, իրենց կեանքը կը նուիրեն մեր հաւաքական կեանքին եւ անոր վերելքի ապահովման:

Աստուծոյ շնորհքով այս առաքելութիւնը վառ պահելու աշխատանքի յաջողութիւնը կը պարտինք Դպրեվանքի մեծ ընտանիքին բազմաթիւ անդամներուն, գլխաւորութեամբ Ս. Աթոռոյս Գահակալ՝ Ն.Ս.Օ.Տ.Տ. Արամ Ա. Վեհափառ Հայրապետին: Վեհափառ Տէ՛ր, Ձեր վկայութեամբ՝ Դպրեվանքը Մեծի Տանն Կիլիկիոյ Կաթողիկոսութեան սիրտն է, իսկ մեր վկայութեամբ՝ անիկա ձեր սրտին մէջ է միշտ: Երախտապարտ ենք Ձերդ Սրբութեան, որ այս տարի եւս, հովանաւորեցիք մեր առաքելութիւնը, առաջնորդեցիք մեզ ձեր խրատներով եւ Դպրեվանքը պահեցիք Ձեր անմիջական գուրգուրանքին տակ:

Շնորհակալ եմ ինծի գործակից հոգեւոր եղբայրներուս՝ տեսչական անդամներուն՝ Հայր Աւետիքին, Հայր Գէորգին, Հայր Ազատին եւ Նշան Սարկաւազին, որոնց նուիրումը Դպրեվանքի հանդէպ կարելի չէ բառերու նեղ պարունակի մը մէջ սահմանել: Անոնց անշահախնդիր ծառայութեան շնորհիւ այս տարի եւս, Դպրեվանքի տարեշրջանը իր բարեյաջող լրումին հասցուցինք: Կարելի չէ այստեղ չիշել ու շնորհակալ չըլլալ տեսչութեան կողքին, մեր աշխատանքին լծակից Հայր Շնորհքին, որուն գործակցութեան շնորհիւ Դպրեվանքեան կեանքն ու գործերը հեզասահ կ'ընթանան: Թող Աստուած վարձահատուց ընէ բոլորը իրենց նուիրումին համար:

Երախտագիտութեան խօսք ունիմ Դպրեվանքի ուսուցիչներուն, որոնց համադրուած եւ նուիրեալ աշխատանքին շնորհիւ, Դպրեվանքին դասարանէն ներս կը մշակուի Քրիստոնէական շունչով, ազգային ոգիով եւ գիտութեամբ, որպէսզի անոնց մէջ ծնունդ առնէ ապագայի ղեկավարն ու ծառայողը: Անոնցմէ իւրաքանչիւրը, Դպրեվանք բարձրանալն ու դասաւանդելը մեծ շնորհք եւ պատիւ կը նկատեմ: Ձեր վարձքը կատար ըլլայ:

Շնորհակալ ենք, Դպրեվանքի ուսանողներուն մասին մայրաքար մտածող եւ անոնց կարիքներուն ապահովման հսկող Տիկնանց խորհուրդին, որ Տեսչական կազմին հետ գործակցաբար, ճիգ չի խնայեր, որպէսզի Դպրեվանքէն ներս տունի հասկացողութիւնը ամբողջական դառնայ:

Վերջապէս, շնորհակալ ենք Դպրեվանքի բոլոր բարեկամներուն, նուիրատուներուն, բարերարներուն, բարեսիրական հաստատութիւններուն եւ կեդրոններուն, որոնց վստահութեան դրսեւորումին շնորհիւ, Դպրեվանքը հաստատ քայլերով կը շարունակէ իր առաքելութիւնը:

Վեհափառ Տէր, ահաւասիկ Մեծի Տանն Կիլիկիոյ Կաթիղիկոսութեան Դպրեվանքի 94-րդ ուսումնակրթական տարեշրջանի փակման հանդիսութիւնը հասած է իր աւարտին: Դպրեվանքեան երթը պիտի շարունակէ իր վերելքը, բազմացնելով Դպրեվանքի ուսանողական շարքերը, պատրաստելու եւ ազգին մատակարարելու համար ապագայի ծառայողները:

Առ այդ, այս խոստումին բոլորս հաւատարիմ եւ յանձնառու՝ Դպրեվանքի առաքելութեան,

Մատչիմ ի համբոյր Ձերդ Օծեալ Ս. Աշոյն՝

ՊԱՐՈՅՐ ՎՐԴ. ՇԷՐՆԷՉԵԱՆ
ՏԵՍՈՒՉ ԴՊՐԵՎԱՆՈՒՑ

23 Յունիս 2024,
Անթիլիաս, Լիբանան



ՔՐԻՍՏՈՆԷԱԿԱՆ ԴԱՍՏԻԱՐԱԿՈՒԹԻՒՆ

**ՎԵՅԱՓԱՌ ՀԱՅՐԱՊԵՏԸ Կ'ԵՉՐԱՓԱԿԷ
ՄԱՅՐԱՎԱՆՔԻ ՀՈԳԵՒՈՐ ԼՍԱՐԱՆԻ ԵՒ
ԱՍՏՈՒԱԾԱՇՈՒՆՉԻ ՍԵՐՏՈՂՈՒԹԻՒՆՆԵՐԸ**

Մեծի Տանն Կիլիկիոյ Կաթողիկոսութեան Քրիստոնէական Դաստիարակութեան Բաժանմունքը, իր բազմաճիւղ գործունէութեան ծիրէն ներս, միշտ յատուկ կարեւորութիւն տուած է հոգեւոր լսարաններու: Այս ուղղութեամբ, տնօրինութեամբ Ն.Ս.Օ.Տ.Տ. Արամ Ա. Կաթողիկոսին, Կիլիկեան Ուխտի Միաբան Հայրեր շաբաթական դրութեամբ Մայրավանքէն ներս կը կատարեն աստուածաշնչական սերտողութիւններ ու հոգեւոր դասախօսութիւններ:

Անցնող իննը ամիսներու ընթացքին, ամէն Երեքշաբթի առաւօտ, Կաթողիկոսարանի «Ս. Գրիգոր Լուսաւորիչ» Մայր Տաճարին մէջ տեղի ունեցան հոգեւոր դաստիարակութեան ու քրիստոնէական կազմաւորման հաւաքներ: Կատարուեցան սաղմոսի ընթերցումներ, արտասանուեցան աղօթքներ, տեղի ունեցան շարականի ուսուցումներ, ինչպէս նաեւ՝ հոգեւոր խորհրդածութիւններ:

Առ այդ, Երեքշաբթի, 18 Յունիս 2024-ի առաւօտեան ժամը 11:00-ին, Մայր Տաճարին մէջ, Կաթողիկոսարանի Քրիստոնէական Դաստիարակութեան Բաժանմունքին նախաձեռնած Հոգեւոր Լսարանի եւ Աստուածաշունչի սերտո-



ղուծիւնները իրենց աւարտին հասան: Վերոյիշեալ եզրափակիչ սերտողութեան հանդիպումին ներկայ գտնուեցաւ Նորին Սրբութիւնը եւ իր պատգամը ուղղեց մասնակիցներուն:

Աւանդութիւն դարձած յիշեալ հանդիպումը ընթացք առաւ «Տէրունական Աղօթք»ով, որմէ ետք լսարանի մասնակիցները երգեցին հոգեւոր երգեր:

Իր պատգամի սկզբնաւորութեան, Նորին Ս. Օծութիւնը մեծ ուրախութեամբ ողջունեց մասնակիցները, որոնք անցնող ամիսներու ընթացքին մնայուն կերպով ներկայ գտնուեցան բաժանմունքին կողմէ կազմակերպուած դասախօսական շարքերուն եւ հոգեւոր խորհրդածութիւններուն: Այս առումով ան անդրադարձաւ Աստուածաշունչի կարեւորութեան եւ շեշտեց անոր պատգամները մեր կեանքին մէջ ապրելու անհրաժեշտութիւնը: Արամ Ա. Կաթողիկոս նաեւ կարեւորեց մեր եկեղեցական ու ազգային աւանդութիւնները պահելու, պահպանելու եւ նոր սերունդին փոխանցելու յոյժ կարեւորութիւնը: «Մեր հաւաքական թէ անհատական կեանքին մէջ պէտք է ապրինք ու արժեւորենք մեր հոգեւոր ու բարոյական արժէքները. այդ արժէքներով պէտք է դաստիարակենք մեր զաւակները եւ սուրբնենք զանոնք ամբողջ պահելու անհրաժեշտութիւնը», ընդգծեց Նորին Սրբութիւնը:

Հանդիպումը իր աւարտին հասաւ Վեհափառ Հայրապետին կողմէ արտասանուած «Պահպանիչ» աղօթքով, աջահամբոյրով եւ յիշատակի խմբանկարով:

**ՏԱՐԵԿԱՆ ՈՒԽՏԱԳՆԱՑՈՒԹԻՒՆ-ՊՏՈՅՏԸ
ՄԵԾ ԽԱՆԴԱՎԱՌՈՒԹԻՒՆ ՍՏԵՂԾԵՑ**

Երեքշաբթի, 25 Յունիս 2024-ին, տարիներու սովորութեան համաձայն, հովանաւորութեամբ Ն.Ս.Օ.Տ.Տ. Արամ Ա. Կաթողիկոսին եւ նախաձեռնութեամբ Կաթողիկոսարանիս Քրիստոնէական Դաստիարակութեան Բաժանմունքին տեղի ունեցաւ Հոգեւոր Լսարանի տարեկան ուխտագնացութիւն-պտոյտը, դէպի Շուֆ գեղատեսիլ շրջանը, ներկայութեամբ 185 մասնակիցներու:

Անոնք այցելեցին Տէր Ալ-Ամար գիւղին մէջ գտնուող հրապարակն ու պատմական եկեղեցիներէն մէկը, ուր մասնակիցները աղօթք բարձրացուցին առ Աստուած աշխարհի խաղաղութեան ու մանաւանդ Հայրենիքի ու Լիբանանի բարօրութեան ի խնդիր: Ապա Քրիստոնէական Դաստիարակութեան Բաժանմունքի Յանձնախումբի անդամ՝ Տիկ. Մարիա Պերթիզլեան-Չոլաքեան ամփոփ կերպով ներկայացուց եկեղեցւոյ եւ ընդհանրապէս շրջանի պատմականը:

Ապա ուղղուեցան Պէյթրտտին նախագահական պատմական պալատը, ուր ծանօթացան պալատի պատմութեան, հիմնադրման օրերէն մինչեւ այսօր:



Օրուան ճաշը տեղի ունեցաւ Այն Պարուքի գեղատեսիլ ճաշարաններէն մէկուն մէջ: Մասնակիցները հաճելի ժամեր անցուցին եւ գեղեցիկ նուէրներով բախտաւորուեցան: Հոսկ, Բաժանմունքի Վարիչ՝ Գերպ. Տ. Ստեփանոս Մ. Վրդ. Փաշայեան շնորհակալութիւն յայտնեց իր կողքին գտնուող օգնականներուն, ինչպէս նաեւ ներկաներուն՝ ամբողջ տարուան արգասիքը այս տարեկան ուխտագնացութիւն-պտոյտին քաղելու յոյսով եւ բարի արձակուրդ մաղթեց բոլորին:

Վերջին կայքը Համմանա գիւղն էր, ուր անոնք այցելեցին Ս. Շարպէլի արձանին կողքին գտնուող եկեղեցին, այս անգամ փառք ու գոհութիւն յայտնելով Աստուծոյ՝ օրուան յաջողութեան համար:

Յայտնենք, որ օրուան ընթացքին ներկաներուն հիւրասիրուեցաւ նախաճաշ, անուշեղէն եւ պաղպաղակ:

Աւարտին, բոլորը միասնաբար յիշատակելի խմբանկարով մը ուխտագնացութիւն-պտոյտը իր լրումին հասցուցին:



ՀՈԳԵՒՈՐ ԼՍԱՐԱՆ՝ ԿԱԹՈՂԻԿՈՍԱՐԱՆԵՆ ԼԵՐՍ

Հովանաւորութեամբ Ն.Ս.Օ.Տ.Տ. Արամ Ա. Կաթողիկոսին, Մեծի Տանն Կիլիկիոյ Կաթողիկոսութեան Քրիստոնէական Դաստիարակութեան Բաժանմունքը աւելի քան 20 տարիներէ ի վեր, ամէն Երեքշաբթի, առաւօտեան ժամը 10:00-11:00, Կաթողիկոսարանի «Ս. Գրիգոր Լուսաւորիչ» Մայր Տաճարէն ներս կը կատարէ Հոգեւոր Լսարան, ուր Միաբան Հայրերու կողմէ սաղմոսասացութեամբ, շարականի ուսուցումներով, աղօթքներով ու մանաւանդ կրօնական խորհրդածութիւններով, մեր ժողովուրդի զաւակներուն կը ջամբուի հոգեւոր մատակարարում:

Առ այդ, Մայիս եւ Յունիս ամիսներու ընթացքին, կատարուած են հետեւեալ հոգեւոր խորհրդածութիւնները.-

ա) 14 Մայիս 2024-ին, Հոգշ. Տ. Օշին Վրդ. Զուալերթանեան խօսեցաւ «Քրիստոս Յիսուսի հաւատարիմ զինուոր մը» նիւթին մասին:

բ) 21 Մայիս 2024-ին, Արժ. Տ. Յակոբ Ա. Քհնյ. Պատրիկեան խօսեցաւ «Նուիրական մօր ծառայութիւնը» նիւթին մասին:

գ) 4 Յունիս 2024-ին, Գերպ. Տ. Շնորհք Մ. Վրդ. խօսեցաւ «Քրիստոսի պատգամը Լերան Քարոզին ընդմէջէն» նիւթին մասին:

դ) 11 Յունիս 2024-ին, Բրշ. Գրիգոր Սրկ. Արապաթլեան խօսեցաւ «Աստուծոյ ներգործութիւնը Հոռութի գիրքին ընդմէջէն» նիւթին մասին:



ՀՈԳԵՄՏԱԲՈՐ ԽՈՐՀՐԴԱԾՈՒԹԻՒՆՆԵՐ՝ «ՀԱՒԱՏՔ ԵՒ ԿԵԱՆՔ» ՅԱՅՏԱԳՐԻ ԸՆԴՄԵՉԵՆ

Հովանաւորութեամբ Ն.Ս.Օ.Տ.Տ. Արամ Ա. Կաթողիկոսին, Մեծի Տանն Կիլիկիոյ Կաթողիկոսութեան Քրիստոնէական Դաստիարակութեան Բաժանմունքը աւելի քան 3 տարիներէ ի վեր, համագործակցութեամբ Լիբանանի «Վանայ Զայն» ռատիոկայանին, ժողովուրդին կը մատուցէ հոգեւոր, բարոյախօսական եւ դաստիարակչական յայտագիր մը՝ «Հաւատք եւ Կեանք» խորագրով, որ տեղի կ'ունենայ ամէն Հինգշաբթի, երեկոյեան ժամը 7:00-8:00, ուղիղ սփռումով:

Առ այդ, Մայիս եւ Յունիս ամիսներու ընթացքին, Միաբան Հայրերու կողմէ կատարուեցան հետեւեալ խորհրդածութիւնները.-

ա) 2 Մայիս 2024-ին, Հոգշ. Տ. Լեւոն Վրդ. Եղիայեան խօսեցաւ «Վերջին ժամանակներու մարդոց նկարագիրը» նիւթին մասին:

բ) 16 Մայիս 2024-ին, Գերպ. Տ. Վարդան Մ. Վրդ. Թաշճեան խօսեցաւ «Պայմաններու եւ փորձութեանց բարոյականը» նիւթին մասին:

գ) 23 Մայիս 2024-ին, Արժ. Տ. Խորէն Քհնյ. Մելքոնեան խօսեցաւ «Ազատութիւն եւ կարգապահութիւն» նիւթին մասին:

դ) 6 Յունիս 2024-ին, Արժ. Տ. Խաչիկ Ա. Քհնյ. Միսիրեան խօսեցաւ «Աստուածամայրը եւ Աբրահամ» նիւթին մասին:

ե) 13 Յունիս 2024-ին, Հոգշ. Տ. Աւետիք Վրդ. Տէր Կարապետեան եւ Հոգշ. Տ. Ազատ Աբղ. Ֆիլիքեան խօսեցան «Դպրեվանքի Առաքելութիւնը» նիւթին մասին:

զ) 20 Յունիս 2024-ին, Հոգշ. Տ. Աշոտ Վրդ. Խաչատուրեան խօսեցաւ «Օրէնք, Հաւատք եւ Գործ» նիւթին մասին:



ՄԻԱԲԱՆ ՀԱՅՐԵՐ՝ ԺՈՂՈՎՈՒՐԴԻՆ ՍԷՉ

Լիբանանի Հայ Գաղութի կեանքէն ներս գործող հոգեւոր, ընկերային, մշակութային եւ բարեսիրական հաստատութիւններ, զանազան ծրագիրներ եւ ձեռնարկներ իրագործեցին եւ համագործակցութեամբ Մեծի Տանն Կիլիկիոյ Կաթողիկոսութեան Քրիստոնէական Դաստիարակութեան Բաժանմունքին, Միաբան հայրեր հիւրընկալեցին:

Միաբան Հայրերը յիշեալ ձեռնարկներու ընդմէջէն, եկեղեցւոյ առաքելութիւնը տարին ժողովուրդին, իրենց ներկայութեամբ եղան ժողովուրդին հետ եւ իբրեւ Հայ եկեղեցւոյ նուիրեալ սպասաւորներ՝ իրենց ծառայութիւնը մատուցին ժողովուրդին:

Այս առիթով, Մայիս եւ Յունիս ամիսներու ընթացքին, անոնք պատգամներով, քարոզախօսութեամբ ու դասախօսութիւններով իրենց մասնակցութիւնը բերին վերոյիշեալ ձեռնարկներուն.-

ա) Կիրակի, 5 Մայիս 2024-ի երեկոյեան ժամը 5:00-ին, կազմակերպութեամբ Հայ Եկեղեցասէր Հոգեւոր Միութեան («Նանէճեան» Աղօթարան), տեղւոյն Աղօթարանէն ներս տեղի ունեցաւ Հոգեւոր Լսարան: Օրուան խորհրդածութիւնը կատարեց՝ Գերպ. Տ. Վաղինակ Մ. Վրդ. Մելոյեան, նիւթ ունենալով՝ «Յիսուս Գեթսեմանիի մէջ» խորագիրը:

բ) Հինգշաբթի, 23 Մայիս 2024-ի առաւօտեան ժամը 10:00-ին, կազմակերպութեամբ Լ.Օ.Ն.Ի «Արաքսի Պուլղուրճեան» ընկերաբժշկական Կեդրոնին, տեղի ունեցաւ դասախօսական ձեռնարկ մը: Օրուան խորհրդածութիւնը կատարեց՝ Գերպ. Տ. Փառէն Ծ. Վրդ. Վարդանեան, նիւթ ունենալով՝ «Մոլութիւններ» խորագիրը:

գ) Կիրակի, 2 Յունիս 2024-ի երեկոյեան ժամը 5:00-ին, կազմակերպութեամբ Հայ Եկեղեցասէր Հոգեւոր Միութեան («Նանէճեան» Աղօթարան), տեղւոյն Աղօթարանէն ներս տեղի ունեցաւ Հոգեւոր Լսարան: Օրուան խորհրդածութիւնը կատարեց՝ Հոգ. Տ. Անդրանիկ Վրդ. Քիւրիւմեան, նիւթ ունենալով՝ «Քրիստոսով շրջանցել դժուարութիւնները» խորագիրը:



ԼՈՒՐԵՐ ԿԱԹՈՂԻԿՈՍԱՐԱՆԷՆ

ՎԵՅԱՓՈՒ ՀԱՅՐԱՊԵՏԸ ԸՆԴՈՒՆԵՑ ԵՐԵՔ ԿՈՒՍԱԿՑՈՒԹԵԱՆՑ ՆԵՐԿԱՅԱՑՈՒՑԻՉՆԵՐԸ

Երկուշաբթի, 6 Մայիս 2024-ին, Արամ Ա. Կաթողիկոս իր գրասենեակին մեջ ընդունեց Սոցիալ Դեմոկրատ Հնչակեան Կուսակցության Լիբանանի Վարիչ Մարմնի ատենապետ՝ Վանիկ Տազեանը, Հայ Յեղափոխական Դաշնակցության Կեդր. Կոմիտեի ներկայացուցիչ՝ Յակոբ Բագրատունին եւ Ռամկավար Ազատական Կուսակցության Լիբանանի Շրջանային Վարչության ատենապետ՝ Տոթթ. Աւետիս Տազեանը:

Ան ողջունեց միջ-կուսակցական գործակցությունը եւ կարեւորութեամբ շեշտեց զայն աւելի ծաւալելու հրամայականը: Ներկաները, իրենց կարգին, դարձեալ յանձնառու եղան գործակցական ոգիով շարունակելու իրենց հաւաքական քննարկումները, ընդհանրապէս Հայաստանն ու Հայ ժողովուրդը եւ մասնաւորաբար Լիբանանի հայութիւնը յուզող հարցերուն շուրջ:

ՆՈՐԻՆ ՍՐԲՈՒԹԻՒՆԸ ԸՆԴՈՒՆԵՑ ԱՐԾՈՒԿ ՄԻՆԱՍԵԱՆԸ

Հինգշաբթի, 9 Մայիս 2024-ին, Արամ Ա. Կաթողիկոսին այցելեց Հայաստանի Ազգ. Ժողովի Հ.Յ.Դ.ի Պատգամաւոր եւ «Հայաստան» Խմբակցության քարտուղար՝ Արծուիկ Մինասեան, ընկերակցութեամբ Հ.Յ.Դ. Լիբանանի Կեդր. Կոմիտեի եւ Հայկական Երեսփոխանական Պլոթի ներկայա-

ցուցիչ՝ Յակոբ Բագրատունիի եւ Կեդր. Կոմիտեի կազմակերպչական ներկայացուցիչ՝ Ալպէր Պալապանեանի:

Հանդիպման նպատակը եւ քննարկումներուն առանցքը Հայաստանէն ներս տեղի ունեցող վերջին զարգացումներն էին եւ յատկապէս Երեւանի մեջ կայացող ժողովրդային հաւաքը: Այս ծիրէն ներս տեղի ունեցաւ տեսակետներու փոխանակում եւ կարեւորութեամբ շեշտուեցաւ ժողովուրդին ձայնը լսելու ու անոր կամքին ընդառաջելու հրամայականը:

ՀՈԳԵՅԱՆԳՍԵԱՆ ՊԱՇՏՕՆ՝ ԱԶԳ. ԲԱՐԵՐԱՐ ԱՆԻ ՊԵՉԻՔԵԱՆԻ ՄԱՅՈՒՄԱՆ ԲԱՌԱՍՈՒՆՔԻՆ ԱՌԻԹՈՎ

Նախագահութեամբ Արամ Ա. Կաթողիկոսին, Կիրակի, 19 Մայիս 2024-ին, Անթիլիասի «Ս. Գրիգոր Լուսաւորիչ» Մայր Տաճարին մեջ, յաւարտ Ս. եւ Անմահ Պատարագին, հոգեհանգրստեան պաշտօն կատարուեցաւ Ազգ. Բարերար՝ հանգուցեալ Անի Պէգիբեանի մահուան քառասունքին առիթով: Արարողութեան ներկայ էին Իտալիայէն ու Ջուիցերիայէն ժամանած հանգուցեալին ամուսինը՝ Ալեքքոն եւ զաւակները՝ Արամն ու Զարեհը:

Եկեղեցական արարողութենէն ետք, Կաթողիկոսարանի սեղանատան մեջ, հանգուցեալի հոգւոյն յիշատակին տեղի ունեցաւ հոգեճաշ՝ ներկայութեամբ Նորին Ս. Օծութեան: Ընթերցուեցաւ Նորին Սրբութեան Օրհնու-

թեան խօսքը՝ Անի Պեգիբեանի մասին: Իր խօսքին մէջ, Վեհափառ Հայրապետը լուսարձակի տակ առած էր շուրջ 50 տարիներու Պեգիբեան ընտանիքին հետ իր բարեկամութիւնը: Ան նշած էր յատկապէս Ալեքքօ եւ Անի Պեգիբեաններուն արտագաղթը Լիբանանի պատերազմի օրերուն դէպի օտար ափեր, ուր անոնք կարողացած էին վառ պահել հայկական ընտանիքի շունչը եւ աւելի՛ն՝ իրենց քրտինքով վաստակած արդիւնքէն բաժին հանած էին նաեւ մեր ժողովուրդին ու եկեղեցւոյ: Նորին Ս. Օծուբիւնը յատկապէս շեշտած էր հանգուցեալին դերը՝ որպէս միջ ուժը Պեգիբեան ընտանիքի կողմէ կատարուած բարերարութիւններուն:

Հարկ է նշել նաեւ, որ Վեհափառ Հայրապետը իր Օրհնութեան խօսքին մէջ թուած էր Պեգիբեան ընտանիքին յատուկ հաւատարմութիւնն ու բարերարութիւնը Մեծի Տանն Կիլիկիոյ Կաթողիկոսութեան Ս. Աթոռին. այս ծիրին մէջ՝ Դպրեվանքի յատուկ հիմնադրամի հաստատումը, «Նահատակաց» մատրան վերանորոգումը, Մայրավանքին մէջ Հայաստանի Առաջին Անկախութեան յուշարձանի կառուցումը, Պիքֆայայի մէջ Յեղասպանութեան յուշարձանի վերանորոգումն ու շրջապատին ընդարձակումը եւ Ժպէլի մէջ Հայոց Յեղասպանութեան որբերու «Արամ Պեգիբեան» թանգարանի շինութիւնը:

Արդ, Նորին Սրբութիւնը կը հաստատէր, որ անվարան կրնանք Տիկ. Անին կոչել Աւետարանի բացատրութեամբ՝ նոր օրերու «Բարի Սամարացի»ն, որ օգնութեան հասաւ անխտիր Հայաստանի ու Լիբանանի իր ազգին տառապեալ զաւակներուն: Վստահ ենք, որ Անիին բարի յիշատակը միշտ պիտի մնայ վառ իր ամուսնոյն Ալեք-

քոյին, իր զաւակներուն՝ Արամին ու Ջարեհին եւ իր թոռնուհիին՝ Անիին կեանքին մէջ եւ անոնք գործնապէս պիտի արժեւորեն անոր բարի ու անմոռաց յիշատակը:

**ՆՈՐԻՆ Ս. ՕԾՈՒԹԻՒՆԸ ԸՆԴՈՒՆԵՑ
ՀՆՉԱԿԵԱՆ ԿՈՒՍԱԿՑՈՒԹԵԱՆ
ԼԻԲԱՆԱՆԻ ՎԱՐԻՉ ՄԱՐՄԻՆԸ**

Ուրբաթ, 24 Մայիս 2024-ին, Արամ Ա. Կաթողիկոսին այցելեցին Սոցեալ (Ս.Դ.Հ.Կ.) Լիբանանի Վարիչ Մարմնի ներկայացուցիչները:

Հանդիպման ընթացքին անդրադարձ կատարուեցաւ ընդհանրապէս Հայաստանէն ներս տիրող վերջին զարգացումներուն եւ մասնաւորաբար Լիբանանի այժմու կացութեան, ինչպէս նաեւ կարեւորութեամբ շեշտուեցաւ միջ-կուսակցական գործակցութիւնը ամրապնդելու հրամայականը՝ մեր զոյրութեան յուզող հարցերուն շուրջ:

**ԼԻԲԱՆԱՆԻ ՍՕՏ Ա.Ս. ՆԱԳԱՆՂԵՐՈՒ
ԴԵՍՊԱՆՈՒԳԻՆ ԱՆԹԻԼԻԱՍԻ ՄԷՋ**

Չորեքշաբթի, 29 Մայիս 2024-ին, Անթիլիասի Մայրավանքին մէջ հանդիպում կայացաւ Արամ Ա. Կաթողիկոսին եւ Լիբանանի մօտ Ամերիկայի Միացեալ Նահանգներու Դեսպանուհի՝ Լիզա Ճոնսընի միջեւ:

Հանդիպման ընթացքին արծարծուեցան յատկապէս Լիբանանի հետ կապուած շարք մը հարցեր, մասնաւորաբար Լիբանանի Հանրապետութեան Նախագահի ընտրութիւն, ընկերատնտեսական տագնապի յաղթահարում եւ ընդհանուր բարեկարգում: Այս հարցերուն գծով Նորին Սրբութիւնը յայտնեց իր պատկերացումը:

Նորանշանակ Դեսպանին առաջին այցելությունը ըլլալով Անթիլիաս՝ Նորին Ս. Օծությունը նաև անհրաժեշտ տեղեկություններ փոխանցեց Մեծի Տանն Կիլիկիոյ Կաթողիկոսութեան կառոյցին եւ թեմերուն մասին:

ԱՐԱՍ Ա. ԿԱԹՈՂԻԿՈՍ ԸՆԴՈՒՆԵՅ ԱՅՅԵԼՈՒԹԻՒՆԸ Ս.Դ.Յ. ԿՈՄԱԿՑՈՒԹԵԱՆ ԿԵՂԻ. ՎԱՐՉՈՒԹԵԱՆ ԱՏԵՆԱՊԵՏ՝ ՏՈՔԹ. ՀԱՄԲԻԿ ՍԱՐԱՖԵԱՆԻՆ

Ուրբաթ, 7 Յունիս 2024-ի առաւօտուն, Արամ Ա. Կաթողիկոսին այցելեց Մոցիալ Դեմոկրատ Հնչակեան Կուսակցութեան Կեդր. Վարչութեան ատենապետ՝ Տոքթ. Համբիկ Սարաֆեան, ընկերակցութեամբ նոյն կուսակցութեան Լիբանանի վարիչ մարմինի անդամներուն:

Հանդիպման ընթացքին քննարկուեցան Հայաստանէն ներս տեղի ունեցող վերջին զարգացումները, ինչպէս նաև Հայաստան-Մփիւռք յարաբերութիւնները: Եզտուեցաւ Հայաստանը դիմագրաւող ներկայ տագնապներուն դիմաց մեր ազգի ներքին միասնակամութիւնը ամրապնդելու հրամայականը:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ԴԵՍՊԱՆԸ ԱՅՅԵԼԵՅ ՎԵՅԱՓԱՌ ՀԱՅՐԱՊԵՏԻՆ

Շաբաթ, 8 Յունիս 2024-ին, Արամ Ա. Կաթողիկոս ընդունեց այցելությունը Լիբանանի մօտ Հայաստանի Հանրապետութեան Դեսպան՝ Վահագն Աթաբեկեանի:

Հանդիպման առանցքը Հայաստանի մէջ եւ տարածաշրջանէն ներս տեղի ունեցող վերջին զարգացումներն էին:

ՆՈՐԻՆ ՍՐԲՈՒԹԻՒՆԸ ԸՆԴՈՒՆԵՅ «ՔՐԻՍՏՈՆԵԱՅ ԱՆԿԱՆ ԲԱՂԱՔԱԳԵՏՆԵՐ» ԽՄԲԱԿՑՈՒԹԵԱՆ ԱՅՅԵԼՈՒԹԻՒՆԸ

Շաբաթ, 15 Յունիս 2024-ին, Վեհափառ Հայրապետին այցելեց «Քրիստոնեայ Անկախ Քաղաքագետներ» խմբակցությունը:

Այցելութեան նպատակն էր քննել Լիբանանը յուզող հիմնական հարցերը, ինչպէս նաև տեղեակ դառնալ Նորին Ս. Օծութեան Վատիկան կատարած այցելութեան ընթացքին տեղի ունեցած խորհրդակցություններուն:

ՆՈՐԻՆ Ս. ՕԾՈՒԹԻՒՆԸ ԸՆԴՈՒՆԵՅ ԻՐԱՆԻ ԴԵՍՊԱՆԸ

Երեքշաբթի, 18 Յունիս 2024-ին, Արամ Ա. Կաթողիկոսին այցելեց Լիբանանի մօտ Իրանի Բալամական Հանրապետութեան Դեսպան՝ Մուճթապի Ամանին, ընկերակցութեամբ դեսպանատան քաղաքական պատասխանատուներուն:

Հանդիպման ընթացքին առաւելաբար քննարկուեցաւ Լիբանանի Հանրապետութեան Նախագահի ընտրութեան հարցը եւ այս ծիրէն ներս տեղի ունեցաւ կարծիքներու փոխանակում:

Նորին Սրբությունը անդրադառնալով Արցախի հարցին՝ շեշտեց արցախահայութեան վերադարձի իրաւունքը, միջազգային հովանաւորութեան ներքեւ, եւ յիշեց Ազրպէյճանի մօտ գտնուող Հայ քաղաքական բանտարկեալներու շուտափոյթ ազատ արձակման հրամայականը եւ այս հարցին գծով խնդրեց Իրանի միջամտությունը, նկատի ունենալով Իրանի եւ Հայաստանի միջեւ գոյություն ունեցող պատմական յարաբերությունն ու բարի դրացնությունը:

**ԱՐԱՄ Ա. ԿԱԹՈՂԻԿՈՍ ԸՆԴՈՒՆԵՑ
Հ.Յ.Դ. ՀԱՅԱՍՏԱՆԻ
ԳԵՐԱԳՈՅՆ ՄԱՐՄՆԻ ՆԵՐԿԱՅԱՑՈՒՑԻՉԸ**

Երկուշաբթի, 24 Յունիս 2024-ին, Արամ Ա. Կաթողիկոսին այցելեց Հ.Յ.Դ. Հայաստանի գերագոյն մարմինի ներկայացուցիչ Իշխան Մաղաթէլեան, ընկերակցութեամբ Հ.Յ.Դ. Լիբանանի Կեդր. Կոմիտէի եւ Հայկական երեսփոխանական պլոքի ներկայացուցիչ Երեսփոխան Յակոբ Բագրատունիի ու Կեդր. Կոմիտէի կազմակերպչական ներկայացուցիչ՝ Ալպէո Պալապանեանի:

Հանդիպումը առիթ հանդիսացաւ անդրադառնալու Հայաստանի ներքին կացութեան եւ վերջին շրջանին տեղի ունեցող զարգացումներուն:

**«ADANA PROJECT»Ը ՍՏԱՅԱՒ ԱՐԱՄ Ա.
ԿԱԹՈՂԻԿՈՍԻՆ ՕՐՀՆՈՒԹԻՒՆԸ**

Չորեքշաբթի, 26 Յունիս 2024-ի առաւօտեան, Պիքֆայայի Ս. Աստուածածին Վանքի Վեհարանէն ներս, Արամ Ա. Կաթողիկոս ընդունեց Հայաստանէն ժամանած «Adana Project» խումբը: Վերոյիշեալ խումբը Լիբանան կը գտնուի լիբանանահայ արուեստասէր հանրութեան առջեւ համերգով հանդէս գալու համար:

Խումբի անդամները Վեհափառ Հայրապետին հակիրճ կերպով ներկայացուցին խումբի կազմութեան հոլովոյթը, նպատակը եւ ազգային ու մշակութային առաքելութիւնը:

Արամ Ա. Կաթողիկոս գնահատանքով արտայայտուեցաւ ի տես երիտասարդներու հայկական մշակոյթն ու երգարուեստը պահելու եւ նոր սերունդներուն նոր շունչով, ոգիով ու կերպերով փոխանցելու յանձնառութիւնը: Ան յիշեցուց, որ կ'ապրինք հա-

մաշխարհայնացած աշխարհի մը մէջ, ուր գոյութիւն չունին պաշտպանողական սահմաններ ու պատեր. ուստի, իբրեւ ազգ, կոչուած ենք մեր ներուժը լաւապէս օգտագործելու՝ ի խնդիր հայապահպանութեան ու մշակութապահպանութեան: Վերջապէս, իր խօսքի աւարտին, Նորին Սրբութիւնը քաջալերեց երիտասարդներուն այս նուիրական ու նորարար ստեղծագործական աշխատանքը եւ յաջողութիւն մաղթեց անոնց ազգանուէր գործունէութեան:

«ԽՍՏԱՊԱՅԱՆՁՈՒԹԻՒՆԸ, ՆԱԽԱՆՁԱԽԸՆԴՐՈՒԹԻՒՆ ՈՒ ՀԱՄԱՏԱՐՍՈՒԹԻՒՆԸ ՀԻՄՔԸ ԿԸ ԿԱԶՄԵՆ ՍԵՐ ՄԻԱԲԱՆՈՒԹԵԱՆ ՆԿԱՐԱԳՐԻՆ ՈՒ ԿԵԱՆՔԻՆ»

Ն.Ս.Օ.Տ.Տ. ԱՐԱՄ Ա. ԿԱԹՈՂԻԿՈՍ

Այսպէս բնորոշեց Արամ Ա. Կաթողիկոս Մեծի Տանն Կիլիկիոյ Կաթողիկոսութեան Միաբանութեան նկարագիրը, կեանքը ու կոչումը, Եպիսկոպոսաց Դասուն եւ ապա վանաբնակ Միաբանութեան հետ յաջորդաբար իր ունեցած հանդիպումներու ընթացքին:

«Մենք անհատ միաբաններ չենք, այլ Միաբանութիւն ենք՝ հաւաքական մէկ անձնաւորութիւն: Այս գիտակցութեամբ ու նախանձախնդրութեամբ կոչուած ենք մտածելու ու գործելու, ծառայելու ու կազմակերպելու մեր անհատական ու հաւաքական կեանքը, Մայրավանքէն թէ թեմերէն ներս», ընդգծեց Վեհափառ Հայրապետը: Շարունակելով իր խօսքը՝ Նորին Սրբութիւնը ըսաւ. «Կ'ապրինք աշխարհի մը մէջ, ուր շրջապատուած ենք տեսակ-տեսակ երեւոյթներով, զարգացումներով, մտեցումներով, մտածելակերպերով ու կենցաղակերպերով, որոնք երբեմն իրենց ազդեցութիւնը կ'ունենան Հայ

հոգեւորականի կեանքին, մտածողութեան ու գործին վրայ: Հարկ է ըլլալ զգօն եւ ամբօրէն կառչած մնալ մեր կոչումին ու անոր պարտադրանքին: Հոգեւորականը իրաւունք չունի սովորական մարդ դառնալու: Ան միջնորդ է Աստուծոյ ու մարդուն միջեւ եւ Քրիստոսի դեպքանն է, ինչպէս կ'ըսէ առաքեալը: Այս ինքնագիտակցութիւնը պէտք է մղիչ ոյժը դառնայ հոգեւորականի կեանքին ու ծառայութեան»:

Այս առիթով Նորին Ս. Օծութիւնը իր բարձր գնահատանքը յայտնեց, որ մեր Ս. Աթոռին միաբանները անմնացորդ նուիրումով կը ծառայեն Մայրա-

վանքէն ու թեմերէն ներս: *«Մեր Ս. Աթոռին համար եկեղեցւոյ ծառայել կը նշանակէ ազգին ու Հայրենիքին ծառայել: Այսօր, երբ մեր Հայրենիքը շրջապատուած է լուրջ տագնապներով եւ մեր ժողովուրդը ամէն տեղ կը դիմագրաւէ ահաւոր կարիքներ ու դժուարութիւններ, մենք կոչուած ենք վերանորոգ հաւատքով ու նուիրումով իրագործելու մեր ծառայական կոչումը»*, շեշտեց Վեհափառ Հայրապետը:

Ապա, Նորին Սրբութիւնը անդրադարձաւ վանական պաշտօններու, ինչպէս նաեւ ամբողջ ժամանակաշրջանին առնչուած շարք մը ծրագիրներու:



**ՊԱՏԱՐԱԳ ԵՒ ՔԱՐՈԶ
Ս. ԱԹՈՌՈՅՍ ՄԻԱԲԱՆՆԵՐՈՒՄ ԿՈՂՄԷ**

ԿԻՐԱԿԻ, 5 ՄԱՅԻՍ 2024: ԼԶ. ՕՐ ՅԻՆԱՆՑ:

Կաթողիկոսարանի Ս. Գրիգոր Լուսավորիչ Մայր Տաճարին մէջ պատարագեց եւ քարոզեց՝ Հոգշ. Տ. Աւետիք Վրդ. Տէր Կարապետեան:

ԿԻՐԱԿԻ, 12 ՄԱՅԻՍ 2024: ԽԳ. ՕՐ ՅԻՆԱՆՑ: ԵՐԿՐՈՐԴ ԾԱՂԿԱԶԱՐԴ:

Կաթողիկոսարանի Ս. Գրիգոր Լուսավորիչ Մայր Տաճարին մէջ պատարագեց՝ Հոգշ. Տ. Գէորգ Վրդ. Գարակէօզեան, իսկ Վարդապետական Գաւազանի Տուչութիւնը կատարեց եւ յաւուր պատշաճի քարոզեց՝ Գերշ. Տ. Նարեկ Արք. Ալեքմէզեան:

ԿԻՐԱԿԻ, 19 ՄԱՅԻՍ 2024: Ծ. ՕՐ ՅԻՆԱՆՑ: ՏՕՆ ԳԱԼՍՏԵԱՆ ՀՈԳԻՈՅՆ ՍՐԲՈՅ (ՊԵՆՏԵԿՈՍՏԷ):

Կաթողիկոսարանի Ս. Գրիգոր Լուսավորիչ Մայր Տաճարին մէջ պատարագեց եւ քարոզեց՝ Հոգշ. Տ. Անդրանիկ Վրդ. Քիրիւմեան:

ԿԻՐԱԿԻ, 26 ՄԱՅԻՍ 2024: Ը. ՕՐ ՀՈԳԵԳԱԼՍՏԵԱՆ: ՍԿԻԶԲՆ ՅԱՐՈՒԹԵԱՆ ԿԻՐԱԿԷՅՑ: ՅԻՇԱՏԱԿ ԵՂԻԱՅԻ ՄԱՐԳԱՐԷԻՆ:

Կաթողիկոսարանի Ս. Գրիգոր Լուսավորիչ Մայր Տաճարին մէջ պատարագեց եւ յաւուր պատշաճի քարոզեց՝ Գերշ. Տ. Թորգոմ Արք. Տօնոյեան:

ԿԻՐԱԿԻ, 2 ՅՈՒՆԻՍ 2024: Բ. ԶԿՆԻ ՀՈԳԵԳԱԼՍՏԵԱՆ: ՏՕՆ Է ԿԱԹՈՒՂԻԿԷ ԵԿԵՂԵՑԻՈՅ ՍՐԲՈՅ ԷՋՄԻԱԾՆԻ:

Կաթողիկոսարանի Ս. Գրիգոր Լուսավորիչ Մայր Տաճարին մէջ պատարագեց՝ Հոգշ. Տ. Սարգիս Վրդ. Աբրահամեան, իսկ Դպրաց եւ Կիսասարկաւագաց ձեռնադրութիւնը կատարեց եւ յաւուր պատշաճի քարոզեց՝ Գերշ. Տ. Շահան Արք. Սարգիսեան:

ԿԻՐԱԿԻ, 9 ՅՈՒՆԻՍ 2024: Գ. ԶԿՆԻ ՀՈԳԵԳԱԼՍՏԵԱՆ:

Կաթողիկոսարանի Ս. Գրիգոր Լուսավորիչ Մայր Տաճարին մէջ պատարագեց՝ Հոգշ. Տ. Օշին Վրդ. Զուալերթանեան, իսկ Սարկաւագական ձեռնադ-

բուժիչները կատարեց եւ յաւուր պատշաճի քարոզեց՝ Գերշ. Տ. Շահան Արք. Սարգիսեան:

ԿԻՐԱԿԻ, 16 ՅՈՒՆԻՍ 2024: Դ. ԶԿՆԻ ՀՈԳԵԳԱԼՍԵԱՆ:

Կաթողիկոսարանի Ս. Գրիգոր Լուսաւորիչ Մայր Տաճարին մէջ պատարագեց եւ քարոզեց՝ Հոգշ. Տ. Ազատ Աբղ. Ֆիլիքեան:

ԿԻՐԱԿԻ, 23 ՅՈՒՆԻՍ 2024: Ե. ԶԿՆԻ ՀՈԳԵԳԱԼՍԵԱՆ: ՏՕՆ ՍՈՒՐԲ ԱՍՏՈՒԱԾԱԾՆԻ ՏՓՈՅ ԳՏՄԱՆՆ:

Կաթողիկոսարանի Ս. Գրիգոր Լուսաւորիչ Մայր Տաճարին մէջ պատարագեց եւ քարոզեց՝ Հոգշ. Տ. Պարոյր Վրդ. Շէրնէզեան:

ԿԻՐԱԿԻ, 30 ՅՈՒՆԻՍ 2024: Զ. ԶԿՆԻ ՀՈԳԵԳԱԼՍԵԱՆ:

Կաթողիկոսարանի Ս. Գրիգոր Լուսաւորիչ Մայր Տաճարին մէջ պատարագեց եւ քարոզեց՝ Գերպ. Տ. Փառէն Ծ. Վրդ. Վարդանեան:

